Մասնագիտական խմբագիր՝ Նորա Սարգսյան, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հեղինակներ՝

Լուսինե Ալավերդյան, ի.գ.թ.
Նարինե Ալեքսանյան, ի.գ.թ. դոցենտ
Նարինե Ավագյան
Վարազդատ Տեր-Գևորգյան, ի.գ.թ.
Տիգրան Ղազարյան
Նորա Սարգսյան, ի.գ.թ.
Տարոն Սիմոնյան, ի.գ.թ.

Գիրքը լույս է տեսնում «Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն» ՍՊԸ-ի (GIZ GmbH) ֆինանսական աջակցությամբ: Այս հրատարակության մեջ առկա տեսակետները, եզրակացությունները և պարզաբանումները չպետք է ընկալվեն որպես «Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն» ՍՊԸ-ի (GIZ GmbH) կարծիք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5
ԳԼՈՒԽ 1. «ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
1.1 Դասավանդողների համար նախատեսված «Իրավունք բոլորի համար» ձեռնարկի նպատակը և կառուցվածքը 7
1.2 «Իրավունք բոլորի համար» ծրագրի դասավանդման մեթոդաբանությունը 7
1.2.1 Ինչպե՞ս կազմել դասընթացի պլան 7
1.2.2 Դասավանդման ինտերակտիվ տարաբնույթ մեթոդներ 11
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 35
2.1 Ինչ է իրավունքը. Իրավունքը և հասարակական բարոյականության նորմերը 35
2.2 Նորմատիվ իրավական ակտերի համակարգը 39
2.2.1 Սահմանադրություն 39
2.2.2 Օրենքներ, ինչպես են դրանք ստեղծվում 40
2.3 Դատարանները և վեճերի լուծման արտադատական եղանակները 41
2.4 Վեճերի լուծման արտադատական եղանակները 42
2.5 Փաստաբանությունը 43
2.5.1 Ով է փաստաբանը 44
ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47
3.1 Կյանքի իրավունք 47
3.2 Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելք 48
3.3 Անձնական ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք 49
3.4 Բնակարանի անձեռնմխելիության իրավունք 50
3.5 Անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունք 51
3.6 Տեղեկատվություն ստանալու իրավունք 53
3.6.1 Հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը 53
3.7 Կարծիքն ազատ արտահայտելու իրավունք 54
3.8 Կրթության իրավունք 56
ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԻԺ 60
4.1 Հանցագործության հասկացությունը 60
4.2 Հանցագործության տեսակները 60
4.3 Անհրաժեշտ պաշտպանություն և ծայրահեղ անհրաժեշտություն 61
4.4 Անմեղության կանխավարկած 62

4.5 Ձերբակալում 62
4.6 Կալանավորում 63
4.7 Գրավ 63
4.8 Խուզարկություն 64
4.9 Առգրավում 64
4.10 Քրեական գործերի քննությունը դատարանում 65
4.11 Անչափահասների մասնակցությամբ արդարադատության առանձնահատկությունները 65
ԳԼՈՒԽ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 67
5.1 Ընտանիք և ամուսնություն 67
5.1.1 Ո՞վ կարող է ամուսնանալ, ամուսնության իրականացման կարգը 68
5.2 Ամուսինների անձնական իրավունքները և պարտականությունները 69
5.3 Ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները 70
5.4 Ծնողների և զավակների միջև փոխհարաբերությունները 71
5.5 Ծնողների պատասխանատվությունը երեխաների կողմից պատճառված վնասի համար 73
5.6 Հոգ տանելու պարտականությունը 73
5.7 Երեխայից առանձին ապրող ծնողի և այլ ազգականների իրավունքները 74
5.8 Ծնողական իրավունքներից զրկելը 74
5.9 Որդեգրում (դստերագրում) 74
5.10 Ամուսնալուծություն և ալիմենտային պարտավորություններ 75
5.10.1 Երեխայի խնամքը և երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը 77
ԳԼՈՒԽ 6. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 78
6.1 Ժառանգությունն ըստ կտակի 78
6.2 Ժառանգությունն ըստ օրենքի 78
6.3 Ժառանգությունն ընդունելն ու դրանից հրաժարվելը 79
ԳԼՈՒԽ 7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ 80
7.1 Աշխատանքի դիմելու և ընդունվելու կարգը 80
7.2 Հարցազրույց 80
7.3 Աշխատանքային պայմանագիր 81
7.3.1 Աշխատանքային պայմանագրի կազմում 81
7.4 Աշխատողի սոցիալական երաշխիքները, աշխատաժամանակ, հանգստի իրավունք 81
7.5 Կարգապահական կանոններ 82
7.6 Տեղեկատվության գաղտնիությունը աշխատանքային հարաբերություններում 83

7.7 Աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը 83
7.8 Աշխատանքային վեճերը և դրանց լուծման կարգը 84
ԳԼՈՒԽ 8. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ 85
8.1 Սպառողների իրավունքների էությունը 85
8.2 Պայմանագրի հասկացությունը և կնքման կարգը 85
8.3 Առուվաճառքի պայմանագիր 85
8.4 Վարկային հարաբերություններում սպառողների շահերի պաշտպանությունը 86
8.5 Անբարեխիղճ գովազդ 87
ԳԼՈՒԽ 9. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 88
9.1 Ժողովրդի իշխանության իրականացման ձևերը 88
9.2 Ընտրությունների տեսակները և պարբերականությունը 88
9.3 Հանրաքվե 89
9.4 Ընտրելու իրավունք 91
9.4.1 Ընտրական ցուցակները 92
9.4.2 Քվեարկությունը 95
9.5 Ընտրվելու իրավունք 96

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ դասավանդողներ և աշակերտներ,

«Իրավունք բոլորի համար» ծրագրի նպատակն է մարդկանց իրավական դաստիարակության միջոցով նպաստել Հայաստանում ժողովրդավարական և օրենքի գերակայությամբ առաջնորդվող հասարակության ձևավորմանը:

Իրավունքը ազդում է մարդկանց առօրյա գործունեության գրեթե բոլոր ասպեկտների վրա, որի պատճառով իրավունքի իմացությունը խիստ կարևոր է ժամանակակից հասարակության լիարժեք անդամ հանդես գալու համար:

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը նախատեսված է այն մարդկանց համար, որոնք չեն տիրապետում մասնագիտական իրավական գիտելիքների և ուղղված են նրանց հանրամատչելի ձևով՝ օրինակների և պատմությունների հիման վրա իրավունք սովորեցնելուն: Ծրագրի առանցքային շահառուները դպրոցահասակ երեխաներն են: Սակայն ծրագիրը կարող է իրականացվել նաև ավագ սերնդի ներկայացուցիչների հետ՝ այնպիսի լսարաններում, որտեղ կարիք կա մարդկանց իրավական իրազեկման:

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը իրագործվում է երկու ձեռնարկների միջոցով՝

1. «Իրավունք բոլորի համար». ձեռնարկ աշակերտների համար
2. «Իրավունք բոլորի համար». ձեռնարկ դասավանդողների համար:

Վերոհիշյալ երկու ձեռնարկներում քննարկվում են յուրաքանչյուր քաղաքացու առօրյա գործունեության համար պիտանի և նրան հաճախ հանդիպող հետևյալ իրավական թեմաները.

1. Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի հիմունքները
2. Դատարանները և վեճերի լուծման արտադատական եղանակները
3. Մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները
4. Քրեական իրավունքը
5. Ընտանեկան իրավունքը
6. Ժառանգական իրավունքը
7. Աշխատանքային իրավունքը
8. Սպառողների իրավունքը
9. Ընտրական իրավունքը
10. Վարչական իրավունքը:

Ձեռնարկներում զետեղված յուրաքանչյուր թեմա պարունակում է իրավունքի համապատասխան ոլորտում հիմնարար իրավական կարգավորումների ներկայացում, ապա՝ խնդիրներ, հարցեր, դերախաղերի և դատախաղերի առաջադրանքներ, որոնք նպաստում է նյութի յուրացմանը և մտապահելուն:

«Իրավունք բոլորի համար» ծրագիրը հատկապես երիտասարդ սերնդի շրջանում նպաստում է՝

- իրավական գիտելիքների և իրավական իրազեկվածության բարձրացմանը,

- իրենց իրավունքների վերաբերյալ քաջատեղյակ սերնդի ձևավորմանը, որն ի վիճակի կլինի աջակցել Հայաստանում ժողովրդավարական հասարակության զարգացմանը,
- հիմնարար իրավունքների և ազատությունների վերաբերյալ գիտելիքի խորացմանը:

Լիահույս ենք, որ այս ձեռնարկները Ձեզ կպարգևեն դասավանդման և ուսուցանելու հաճելի պահեր՝ Ձեզ հաղորդելով առօրյա կյանքում կիրառական և պիտանի իրավական գիտելիքներ:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի հայաստանյան գրասենյակ

ԳԼՈՒԽ 1. «ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Դասավանդողների համար նախատեսված «Իրավունք բոլորի համար» ձեռնարկի նպատակը և կառուցվածքը

Դասավանդողների համար նախատեսված «Իրավունք բոլորի համար» ձեռնարկի նպատակն է օժանդակել «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում իրավունք դասավանդելու գործընթացի կազմակերպմանը: Այս ծրագրով իրավունք դասավանդելու համար անձը պարտադիր չէ ունենա իրավաբանական կրթություն, սակայն կարևոր է իրավունքի վերաբերյալ որոշակի գիտելիքների տիրապետելը:

Ի լրումն աշակերտների համար «Իրավունք բոլորի համար» ձեռնարկի, որը նախատեսված է աշակերտների համար, այս ձեռնարկը նախատեսված է դասավանդողների համար: Այն հուշում է աշակերտների համար նախատեսված ձեռնարկում տեղ գտած թեմաներով դասընթաց կազմակերպելու մեթոդաբանությունը, պարունակում է հարցերի, խնդիրների պատասխաններ, ինչպես նաև ուղղորդում է ձեռնարկով նախատեսված դասարանային միջոցառումներ կազմակերպելուն: Դասավանդողների համար նախատեսված ձեռնարկի թեմատիկ բովանդակությունը համընկնում է աշակերտների համար նախատեսված ձեռնարկին:

1.2 «Իրավունք բոլորի համար» ծրագրի դասավանդման մեթոդաբանությունը

1.2.1 Ինչպե՞ս կազմել դասընթացի պլան

1.2.1.1 Դասընթացի արդյունքներ. գիտելիք, հմտություններ և արժեքներ

Դասընթացի արդյունքներ ասելով՝ հասկանում ենք այն ամենը, ինչ սովորել են աշակերտները դասի ավարտին: Դասընթացի պլան կազմելիս դասավանդողները պետք է նկատի ունենան, որ կատարյալ դասը պետք է ներառի գիտելիք, հմտություններ և արժեքներ:

Գիտելիքի հետ կապված արդյունքներն այն ամենն է, ինչ աշակերտները կկարողանան բացատրել դասի ավարտին: (օրինակ՝ «Դասի ավարտին աշակերտները կկարողանան բացատրել ....»):

Հմտությունների հետ կապված արդյունքները վերաբերում են այն ամենին, ինչը կկարողանան կատարել աշակերտները դասի ավարտին (օրինակ՝ «Դասի ավարտին աշակերտները կկարողանան ....»):

Արժեքների հետ կապված արդյունքները վերաբերում են այն ամենին, ինչը աշակերտները կգնահատեն դասի ավարտին (օրինակ՝ «Դասի ավարտին աշակերտները կկարողանան գնահատել հետևյալի կարևորությունը ....”):

Գիտելիքի, հմտությունների և արժեքների հետ կապված դասընթացի արդյունքները պետք է բացատրվեն ուսանողներին յուրաքանչյուր դասի սկզբում, որպեսզի նրանք իմանան, թե ի՞նչ սպասելիքներ ունենան համապատասխան դասից:

Դասընթացի պլանի մեջ դասընթացի արդյունքների ներառումը երաշխավորում է, որ դասավանդողն ունենա դասի արդյունքում իր առջև դրված նպատակներին հասնելու որոշակի ուղեցույց: Դասի ընթացքում կատարվող յուրաքանչյուր գործողություն պետք է ուղղակիորեն կապված լինի դասի որոշակի արդյունքների հետ:

1.2.1.2 Ինչպե՞ս անցկացնել արդյունավետ դաս

«Իրավունք բոլորի համար» դասընթացի ժամանակ դասավանդողները չպետք է օգտագործեն դասավանդման ավանդական դասախոսական մոտեցումը, քանի որ այն ուսանողներին գիտելիք փոխանցելու ամենաանարդյունավետ մեթոդն է:

Արդյունավետ դասը պարզապես դասախոսություն չէ: Արդյունավետ դասը դուրս է գալիս դասախոսական մեթոդի օգտագործման սահմաններից, ինչը հնարավորություն է տալիս սովորողների մոտ խթանել ճանաչողական ուսուցումը: Արդյունավետ դաս անցկացնելու համար անհրաժեշտ է դրանում ներառել հետևյալ տարրերը.

1. Խնդրի առարկա թեմայի էությունը (օրինակ՝ ժողովրդավարության կամ մարդու իրավունքների հռչակագրի համապատասխան ասպեկտները, համապատասխան իրավունքը կամ պրակտիկան),
2. Թեմայի հետ կապված քաղաքականությունը (օրինակ՝ «Ինչու՞ է ընդունվել իրավունքների մասին հռչակագիրը, ինչպե՞ս է այն կիրառվում պրակտիկայում» և այլն),
3. Բախվող արժեքներ. դասն ավելի ակտիվ և մոտիվացնող կլինի, եթե աշակերտներին ցույց տրվեն տարբեր մրցակցող արժեքները (օրինակ՝ բազմակուսակցական քաղաքական միջավայրի անհրաժեշտությունը հակադրել ոչ ժողովրդավարական քաղաքական կուսակցությունների հետ, որոնց հնարավորություն կտրվի առաջադրվելու ընտրություններում),
4. Ինտերակտիվ դասավանդման ռազմավարություն (տես ներքևում),
5. Հնարավորության դեպքում գործնական խորհուրդներ. դասավանդողները պետք է իմանան իրենց՝ ժողովրդավարական իրավունքների խախտման դեպքում ձեռնարկվելիք պրակտիկ գործողությունները:

1.2.1.3 Դասի պլանի կառուցվածքը

Ի տարբերություն դասախոսությունների, որոնց դեպքում ժամանակի կառավարումը համեմատաբար ավելի հեշտ է՝ դասավանդման ինտերակտիվ մեթոդները պահանջում են ժամանակի շատ հստակ կառավարում:

Դասավանդման ինտերակտիվ մեթոդներ ներառող դասի պլանը պետք է ունենա հետևյալ օրինակելի կառուցվածքը.

Քայլ 1: Սահմանեք դասի թեման:

Քայլ 2: Սահմանեք դասի արդյունքները: Սահմանեք, թե սովորողներն ի՞նչ պետք է կարողանան անել՝ կապված գիտելիքի, հմտության ու արժեքների հետ:

Քայլ 3: Սահմանեք դասի բովանդակությունը՝ դրանում քննարկվող թեմաներից ձեռք բերվելիք գիտելիքի, հմտությունների և արժեքների համատեքստում (օրինակ՝ ձեռք բերվելիք գիտելիքի, հմտությունների և արժեքների համատեքստում յուրաքանչյուրի մասով համապատասխանաբար ի՞նչ է դասավանդվելու):

Քայլ 4: Սահմանեք յուրաքանչյուր արդյունքի հետ կապված օգտագործման ենթակա ինտերակտիվ մեթոդները և դրանց ժամանակային սահմանափակումները, օրինակ՝

- Մտքի գրոհ (5 րոպե),
- Բաժանել սովորողներին փոքր խմբերի և բաշխել հարցերը (5 րոպե),
- Քննարկում՝ փոքր խմբերում (10 րոպե),
- Զեկուցում՝ փոքր խմբերի քննարկումների արդյունքում (20 րոպե),
- Ընդհանուր քննարկում և ստուգող հարցեր (10 րոպե):

Ընդհանուր՝ 50 րոպե:

Քայլ 5: Սահմանեք դասը վարելու համար Ձեզ անհրաժեշտ ռեսուրսները (օրինակ՝ բաժանման ենթակա տպագիր նյութեր, գրատախտակ, պրոյեկտոր և այլն).

Քայլ 6: Կազմեք հարցերի ցանկ՝ դասը եզրափակելիս դասի նպատակների իրականացումը ստուգելու համար:

1.2.1.4 Ընդհանուր դասի պլանի օրինակ

Ստորև ներկայացնում ենք ուսումնական, ինչպես նաև ընդհանուր դասի պլանի օրինակ:

Բանավեճ. Արդյո՞ք երկրում առկա մասնավոր սեփականություն հանդիսացող հանքավայրերը պետք է ազգայնացվեն:

Վերոնշյալ թեման քննարկելու համար սովորողները պետք է բաժանվեն ընդդիմախոս խմբերի:

Դասի պլան: Բանավեճ. Արդյո՞ք երկրում առկա մասնավոր սեփականություն հանդիսացող հանքավայրերը պետք է ազգայնացվեն:

1. **Թեմա.** Հանքավայրերի ազգայնացումը

2. <u>Արդյունքներ</u>. Այս դասի վերջում դուք պետք է կարողանաք.
2.1Ներկայացնել հանքավայրերի ազգայնացմանը դեմ և կողմ փաստարկները.
2.3 Գնահատել ժողովրդավար երկրում առկա կարծիքները հանքային հարստության ու մասնավոր սեփականության համատեքստում:

3. <u>Ընթացակարգ</u>.
3.1 Հարցնել սովորողներին, թե ի՞նչ է նշանակում «ազգայնացումը» և ի՞նչ է այն իր մեջ ներառում (5 րոպե),
3.2 Բաշխել բանավեճի թեման մասնակիցների երկու մեծ խմբի միջև, և որոշել՝ դեմ և կողմ փաստարկ ունեցող խմբերը: (1 րոպե),
3.3 Մեծ խմբերը բաժանել առավելագույնը հինգ անձից բաղկացած փոքր խմբերի (1 րոպե),
3.4 Հնարավորություն տալ փոքր խմբերին նախապատրաստել իրենց փաստարկները, և ընտրել երկու բանախոս իրենց փաստարկները ներկայացնելու համար (մեկը՝ որպես հիմնական բանախոս, ով պետք է ներկայացնի խմբի փաստարկները, իսկ մյուսը՝ որպես պատասխանող բանախոս, ով պետք է առարկի մյուս խմբի փաստարկներին) (15 րոպե),
3.5 Կողմ փաստարկները նախապատրաստած փոքր խմբերից մեկի հիմնական բանախոսին հնարավորություն տալ ներկայացնել իրենց փաստարկները սահմանված ժամկետում (5 րոպե),
3.6 Դեմ փաստարկները նախապատրաստած մյուս խմբի հիմնական բանախոսին հնարավորություն տալ , ներկայացնելու իրենց փաստարկները սահմանված ժամկետում (5 րոպե),
3.7 Հնարավորություն տալ պատասխանող բանախոսներին հակիրճ պատասխանել իրենց ընդդիմախոսներին՝ սահմանված ժամանակի ընթացքում՝ յուրաքանչյուրը մեկ րոպե (ընդհանուր 2 րոպե),
3.8 Կրկնել 3.5-3.7 պարագրաֆների քայլերը, և հնարավորություն տալ մյուս երկու խմբերին ներկայացնելու հանքավայրերի ազգայնացմանը դեմ և կողմ փաստարկները (12 րոպե),
3.8 Խնդրել մասնակիցներին քվեարկել, թե ո՞ր կողմն է ներկայացրել լավագույն փաստարկները և ո՞ր թիմն է հաղթել բանավեճում (2 րոպե),
3.9 Եզրափակել և տալ ստուգող հարցեր (2 րոպե):

Ընդհանուր. 50 րոպե:

4. <u>Ռեսուրսներ</u>**:** Իրավունքների մասին հռչակագրի՝ մասնավոր սեփականության իրավունքի հետ կապված հատվածի վերաբերյալ նյութեր:

5. <u>Ստուգող հարցեր</u>**.** հարց և պատասխան հանքերի ազգայնացման վերաբերյալ, օրինակ.

- Ի՞նչ է ազգայնացումը:
- Ինչու՞ է ժողովրդավարական երկրներում իրավունքների մասին բիլը սահմանում հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք:
- Որո՞նք են հանքավայրերի ազգայնացմանը կողմ փաստարկները:
- Որո՞նք են հանքավայրերի ազգայնացմանը դեմ փաստարկները:

1.2.2 Դասավանդման ինտերակտիվ տարաբնույթ մեթոդներ

Ինչպես արդեն նշել ենք վերոգրյալում, «Իրավունք բոլորի համար» ծրագրով դասավանդմանը բնորոշ է դասի վարման ինտերակտիվ մեթոդը: Իրավունքը ինտերակտիվ կերպով դասավանդելու համար գոյություն ունեն մշակված բազմաթիվ մեթոդներ: Ստորև կներկայացվեն գործնականում առավել հաճախ կիրառվող և արդյունավետ մի շարք մեթոդներ: Յուրաքանչյուր մեթոդի մասին խոսելիս կներկայացվի դրա էությունը, նպատակը, առավելությունները, կիրառման ընթացակարգը: Յուրաքանչյուր դասի համար, կախված դասի թեմայից, նպատակներից, տրամադրման ենթակա գիտելիքից, հմտություններից և արժեքներից, դասավանդողը կարող է ընտրել դասավանդման ներկայացվող ինտերակտիվ մեթոդներից մեկը կամ մի քանիսը:

Ստորև ներկայացվում են դասավանդման հետևյալ ինտերակտիվ մեթոդները.

- մտքի գրոհ,
- դասակարգման վարժություններ,
- քննարկում փոքր խմբերում,
- եռյակներ,
- ուսումնական օրինակներ,
- դերախաղեր,
- հարց ու պատասխան,
- սիմուլյացիա,
- բանավեճեր,
- խաղեր,
- հիփոթետիկ խնդիրներ,
- դատախաղեր,
- փորձնական դատավարություններ,
- խթանող բաց հարցեր,
- ձնագունդ,
- կարծիքների հարցում,
- դասընթացի մասնակիցների կողմից թեմայի ներկայացում,
- պատմության ներկայացում,
- դիրքորոշման ներկայացում,
- արագ փաստարկում՝ PRES-ի բանաձև,
- խնդրի լուծում՝ FIRAC-ի բանաձև,
- արժեքների հստակեցում,
- «յուրաքանչյուր ոք սովորեցնում է ինչ-որ մեկին» մեթոդի կիրառում,
- տեսողական օժանդակ միջոցներ,
- հրավիրված մասնագետներ,
- մասնագիտական այցեր,
- «երազանքի երկիր»:

1.2.2.1 Մտքի գրոհ

Մտքի գրոհը մասնակիցների գաղափարների ազատ արտահայտումը խթանելու միջոց է: Այն ուսուցման կարևոր եղանակ է, քանի որ խրախուսում է մասնակիցներին նոր գաղափարներ արտահայտել՝ առանց քննադատության ենթարկվելու վախի:

Մտքի գրոհի ընթացքում դասավանդողն առաջարկում է մասնակիցներին հնարավորինս շատ մտքեր արտահայտել՝ այդ մտքերի վերաբերյալ գրառումներ կատարելով գրատախտակի վրա: Դասավանդողը պետք է գրառի նաև այն մտքերը, որոնք սխալ կթվան: Եթե պատասխանները ցույց տան, որ հարցը պարզ չի եղել, ապա այն պետք է վերաձևակերպվի: Դասը վարողները պետք է հետաձգեն հնչած առաջարկությունների քննադատությունները մինչև բոլոր մտքերի գրառումն ավարտելը: Այնուհետև, առաջարկությունները կարող են ենթարկվել քննադատության և, անհրաժեշտության դեպքում, դրանք կարող են դասակարգվել՝ ըստ առաջնահերթության (տես ստորև):

Մտքի գրոհի վարժության դեպքում դասը վարողը պետք է կատարի հետևյալ քայլերը.

Քայլ 1: Առաջարկել մասնակիցներին ներկայացնել հնարավորինս շատ տարբեր գաղափարներ և լուծումներ:
Քայլ 2: Գրառումներ կատարել բոլոր պատասխանների վերաբերյալ գրատախտակին՝ առանց գնահատելու դրանց ճիշտ կամ սխալ լինելը, վատ կամ լավ լինելը:
Քայլ 3: Անհրաժեշտության դեպքում հստակեցնել պատասխանները՝ առանց դրանց վերաբերյալ կարծիք հայտնելու:
Քայլ 4: Մտքի գրոհի արդյունքում կազմված ցանկում առանձնացնել յուրաքանչյուր մասնակցի արտահայտած միտքը:
Քայլ 5: Ցույց տալ մտքի գրոհի արդյունքում կազմված գաղափարների կամ լուծումների ցանկի կապը դասի նպատակի հետ և, անհրաժեշտության դեպքում, անցում կատարել դասի հաջորդ մասին, օրինակ՝ մտքի գրոհի արդյունքում կազմված ցանկի տարրերի դասակարգմանը (տես ստորև):

Օրինակ՝ թվարկել ժողովրդավարության հատկանիշները:

- Դասը վարողը հարցնում է ուսանողներին, թե որո՞նք են ժողովրդավարության հատկանիշները,
- դասը վարողը գրում է բոլոր պատասխանները գրատախտակին,
- այնուհետև, դասը վարողը բացատրում է յուրաքանչյուր պատասխանն ու քննարկում ծավալում դրա շուրջ:

1.2.2.2 Դասակարգման վարժություններ

Դասակարգման վարժությունների շրջանակում մասնակիցները կատարում են ընտրություն՝ մի քանի մրցող այլընտրանքային տարբերակներից: Դասը վարողը կարող է օգտագործել մտքի գրոհի արդյունքում մասնակիցների մտքերի հիման վրա կազմված

ցանկը կամ մասնակիցներին տրամադրել դասակարգման ենթակա այլ ցանկ, որը ներառում է, օրինակ՝ դասակարգման ենթակա 5 կամ 10 տարր: Այնուհետև, մասնակիցները պետք է դասակարգեն այդ տարրերը 1-5 կամ 1-10 բալային սանդղակով՝ ամենակարևոր տարրը գնահատելով 1, իսկ սակավ կարևորություն ունեցող տարրը՝ 5 կամ 10 բալ: Ի լրումն՝ մասնակիցներից կարող է պահանջվել՝

- պատճառաբանել իրենց դասակարգումը,
- լսել անհամաձայնություն հայտնող անձանց և
- վերագնահատել իրենց դասակարգումն այլ մասնակիցների կարծիքները լսելուց հետո:

Դասակարգման վարժությունն իրականացնելիս՝ դասը վարողը պետք է կատարի հետևյալ քայլերը.

Քայլ 1: Մասնակիցներին տրամադրել դասակարգման ենթակա այլընտրանքային տարբերակների ցանկ կամ օգտագործել մտքի գրոհի արդյունքում կազմված ցանկը (տես վերևում):
Քայլ 2: Բաժանել մասնակիցներին փոքր խմբերի և հանձնարարել նրանց դասակարգել տրամադրված ցանկում կամ մտքի գրոհի արդյունքում կազմված ցանկում ներառված տարբերակները:
Քայլ 3: Խնդրել յուրաքանչյուր խմբին նշել իրենց կողմից առաջնային համարված տարբերակը:
Քայլ 4: Առաջին խմբի կողմից առաջինը համարվող տարբերակը ներկայացվելուց հետո նշում կատարել այդ մասին՝ ստուգելու համար, թե քանի՞ խմբի կողմից է այդ տարբերակը դասակարգվել որպես թիվ 1 տարբերակ կամ որպես այլ առաջնահերթություն ունեցող տարբերակ: Գրատախտակին տվյալ տարբերակի առջև գրել համապատասխան թիվը:
Քայլ 5: Դասը վարողն, այնուհետև, խնդրում է երկրորդ խմբին հայտնել իրենց կողմից առաջնահերթ համարված տարբերակը, եթե այն չի համընկնում առաջին խմբի տարբերակի հետ, այնուհետև կրկնվում են նույն գործողությունները՝ կապված այլ խմբերի կողմից տվյալ տարբերակին առաջնահերթություն տալու կամ այլ կերպ այն դասակարգելու հետ:
Քայլ 6: Դասը վարողն, այնուհետև, խնդրում է երրորդ խմբին հայտնել իրենց կողմից առաջնահերթ համարված տարբերակը, եթե այն չի համընկնում այլ խմբերի տարբերակների հետ, այնուհետև կրկնվում են նույն գործողությունները՝ կապված այլ խմբերի կողմից տվյալ տարբերակին առաջնահերթություն տալու կամ այլ կերպ այն դասակարգելու հետ:
Քայլ 7: Գործընթացը կրկնել յուրաքանչյուր խմբի համար՝ մինչև նշված կլինեն բոլոր տարբերակներն իրենց դասակարգումներով և յուրաքանչյուր տարբերակն առաջնահերթ համարած խմբերի համարները:
Քայլ 8: Վերջում կարող է կազմվել բազմակողմանի դասակարգման ցանկ, որտեղ նվազող համարակալմամբ կնշվեն ողջ խմբի կողմից կարևոր համարված տարբերակները:

Դասակարգման վարժության շրջանակում մասնակիցներին կարող է հանձնարարվել նաև որոշակի հայեցակարգի կամ պնդման վերաբերյալ հայտնել իրենց կարծիքները: Օրինակ՝ մասնակիցներին կարող է հանձնարարվել նշել, թե արդյո՞ք որոշակի վարքագիծ ժողովրդավարական է՝ գնահատելով այն «լիովին համաձայն եմ» և «լիովին համաձայն չեմ» միջակայքում: Այնուհետև մասնակիցները պետք է

հնարավորություն ունենան պատճառաբանել իրենց դասակարգումը, լսել իրենց տեսակետների հետ անհամաձայնություն հայտնած մասնակիցներին և վերանայել իրենց կարծիքը՝ հիմնվելով տեղի ունեցած քննարկումների վրա: Նրանք կարող են կատարել դա սանդղակում իրենց կատարած նշման տեղափոխման միջոցով:

Օրինակ: Ժողովրդավարության հատկանիշների դասակարգում

Օգտագործեք վերոնշյալ ութ քայլերը մասնակիցների կողմից ժողովրդավարության հատկանիշների դասակարգման համար՝ փոքր խմբերում քննարկումներ կազմակերպելու միջոցով:

1.2.2.3 Քննարկումներ՝ փոքր խմբերում

Փոքր խմբերում քննարկումները պետք է մանրակրկիտ կերպով նախապատրաստվեն՝ դրանց անցկացման կարգի և հատկացված ժամանակի մասին հստակ ուղեցույցների հիման վրա: Խմբերը, սովորաբար, պետք է բաղկացած լինեն մինչև հինգ անձից, որպեսզի ապահովված լինի մասնակիցներից յուրաքանչյուրի խոսելու հնարավորությունը: Խմբերը պետք է համարակալվեն դասը վարողի կողմից (օրինակ 1-ից 5) կամ պետք է կազմվեն՝ ընդգրկելով շարքում նստած հինգ անձ և ձևավորվեն որպես թիմ՝ խմբային քննարկումների համար:

Խմբերին անհրաժեշտ է ցուցումներ տալ իրենց առջև դրված խնդրի վերաբերյալ՝ ներառյալ թեմայի քննարկման, բանավեճին կամ դերախաղին պատրաստվելու համար հատկացված ժամանակի և խմբի գործունեության վերաբերյալ (օրինակ՝ անհրաժեշտ է ընտրել քննարկումը վարող և զեկուցող, ով պետք է քննարկումների արդյունքների մասին զեկուցի բոլոր մասնակիցներին):

Խմբերին անհրաժեշտ է զգուշացնել, որպեսզի նրանք քննարկումներն այնպես կազմակերպեն, որ ուժեղ մասնակիցները չգերակայեն, և յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունենա արտահայտվել: Այս նպատակին հասնելու պարզ միջոց է սահմանափակ քանակությամբ խոսելու հնարքի կիրառումը, որը նշանակում է խմբի մասնակիցներից յուրաքանչյուրին հինգ անգամ խոսելու հնարավորության ընձեռում՝ խմբում քննարկումները վարողի կողմից: Յուրաքանչյուր անգամ խոսելիս՝ մասնակիցը նվազեցնում է իրեն տրամադրված հնարավորություններից մեկը: Հինգ անգամ խոսելու հնարավորություն ստացած անձն այլևս չի կարող խոսել:

Օրինակ: Ժողովրդավարության հատկանիշների քննարկումը

Տես նախորդ պարագրաֆում բերված օրինակն այն մասին, թե ինչպես կարող են օգտագործվել փոքր խմբերում քննարկումները՝ ժողովրդավարության հատկանիշները դասակարգելու համար:

1.2.2.4 Եռյակներ

Եռյակները (աշխատանք երեք անձից բաղկացած խմբերում) կարող են օգտագործվել որոշակի վարժություն կատարելիս՝ բոլորին ներգրավելու նպատակով: Դրանք շատ օգտակար են փոքր դատախաղերի, արբիտրաժային դատավարությունների և մեդիացիայի կազմակերպման համար:

Եռյակների մեթոդն օգտագործելիս կարող են կիրառվել հետևյալ քայլերը, օրինակ՝ քաղաքական կուսակցությունների միջև բանավեճի շուրջ մեդիացիայի համար:

Քայլ 1: Բացատրել միջնորդության քայլերը մասնակիցներին:
Քայլ 2: Ներկայացնել միջնորդության վերաբերյալ գործի փաստերը կողմերին:
Քայլ 3: Համարակալել եռյակի մասնակիցներին՝ մեկ, երկու և երեք թվերով:
Քայլ 4: Յուրաքանչյուր համարի համար կատարել դերաբաշխում: Օրինակ՝ թիվ մեկ մասնակիցը Ա քաղաքական կուսակցությունն է, թիվ երկուսը՝ միջնորդը և թիվ երեքը՝ Բ քաղաքական կուսակցությունը:
Քայլ 5: Առաջին համարի մասնակիցներին (Ա քաղաքական կուսակցություն) նստեցնել միասին, իսկ երրորդ համարի մասնակիցներին (Բ քաղաքական կուսակցություն) միասին՝ իրենց դերերին ծանոթանալու համար:
Քայլ 6: Երկրորդ համարի մասնակիցներին (միջնորդներին) առանձին սենյակում ցուցումներ տալ միջնորդության գործընթացի վերաբերյալ, որպեսզի նրանք իմանան, թե ի՞նչ գործողություններ են կատարելու:
Քայլ 7: Մասնակիցներին խնդրել զբաղեցնել իրենց նախնական տեղերը՝ ձևավորելով եռյակներ:
Քայլ 8: Երկրորդ համարի մասնակիցներին առաջարկել ներկայանալ և իրականացնել միջնորդությունը:
Քայլ 9: Ստանալ միջնորդների կարծիքներն իրենց կողմից իրականացված միջնորդության վերաբերյալ:
Քայլ 10: Իրականացնել ընդհանուր քննարկում և ամփոփել դասը:

1.2.2.5 Ուսումնական օրինակներ

Ուսումնական օրինակներն օգտագործելիս, սովորաբար, մասնակիցները բաժանվում են իրավաբանների երեք մեծ խմբի, որոնք ներկայացնում են հայցվորի և պատասխանողի (կամ դատախազի և մեղադրյալի) շահերը և դատավորներին: Այնուհետև, մեծ խմբերը բաժանվում են ավելի փոքրերի՝ քննարկելու համար կիրառելի փաստարկներն ու լուծումները: Յուրաքանչյուր խմբի մասնակից կարող է ընտրվել՝ որպես խմբի անունից փաստարկներ կամ դատական որոշում ներկայացնող: Ներկայացման տարբերակները կարող են լինել տարբեր. մեկ կամ մի քանի խումբ կարող է փաստարկներ ներկայացնել մի կողմի համար, մեկ կամ մի քանի խումբ՝ մյուս կողմի համար, և երրորդ խումբը կամ մի քանի խումբը կարող են ներկայացնել դատական որոշումը փաստարկների վերաբերյալ: Մեկ այլ տարբերակ է եռյակների օգտագործումը և մասնակիցների ընդգրկումը փոքր դատախաղերում (տես վերևում):

Ուսումնական օրինակներ քննարկելիս՝ կարելի է օգտագործել հետևյալ ընթացակարգը, որն ընդգրկում է ութ քայլ:

Քայլ 1: Ընտրել ուսումնական օրինակ:
Քայլ 2: Մասնակիցներին հնարավորություն տալ ծանոթանալ փաստերի հետ (ընդհանուր քննարկման միջոցով հավաստիացեք, որ նրանք հասկացել են դրանք):
Քայլ 3: Մասնակիցներին հնարավորություն տալ մատնանշել առկա իրավական հիմնախնդիրները (ընդհանուր քննարկման արդյունքում մատնանշել պատասխան պահանջող իրավական հարցերը):
Քայլ 4: Բաշխել ուսումնական օրինակը մասնակիցների միջև (փոքր խմբերում):
Քայլ 5: Հնարավորություն տալ մասնակիցներին քննարկել համապատասխան իրավունքը և պատրաստել փաստարկներ կամ դատական որոշումներ (փոքր խմբերում):
Քայլ 6: Հնարավորություն տալ մասնակիցներին ներկայացնելու իրենց փաստարկները (դատախազի կամ հայցվորի և մեղադրյալի կամ պատասխանողի շահերը ներկայացնող փաստարկները պետք է ներկայացվեն սահմանված ժամանակահատվածում՝ բոլոր մասնակիցների առջև կամ փոքր խմբերում):
Քայլ 7: Ներկայացված փաստարկների հիման վրա հնարավորություն տալ մասնակիցներին կայացնել որոշում (օրինակ՝ դատավորի դերը ստանձնած մասնակիցները կամ բոլոր մասնակիցներն այն պետք է կատարեն ընդհանուր ներկայացման արդյունքում կամ փոքր խմբերում):
Քայլ 8: Իրականացնել ընդհանուր քննարկում և ամփոփել (բոլոր մասնակիցների մասնակցությամբ):

Ուսումնական օրինակները կարող են հիմնված լինել իրական դեպքերի կամ ժողովրդավարության տարբեր պարունակող այնպիսի դեպքերի վրա, ինչպիսիք են՝ քրեական հետապնդումները սպառնալիքի կամ քաղաքական պաստառների ոչնչացման համար կամ քաղաքացիական գործերը, որոնք ներառում են ընտրությունների հետ կապված մարտահրավերներ կամ միջամտություն քաղաքական հավաքներին: Վերջում, երբ մասնակիցները կայացրած կլինեն իրենց որոշումները, դասը վարողը կարող է հայտնել նրանց, թե ինչ է տեղի ունեցել իրականում: Ուսումնական օրինակներն օգնում են զարգացնել տրամաբանական և քննադատական մտածելակերպը, ինչպես նաև որոշում կայացնելու ունակությունը:

Օրինակ՝ արդյո՞ք պետության գլուխը վեր է օրենքից:

Թեժ քննարկումների առարկա են դարձել անցկացված ընտրությունների արդյունքները, որում հաղթել է երկրի նախագահի կուսակցությունը: Ընդդիմադիր կուսակցությունները պնդում են, որ ընտրությունները կեղծվել են, և Նախագահը բռնության ու սպառնալիքի միջոցով ստիպել է մարդկանց կողմ քվեարկել: Ի հայտ են եկել մի շարք ապացույցներ այն մասին, որ Նախագահը հրամայել է բռնություն կիրառել որոշ տեղական ընդդիմադիր առաջնորդների նկատմամբ, ովքեր ենթադրաբար բռնություն են կիրառել իր կուսակցության անդամների նկատմամբ գյուղական համայնքներում: Բռնության արդյունքում սպանվել են երկու կողմից հանդես եկող կուսակցականներ: Առկա են ուղղակի ապացույցներ Նախագահի կողմից բռնության հրահրման վերաբերյալ, որի արդյունքում սպանվել է երկու ընդդիմադիր առաջնորդ: Գլխավոր դատախազը մեղադրանք է ներկայացրել Նախագահին նրանց սպանության համար, և Նախագահը պետք է կանգնի դատարանի առջև: Նախագահը չի ցանկանում պատասխանատվության

ենթարկվել և հրաժարվում է կանգնել դատարանի առջև՝ պատճառաբանելով, որ, որպես պետության գլուխ, նրան չի կարող քրեական մեղադրանք առաջադրվել:

1. Ներկայացրեք փաստարկներ՝ որպես մեղադրանքը պաշտպանող իրավաբաններ:
2. Ներկայացրեք փաստարկներ՝ որպես Նախագահի շահերը պաշտպանող իրավաբաններ:
3. Որպես դատավորներ՝ լսեք փաստարկները և կայացրեք որոշում:

1.2.2.6 Դերախաղեր

Դերախաղերի ժամանակ մասնակիցներն իրենց փորձի հիման վրա ներկայացնում են որոշակի իրավիճակ (օրինակ՝ քաղաքական գործիչ, ով ներկայացնում է իր նախընտրական ծրագիրը): Մասնակիցներն օգտագործում են իրենց երևակայությունը՝ դերախաղն իրականացնելու համար: Դերախաղերը կարող են օգտագործվել իրավական իրավիճակը ներկայացնելու համար:

Դասը վարողը, դերախաղը կիրառելիս, պետք է օգտագործի հետևյալ յոթ քայլերը.

Քայլ 1: Բացատրել դերախաղը մասնակիցներին (ներկայացնել իրավիճակը),
Քայլ 2: Տեղեկատվություն տրամադրել այն մասնակիցներին, ովքեր կամավոր կամ ընտրության միջոցով մասնակցելու են դերախաղին,
Քայլ 3: Տեղեկատվություն տրամադրել մյուս մասնակիցներին, ովքեր հանդես են գալու որպես դիտորդ (տալ նրանց ցուցումներ, թե ինչին պետք է ուշադրություն դարձնել),
Քայլ 4: Հնարավորություն տալ մասնակիցներին իրականացնելու դերախաղը (սա կարող է իրականացվել մեկ խմբում՝ բոլոր մասնակիցների առջև կամ դերախաղն իրականացնողներից և դիտորդներից կազմված փոքր խմբերում),
Քայլ 5: Հանձնարարել դիտորդ մասնակիցներին ներկայացնել դերախաղի ժամանակ տեղի ունեցածը,
Քայլ 6: Հանձնարարել բոլոր մասնակիցներին քննարկել դերախաղի իրավական, սոցիալական կամ այլ ենթատեքստերը և որոշում կայացնել դերախաղում առկա կոնֆլիկտի լուծման վերաբերյալ (սա կարող է իրականացվել փոքր խմբերի մեթոդի օգտագործմամբ),
Քայլ 7: Իրականացնել ընդհանուր քննարկում և ամփոփում:

Վեցերորդ քայլի մեկ այլ եղանակ է մասնակիցների կողմից դերախաղի արդյունքում կատարված եզրակացության ներկայացումը՝ դերախաղի միջոցով:

Թեև իրավունք դասավանդողն է որոշում սցենարը, սակայն նա պետք է ընդունի մասնակիցների գործողությունները: Դերախաղերը հաճախ բացահայտում են մասնակիցների փորձի վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրինակ: Ցույց տալ ժողովրդավարության և այլ ռեժիմների միջև առկա տարբերությունները

Դասախոսը խնդրում է ուսանողներից մեկին խաղալ ընտրություններում առաջադրված ժողովրդավարական թեկնածուի դերը և ներկայացնել նրա

նախընտրական ծրագիրը: Դասախոսը խնդրում է մեկ այլ ուսանողի խաղալ ընտրություններում առաջադրված ոչ ժողովրդավարական թեկնածուի դերը և ներկայացնել նրա նախընտրական ծրագիրը, իսկ երրորդ ուսանողին նշանակում է համակարգող: Դասախոսը մյուս ուսանողների միջև բաշխում է լրատվամիջոցների և ունկնդիրների դերերը: Մեկ ուսանող պետք է գրառումներ կատարի գրատախտակին:

Երկու թեկնածուների խոսքից, ունկնդիրների և լրատվամիջոցների մեկնաբանություններից հետո դասախոսը սկսում է ցույց տալ ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական թեկնածուների և նրանց խոսքերի միջև առկա տարբերությունը, մեկնաբանում ունկնդիրների ու լրատվամիջոցների արձագանքը:

Դասախոսը հանձնարարում է ուսանողներին ներկայացնել ինքնաբուխ խոսք՝ կենտրոնանալով ժողովրդավարության տարբեր ասպեկտների վրա, որոնց մի մասն ընտրված է դասախոսի կողմից, իսկ մյուս մասը թողնված է բանախոսների հայեցողությանը: Վարժության նպատակն է խթանել ժողովրդավարության պաշտպանությունը՝ որպես ակտիվիստ:

1.2.2.7 Հարց ու պատասխան

Հարց ու պատասխանի մեթոդը կարող է օգտագործվել դասախոսության փոխարեն: Այս մեթոդի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է կազմել հարցերի ու պատասխանների ցանկ՝ ապահովելու համար թեմայի բազմակողմանի քննարկումը դասի ընթացքում: Հարցերը պետք է պատշաճ կերպով նախապես կազմվեն՝ երաշխավորելով դասի համար ողջ անհրաժեշտ տեղեկատվության ստացումը մասնակիցների կողմից:

Հարց ու պատասխանի մեթոդը կիրառելիս՝ դասը վարողը հարցը տալուց հետո պետք է մի քանի վայրկյան սպասի՝ (օրինակ՝ նվազագույնը 5 վայրկյան) հնարավորություն տալով մասնակիցներին մտածել պատասխանելուց առաջ:

Դասը վարողները պետք է ուշադիր լինեն, որպեսզի թույլ չտան առավել բարձր առաջադիմությամբ մասնակիցներին գերակայել հարց ու պատասխանի ընթացքում:

Օրինակ: Հարցեր ուսանողներին՝ փորձնական պառլամենտական քննարկումներին նախապատրաստելու համար

Դասավանդողները պետք է նախապատրաստեն ուսանողներին փորձնական պառլամենտական քննարկումներին՝ առաջադրելով մի շարք նախնական հարցեր Պառլամենտի վերաբերյալ, ինչպես նաև դերախաղին նախապատրաստվելուն օժանդակող հարցեր: Այդպիսիք են՝

- Ովքե՞ր են աշխատում Պառլամենտում:
- Ինչպե՞ս դուք կարող եք դառնալ Պառլամենտի անդամ:
- Քանի՞ անդամ ունի Պառլամենտը:
- Ի՞նչ աշխատանք են կատարում Պառլամենտի անդամները:
- Քանի՞ տարեկանում դուք կարող եք դառնալ Պառլամենտի անդամ:

- Որտե՞ղ դուք կաշխատեիք:
- Ի՞նչ խնդիրներ դուք կիրականացնեիք:
- Ինչպիսի՞ հմտություններ Ձեզ անհրաժեշտ կլինեին: Ի՞նչ պետք է դուք անեք Պառլամենտի անդամ դառնալուց առաջ:

1.2.2.8 Սիմուլյացիա

Սիմուլյացիաները պահանջում են մասնակիցներից իրականացնել դերախաղ՝ հետևելով որոշակի սցենարի: Ի տարբերություն դերախաղի՝ դրանք ունեն վերջաբանի և մանրակրկիտ շարադրված սցենար, որն ապահովում է վարժության բոլոր նպատակների իրականացումը:

Սիմուլյացիաները, սովորաբար, պահանջում են առավել շատ նախապատրաստվածություն, քան դերախաղերը, որովհետև մասնակիցներին ժամանակ է անհրաժեշտ՝ ըստ սցենարի նախապատրաստվելու համար: Դասը վարողը մասնակիցներին պետք է տեղեկացնի համապատասխան անձանց և իրավիճակների մասին, որոնց հետ կապված նրանք պատրաստվում են սիմուլյացիա իրականացնել և նրանց նախապատրաստվելու համար ժամանակ տրամադրի: Սիմուլյացիան կարող է կիրառվել ուսումնական օրինակների, դատախաղերի և դատավարությունների անցկացման համար:

Սիմուլյացիայի իրականացման ընթացակարգը նման է դերախաղերի համար սահմանված ընթացակարգին, և դասը վարողները պետք է հետևեն վերոհիշյալ պարագրաֆում ներկայացված քայլերին:

1.2.2.9 Բանավեճեր

Բանավեճերը պետք է ներառեն համապատասխան վիճահարույց հարցեր: Օրինակ՝ արդյո՞ք դատապարտյալները պետք է ունենան ընտրելու իրավունք, արդյո՞ք իրենց երկրից արտագաղթած քաղաքացիները պետք է ունենան քվեարկելու իրավունք, արդյո՞ք 16 տարեկանը չլրացած անձը պետք է իրավունք ունենա քվեարկել և այլն: Վիճահարույց հարցը նշանակում է, որ պետք է առկա լինի տվյալ հարցապնդմանը կողմ կամ դեմ մասնակիցների որոշակի քանակ:

Մասնակիցները կարող են բաժանվել երկու մեծ խմբի, իսկ այնուհետև՝ փոքր ենթախմբերի՝ բանավեճի համար փաստարկներ նախապատրաստելու համար: Խմբերն ընտրում են իրենց անունից հանդես գալու իրավունք ունեցող անձանց: Բանավեճն անցկացնելուց հետո մասնակիցները քվեարկում են հարցապնդմանը դեմ կամ կողմ:
Դասը վարողը բանավեճն իրականացնելու համար կարող է օգտագործել հետևյալ քայլերը.

Քայլ 1: Ներկայացնել բանավեճի առարկան մասնակիցների երկու խմբերին և ընտրել, թե ո՞ր խումբն է հանդես գալու դեմ և ո՞րը՝ կողմ փաստարկներով:
Քայլ 2: Բաժանել մեծ խմբերը առավելագույնը հինգ հոգուց բաղկացած փոքր խմբերի:

Քայլ 3: Հնարավորություն տալ փոքր խմբերին նախապատրաստել իրենց փաստարկները և ընտրել երկու անձ (մեկը՝ որպես հիմնական բանախոս, ով պետք է ներկայացնի խմբի փաստարկները, իսկ մյուսը՝ որպես հակառակորդ խմբի փաստարկներին պատասխանող բանախոս) այդ փաստարկները ներկայացնելու համար:
Քայլ 4: Թույլ տալ հիմնական բանախոսներին ներկայացնել իրենց խմբերի հարցապնդմանը կողմ փաստարկները՝ սահմանված ժամանակի ընթացքում (օրինակ՝ 5 րոպե):
Քայլ 5: Թույլ տալ հիմնական բանախոսներին ներկայացնել իրենց խմբերի հարցապնդմանը դեմ փաստարկները՝ սահմանված ժամանակի ընթացքում (օրինակ՝ 5 րոպե):
Քայլ 6: Թույլ տալ դեմ և կողմ հանդես եկող պատասխանող բանախոսներին հակիրճ պատասխանել իրենց ընդդիմախոսներին՝ սահմանված ժամանակի ընթացքում (օրինակ՝ 1 րոպե յուրաքանչյուր կողմի համար):
Քայլ 7: Առաջարկել բոլոր մասնակիցներին քվեարկել, թե ո՞ր կողմն է ներկայացրել լավագույն փաստարկները և ո՞վ է արժանի հաղթանակի:

Բանավեճի անցկացման տարբերակ է փոքր բանավեճը: Այստեղ բոլոր մասնակիցները բաժանվում են երեք հոգուց բաղկացած խմբերի՝ եռյակների, յուրաքանչյուր խմբում փոքր բանավեճեր անցկացնելու համար: Եռյակում երկու մասնակից հանդես է գալիս որպես կողմ կամ դեմ փաստարկներ ներկայացնող բանախոս, իսկ երրորդ մասնակիցը հանդիսանում է բանավեճը վարող դատավոր, ով վերահսկում է այն, որոշում է հաղթող կողմին և զեկուցում մյուս բոլոր մասնակիցներին այդ մասին: Եռյակների մեթոդի կիրառման մասին տես վերը:

1.2.2.10 Խաղեր

Խաղերը սովորելու զվարճալի մեթոդ են, քանի որ շատ մարդիկ՝ չափահաս թե երեխա, հաճույք են ստանում խաղերից: Խաղերը կարող են ներկայացնել բարդ իրավաբանական սկզբունքները պարզ, փորձի վրա հիմնված ձևով: Եթե խաղերն օգտագործվում են իրավական հարցեր սովորեցնելու համար, ապա դրանք պետք է լինեն ոչ միայն զվարճալի, այլև պետք է ունենան նաև լուրջ նպատակ:

Օրինակ՝ ժողովրդավարության վերաբերյալ խաղեր կազմակերպելիս՝ պետք է հետևել այս քայլերին.

Քայլ 1: Ներկայացնել խաղը:
Քայլ 2: Խաղալ խաղը:
Քայլ 3: Քննարկել խաղն այնպես, որ յուրաքանչյուր ոք հասկանա, թե ինչի մասին էր խաղը:
Քայլ 4: Ցույց տալ խաղի կապը ժողովրդավարության համապատասխան ասպեկտի հետ, որը հանդիսանում է դասի առարկան:

Խաղերը կարող են օգտագործվել գիտելիք, հմտություն և արժեքներ դասավանդելու համար:

1.2.2.11 Հիպոթետիկ խնդիրներ

Հիփոթետիկ խնդիրները նման են ուսումնական օրինակներին, սակայն դրանք հաճախ հիմնված են արհեստածին իրավիճակների վրա: Դրանք կարող են ավելի օգտակար լինել, քան ուսումնական օրինակները այն դեպքում, երբ որոշակի հիմնախնդիր հատուկ մշակվում է տվյալ դասի նպատակների իրականացման համար: Ավելին, դրանք հաճախ հիմնված են արդիական դեպքի վրա (օրինակ՝ մամուլի հոդվածի վրա): Հիփոթետիկ խնդիրների առավելությունն այն է, որ փաստերում կարելի է կատարել համապատասխան փոփոխություններ՝ ելնելով վարժության նպատակներից:

Հիփոթետիկ խնդիրները, մասնավորապես, օգտակար են, երբ դասավանդվում են մարդու իրավունքների հետ կապված թեմաներ այնպիսի միջավայրում, որտեղ բազմաթիվ են մարդու իրավունքների խախտումները, քանի որ հղումը չի կատարվում ուղղակիորեն տվյալ երկրին: Թեև փաստերը կարող են տվյալ երկրում առկա իրավիճակի հետ նույնական լինել, հիփոթետիկ խնդիրը կարող է ներկայացվել որպես այլ երկրում տեղի ունեցող իրավիճակ:

Հիփոթետիկ իրավիճակների, ինչպես և ուսումնական օրինակների կիրառման դեպքում, մասնակիցները պետք է փաստարկեն ի շահ երկու կողմերի, իսկ հետո որոշում կայացնեն դրանց վերաբերյալ: Այս նպատակով իրավունք դասավանդողները կարող են օգտագործել ուսումնական օրինակների կիրառման համար նշված մեկից ութ քայլերը (տես վերևում պարագրաֆ 1.6.5):

Օրինակ: Ոստիկանության գործողությունները և իրավունքի գերակայությունը

Երկրի օրենքի համաձայն՝ «Ոստիկանությունը կարող է ողջամիտ ուժ կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր խախտում են օրենքը կամ այլ կերպ ուժ են կիրառում իրենց դեմ»: Ոստիկանությունը, մեքենա վարելիս, կանգնեցնում է ընդդիմադիր կազմակերպության հինգ անդամի: Ոստիկանությունը ճանաչում է նրանց, նրանցից մեկը հանում է ատրճանակը, ոստիկանությունը կրակում է և սպանում բոլորին:

- Ո՞րն է տվյալ դեպքի կապակցությամբ կիրառելի օրենքը:
- Ո՞վ է խախտել օրենքը:
- Կատարված ո՞ր գործողությունները կարող են խախտած լինել իրավունքի գերակայությունը:

1.2.2.12 Դատախաղեր

Դատախաղերը ներառում են ուսումնական օրինակներ կամ հիփոթետիկ իրավիճակներ, որտեղ մասնակիցներից պահանջվում է փաստարկել բողոքարկումը՝ իրավունքի տեսանկյունից: Դատախաղերը տարբերվում են դատավարություններից, քանի որ այստեղ չկան վկաների, մեղադրյալների կամ փորձագետների հարցաքննություններ: Հարցաքննությունը պետք է տեղի ունենա դատավարության փուլում: Դատախաղն իրականացվում է բողոքարկման փուլում, երբ դատավարությունն

արդեն տեղի է ունեցել: Վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցում են միայն իրավաբանները, ովքեր փաստարկում են վերաքննիչ բողոքի շրջանակում:

Իրավաբանական ֆակուլտետներում դատախաղերը կազմակերպվում են պաշտոնական ձևով, և մասնակիցները հագնում են համապատասխան համազգեստներն ու փաստարկում վերաքննիչ բողոքի շրջանակում՝ հատուկ դատական նիստերի դահլիճում: Իրավաբան մասնակիցները պետք է իրականացնեն որոշակի նախապատրաստական աշխատանք և ներկայացնեն իրենց փաստարկները՝ որպես փաստաբան:

Իրավունք բոլորի համար դասընթացի շրջանակում ձևավորված կլինիկաներում օգտագործվող մեկ այլ տարբերակ կարող է կիրառվել ժողովրդավարության դասավանդման ծրագրում, երբ մասնակիցները նախապատրաստում են փաստարկներ փոքր խմբերում, ինչպես դա երբեմն տեղի է ունենում ուսումնական օրինակների դեպքում, իսկ, այնուհետև, նրանք ընտրում են իրենց ներկայացուցչին՝ խմբի անունից փաստարկները ներկայացնելու համար: Նմանատիպ դատախաղերի կիրառման համար կարող են օգտագործվել ուսումնական օրինակների համար ներկայացված մեկից ութ քայլերը (տես վերևում պարագրաֆ 1.6.5):

Իրավունք բոլորի համար դասընթացի շրջանակում կիրառվող մեկ այլ մեթոդ է փոքր դատախաղը, որտեղ մասնակիցները բաժանվում են եռյակների՝ յուրաքանչյուր կողմում մեկ իրավաբան և մեկ դատավոր կազմով: Վերջինը պետք է վարի դատավարությունը, որոշում կայացնի և արդյունքների մասին զեկուցի մյուս բոլոր մասնակիցներին:

1.2.2.13 Փորձնական դատավարություններ

Փորձնական դատավարությունները փորձի վրա հիմնված ուսումնական մեթոդ են, որոնք սովորեցնում են մասնակիցներին հասկանալ դատական ընթացակարգերը: Դատավարությունները լինում են տարբեր տեսակի: Իրավաբանական ֆակուլտետներում քրեական կամ քաղաքացիական դատավարական իրավունքների դասընթացներում դատավարությունները կարող են ընդգրկել ողջ կիսամյակը, որի ընթացքում մասնակիցները մանրամասն ուսումնասիրում են դատավարության յուրաքանչյուր ասպեկտ: Իրավաբան մասնակիցներից պահանջվում է նախապատրաստվել և մասնակցել դատավարությանը անհատական հիմունքներով:

«Իրավունք բոլորի համար» և ժողովրդավարական կրթություն ծրագրում մեծ թվով մասնակիցներ կարող են մասնակցել դատավարություններին: Օրինակ՝ հինգ վկա և մեկ մեղադրյալ ընդգրկող դատավարությանը կարող են ներգրավվել մինչև 27 մասնակից՝ 8 իրավաբան հայցվորի կամ դատախազության կողմից և 8 իրավաբան՝ պաշտպանական թիմի համար, երեք դատավոր, հինգ վկա, մեղադրյալ, նիստերի քատուղար և դատական կարգադրիչ: Մասնակիցները տարբեր քայլեր են սովորում դատավարությունների ընթացքում: Նրանք նաև ձեռք են բերում հիմնարար հմտություններ, օրինակ՝ ինչպե՞ս բացման խոսք ներկայացնել, ինչպե՞ս օգտագործել ապացույցը, ինչպե՞ս հարցեր տալ և ինչպե՞ս եզրափակիչ խոսք ներկայացնել: Մասնակիցները հանդես են գալիս որպես վկաներ, դատարանի աշխատակիցներ, դատավորներ և իրավաբաններ:

Յուրաքանչյուր կողմից մեկ իրավաբան կարող է ներածական խոսք ասել, յուրաքանչյուր իրավաբան կարող է հարցաքննել մեկ վկայի կամ մեղադրյալին, և մեկ իրավաբան յուրաքանչյուր կողմից կարող է ներկայացնել եզրափակիչ ելույթը: Նախագահող դատավորը կարող է վերահսկել վարույթը, յուրաքանչյուր դատավոր կարող է հարցաքննել մեկ վկայի կամ մեղադրյալին և մեկ դատավոր կարող է պատասխանատու լինել դատական որոշում կայացնելու համար:

Դասը վարողը պետք է օգտագործի հետևյալ քայլերը՝ մեծ թվով մասնակիցներ ընդգրկող դատավարությանը մասնակիցներին նախապատրաստելու համար.

Քայլ 1: Տրամադրել դատավարության նյութերը մասնակիցներին.
Կարդալ մեղադրական եզրակացությունը կամ դատական ծանուցագիրը, գործի փաստական հանգամանքները և վկայի ցուցմունքները բոլոր մասնակիցների համար: Դասը վարողը պետք է՝

- Հավաստիանա, որ մասնակիցները հասկացել են գործի փաստական հանգամանքները, մեղադրական եզրակացության (կամ դատական ծանուցագրի) բնույթը և կիրառելի իրավունքը:
- Հնարավորություն տա մասնակիցներին կարդալ բոլոր նյութերը և ընդգծել այն հատվածները, որոնք կարևոր են մեղադրող կողմի (կամ հայցվորի) և պաշտպանական կողմի համար:

Քայլ 2: Նշանակել կամ ընտրել մասնակիցներ դատավարության մեջ տարբեր դերերի համար.

Դատավարության տեսակից կախված՝ մասնակիցները կարող են ընտրվել իրավաբանի, փորձագետի, վկայի, դատավորի, նիստերի քարտուղարի և այլ դերեր կատարելու համար:

Դատավորի դերը կատարելու համար կարելի է հրավիրել իրավաբանի, իրավաբանական ֆակուլտետի ուսանողի կամ իրական դատավորի: Եթե դա հնարավոր չէ, ապա իրավունք դասավանդողը կամ ուսանողները կարող են գործել որպես դատավորներ:

Քայլ 3: Նախապատրաստել մասնակիցներին դատավարությանը.

Առավելագույն թվով մասնակիցներ ներգրավելու համար իրավունք դասավանդողը պետք է բաժանի լսարանը խմբերի: Մասնակիցների պետք է բաժանվեն՝

- Մեղադրող և պաշտպանող կողմերի իրավաբանների, վկաների, փորձագետների և մեղադրյալների թիմերի: Յուրաքանչյուր թիմ պատասխանատու է իր տեսանկյունը դատավարության ընթացքում ներկայացնելու համար և պետք է պատրաստի բացման խոսքը, իրենց և մյուս կողմի վկաներին տրվող հարցերը և եզրափակիչ ելույթը:
- Դատավորների թիմերի (եթե մասնակցելու է մեկից ավելի դատավոր), ովքեր պետք է իմանան, թե ինչպե՞ս վարեն դատը և պետք է նախապատրաստեն վկաներին տրվող հարցերն ու դատական որոշման նախագիծը, որը ենթակա է փոփոխման դատավարության ավարտից հետո:
- Դատարանի աշխատակիցների թիմեր, ովքեր պետք է նախապատրաստեն դատավարության ընթացքում տարբեր գործառույթներ իրականացնելու համար (օրինակ՝ պատրաստեն ժամանակը հուշող ցուցանակներ):

1.2.2.14 Խթանող բաց հարցեր

Խթանող բաց հարցերի ժամանակ մասնակիցները պետք է ավարտեն նախադասությունը. օրինակ՝ «Եթե ես ընտրվեի…, կամ «Եթե ես լինեի ընդդիմության կուսակցության առաջնորդը…»»

Այս մեթոդը կիրառելու տարբերակ է նաև մասնակիցներին տրամադրել անանուն մի նկար և պահանջել, որ նրանք վերնագրեն այն:

Մասնակիցներին կարող է տրվել նաև անավարտ մի պատմություն և խնդրել, որպեսզի նրանք եզրակացություն գրեն կամ դերախաղի միջոցով այն բեմականացնեն:

Օրինակ: «Եթե ես լինեի ...»
Ավարտել հետևյալ նախադասությունները:

- Եթե ես լինեի ՀՀ Նախագահ, ես …
- Եթե ես լինեի ՀՀ վարչապետ, ես …
- Եթե ես լինեի ՀՀ կրթության և գիտության նախարար, ես …
- Եթե ես լինեի ՀՀ արդարադատության նախարար, ես …:

1.2.2.15 Ձնագունդ

«Ձնագունդը» թիմային աշխատելու համար նախատեսված մեթոդ է, որը սկսվում է յուրաքանչյուր մասնակցի կողմից խնդրի լուծման վերաբերյալ մտորումներով, այնուհետև դա քննարկվում է զույգերով, հետո 4 հոգուց բաղկացած խմբում, այնուհետև 8 հոգուց բաղկացած խմբում և, վերջապես, 16 հոգուց բաղկացած խմբում: Եթե այդքան էլ արդյունավետ չէ 16 հոգանոց խմբի ստեղծումը, ապա կարելի է եզրափակվել 8 հոգանոց խմբով:

Ձնագնդի մեթոդը հետևյալն է.

Քայլ 1. Խնդիրը բաժանել 8 կամ 16 հոգանոց խմբին և պահանջել, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը անհատապես գտնի դրա հնարավոր լուծումները:
Քայլ 2. 8 կամ 16 հոգանոց խումբը բաժանել զույգերի և պահանջել, որպեսզի միմյանց միջև քննարկեն լուծումները:
Քայլ 3. Բաժանել խումբը 4 հոգու՝ միավորելով 2 հոգանոց զույգերը և պահանջել, որպեսզի քննարկեն լուծման իրենց տարբերակները:
Քայլ 4. Բաժանել խումբը 8 հոգու՝ միավորելով 4 հոգանոց խմբերը և պահանջել, որպեսզի քննարկեն լուծման իրենց տարբերակները:
Քայլ 5. Եթե դասընթացը վարողը ցանկանում է մեծ խմբերով աշխատել՝ կարող է 8 հոգանոց խմբերը միավորել և քննարկումն անցկացնել այդ խմբում:
Քայլ 6. Յուրաքանչյուր խմբից պահանջել խնդրի լուծման իրենց տարբերակները:
Քայլ 7. Ամփոփել քննարկումը և ավարտել դասը:

Օրինակ: Քաղաքացիները ինչպե՞ս կարող են մասնակցել ժողովրդավարությանը:

Օգտագործել վերոնշյալ քայլերը կազմակերպելու համար քննարկում, թե ինչպե՞ս քաղաքացիները կարող են մասնակցել որոշումների ընդունման գործընթացին ժողովրդավարական պետությունում:

1.2.2.16 Կարծիքների հարցում

Կարծիքների հարցումը հնարավորություն է տալիս մասնակիցներին արտահայտելու իրենց կարծիքը քննարկվող թեմայի վերաբերյալ:
Հարցումները կարող են՝

- Քննարկման հիմք ծառայել,
- դասընթացը վարողին հնարավորություն տալ հասկանալու մասնակիցների վերաբերմունքը, արժեքները,
- կարող են օգտագործվել վերաբերմունքի փոփոխություններին գնահատական տալու համար:

Կարծիքների հարցումը կարող է իրականացվել հետևյալ քայլերի միջոցով:

Քայլ 1. Յուրաքանչյուր մասնակցի հանձնարարել գրավոր գաղտնի արտահայտելու իրենց կարծիքը կոնկրետ հարցի շուրջ՝ արտահայտելով, թե արդյո՞ք իրենք միանշանակ համաձայն են, համաձայն են, չեն կողմնորոշվում, չեն համաձայնվում, միանշանակ չեն համաձայնվում:
Քայլ 2. Մասնակիցներին խնդրել կիսվել իրենց կարծիքներով և դրանք գրել գրատախտակին:
Քայլ 3. Մասնակիցներին խնդրել հիմնավորել իրենց կարծիքները և լսել ընդդիմախոսներին:
Քայլ 4. Եթե ոչ մեկը հանդես չի գալիս ընդդիմախոսի դերում՝ դասընթացը վարողը կարող է հարցնել, թե ի՞նչ հակափաստարկներ կարող են լինել:
Քայլ 5. Ստուգել մասնակիցների տեսակետների կայունությունը՝ ներկայացնելով այնպիսի օրինակներ, որոնք կարող են պատճառ հանդիսանալ կարծիքը փոխելու համար:
Քայլ 6. Մասնակիցներին հարցնել, թե արդյո՞ք նրանցից ինչ-որ մեկը փոխել է իր կարծիքը այլ անձանց կարծիքը լսելուց հետո: Եթե՝ այո, ապա՝ ինչո՞ւ:

Օրինակ՝ արդյո՞ք այն քաղաքացիները, ովքեր արտագաղթել են իրենց երկրից, իրավունք ունեն մասնակցելու այդ երկրի ընտրություններին:

Օգտագործեք վերոնշյալ հինգ քայլերը:

1.2.2.17 Դասընթացի մասնակիցների կողմից թեմայի ներկայացում

Հետևյալ քայլերը կարող են օգտագործվել, որպեսզի մասնակիցները ներկայացնեն իրենց թեմաները.

Քայլ 1. Մասնակիցներին թեմա տվեք, որպեսզի այն ներկայացնեն մյուս մասնակիցներին:

Քայլ 2. Հանձնարարեք մասնակիցներին ուսումնասիրել թեման՝ կարդալով գրքեր, հոդվածներ կամ խորհրդակցելով ընկերների, ընտանիքի անդամների հետ, որը հնարավորություն կընձեռի հասկանալ թեմայի տարբեր կողմերը և դրա ազդեցությունը մարդկանց վրա:
Քայլ 3. Մասնակիցներին հանձնարարեք իրենց հետազոտության թեման ներկայացնել այլ մասնակիցներին:
Քայլ 4. Մասնակիցներին հանձնարարեք քննարկել յուրաքանչյուր ներկայացումն իրենց գործընկերների կողմից:
Քայլ 5. Ամփոփել ուսումնասիրության արդյունքները:

Օրինակ՝ ընտրությունների մասնակցությունը և քվեատուփերի գաղտնիության խթանումը:

Մասնակիցներին հանձնարարվում է հետազոտել համայնքի կարիքները: Դասընթացը վարողները կազմել են փոքր խմբեր իրենց ընտրատարածքներում, որպեսզի առանձնացնեն այն հարցերը և հնարավորությունները, որոնք հատուկ են այդ համայնքներին: Յուրաքանչյուր խումբ քննարկում է հետևյալը.

- Վեր հանել այն խնդիրները, որոնք կարող են ազդել քվեատուփերի գաղտնիության վրա տվյալ ընտրատարածքում:
- Մշակել ռազմավարություն, որը կարող է խթանել ընտրողների անձնական անձեռնմխելիության ապահովումը և հավասար մասնակցությունը:

1.2.2.18 Պատմության ներկայացում

Պատմության ներկայացումը շատ ուժեղ ուսուցանման մեթոդներից է, երբ մարդիկ պատմում են տարբեր ժամանակաշրջանի պատմություններ: Այսինքն, պատմությունը գրավում է տարիքային բոլոր խմբերի ներկայացուցիչներին և կարող է կրթել և՛ մեծերին, և՛ երեխաներին:

Շատ ազգային պատմություններ ունեն ուժեղ բարոյական և մարդու իրավունքներին առնչվող թեմաներ և արդյունավետ են, եթե դրանք բոլոր մասնակիցներին հայտնի են իրենց ուսումնառության ծրագրից:

Երբ օգտագործվում է այս մեթոդը, դասընթացը վարողը կարող է կատարել հետևյալ գործողությունները.

Քայլ 1. Կարդալ կամ մասնակիցներից որևէ մեկին խնդրել կարդալ պատմությունը:
Քայլ 2. Ստուգել, որ մասնակիցները հասկացել են պատմության էությունը:
Քայլ 3. Մասնակիցներին բաժանել զույգերի և հանձնարարել, որպեսզի թվարկեն պատմության լավ և վատ իրադարձությունները:
Քայլ 4. Մասնակիցներին հանձնարարել կիսվել իրենց գաղափարներով մյուս մասնակիցների հետ:
Քայլ 5. Մասնակիցներին հարցնել, թե արդյո՞ք այն, ինչ կատարվել է պատմության մեջ, արդար է:

Քայլ 6. Փոքր խմբերում մասնակիցներին հարցնել, թե ի՞նչ գործողություններ կարող էր արվել, որպեսզի պատմությունը լիներ արդար կամ ժողովրդավարական:
Քայլ 7. Հանձնարարել, որպեսզի խմբերն իրենց գաղափարներով կիսվեն միմյանց հետ:
Քայլ 8. Հանձնարարել մասնակիցներին, որպեսզի նրանք քննարկեն առաջարկված գաղափարները և մտածեն թե՛ դրական և թե՛ բացասական հետևանքների մասին:
Քայլ 9. Առաջ քաշել այն սկզբունքները, որոնք կարող էին պատմությունը դարձնել արդար:
Քայլ 10. Դասարանին հարցնել, թե արդյո՞ք իրենց հասարակությունն առաջնորդվում է արդարության սկզբունքներով:

Օրինակ: Sikkal-ի թագավորություն:

Օգտագործեք վերոնշյալ քայլերը ստորև ներկայացված պատմությունն արտացոլելու համար:
Նորլանդիան մի երկիր է՝ տեղակայված լեռներում: Դարեր շարունակ այն շատ քիչ շփում է ունեցել աշխարհի հետ:

Չնայած Նորլանդիան փոքրիկ թագավորություն է՝ այն վերջերս հայտնվել է մեծ ուշադրության կենտրոնում: Դա հիմնականում պայմանավորված է այդ հասարակության կազմակերպման անսովոր եղանակով:

Նախ, Նորլանդիայում ոչ մի սոված անձ չկա: Նորլանդիայի ժողովուրդն իրենց սնունդն արտադրում են ինքնուրույն, և այն կիսում են այն անձանց հետ, ովքեր դրա կարիքն ունեն: Տունը տրամադրվում է անվճար բոլոր ընտանիքներին: Տան մակերեսը կախված է ընտանիքի անդամների քանակից: Ջեռուցումն անվճար է, ինչպես նաև վերանորոգման աշխատանքները: Հիվանդության դեպքում, բժիշկը միշտ հասանելի է: Յուրաքանչյուրը ենթարկվում է անվճար բժշկական զննության 6 ամիսը մեկ, և խնամող աշխատողները պարբերաբար այցելում են տարեց մարդկանց, փոքր երեխա ունեցող ընտանիքներին և բոլոր նրանց, ովքեր ունեն իրենց կարիքը:

Նորլանդիայում կյանքի բարիքները բոլորին հասանելի են: Յուրաքանչյուր ընտանիքի տրվում է կտրոնների գիրք, որը նրանք փոխանակում են յուրաքանչյուր տարի տարբեր շքեղ պարագաներով, օրինակ՝ օծանելիք, փափուկ կահույք և այլն: Կտրոնները կարող են շրջանառության մեջ դրվել անմիջապես կամ պահպանեն իրենց ուժը ինչ-որ ժամանակահատվածում:

Ինչպե՞ս են կարողացել նման կերպ ամեն ինչ կազմակերպել Նորլանդիայի ժողովուրդը: Անհիշելի ժամանակներից այն ղեկավարվել է թագավորական ընտանիքի կողմից: Ներկայիս ղեկավարը Նորլանդոս 3-րդ թագավորն է: Նա որոշում է, որ աշխատողներ են անհրաժեշտ յուրաքանչյուր տիպի աշխատանքի համար, օրինակ՝ տներ կառուցելու համար, բժշկական օգնություն և այլն: Նման աշխատանք կատարող անձինք ընտրվում են հինգ տարեկանից և նրանց ուղարկում են հատուկ վերապատրաստման: Գյուղացիներին ուղարկում են գյուղատնտեսական դպրոց, շինարարներին՝ տեխնիկական դպրոց, առողջապահական ոլորտի աշխատողներին՝ բժշկական դպրոցներ և այլն: Յուրաքանչյուր աշխատանքային տարիքի հասած անձ աշխատանքի է անցնում թագավորի թագավորական պալատներից մեկում:

Ամենահետաքրքիրն այն է, որ Նորլանդիայում չկա փող հասկացությունը: Ոչ մեկ կարիք չունի վճարվելու, քանի որ նրանք արդեն ամեն ինչ ունեն:

Հարց կարող է առաջանալ, թե արդյո՞ք ինչ-որ մեկը բողոքում է նման կարգերից: Իրականում, շատ հազվադեպ է նման բան պատահում: Այն մարդիկ, ովքեր բողոքում են, բարվոք խնամքի տակ են գտնվում հոգեբուժական հիվանդանոցներում: Չէ՞ որ մարդ պիտի հոգեկան շեղումներ ունենա, որպեսզի բողոքի նման հասարակարգից, այնպես չէ՞:

1.2.2.19 Դիրքորոշման ներկայացում

Դիրքորոշման ներկայացումը պահանջում է, որպեսզի մասնակիցները պաշտպանեն իրենց դիրքորոշումը՝ ֆիզիկապես կանգնելով և բառացիորեն արդարացնելով իրենց դիրքորոշումը: Պետք է ընտրվի հակասական թեմա:

Օրինակ, մասնակիցներին կարելի է հարցնել, թե ո՞վ է կողմ, իսկ ո՞վ՝ դեմ, որպեսզի նախկին բռնապետական ռեժիմի ներկայացուցիչը մասնակցի նոր ժողովրդավարական ընտրություններին: Մասնակիցները պետք է ընդունեն հետևյալ դիրքորոշումներից մեկը. «Կողմ եմ», «Դեմ եմ», «Չեմ կողմնորոշվում», և պետք է զարգացնեն իրենց կարծիքներն այս թեմայի շուրջ:

Հետևյալ ընթացակարգը կարող է կիրառվել.

Քայլ 1. «Կողմ եմ», «Դեմ եմ», «Չեմ կողմնորոշվում» վերնագրերով սյունյակներ պատրաստել գրատախտակի վրա:
Քայլ 2. Ներկայացրեք թեման, որի շուրջ մասնակիցները պետք է դիրքորոշում ընդունեն / օր.՝ դատապարտվածներն իրավունք ունեն ընտրելու/: Մասնակիցներին հայտնեք, որ նրանք կարող են փոխել իրենց դիրքորոշումը, եթե լսում են լավ կամ վատ փաստարկներ:
Քայլ 3. Մասնակիցներից պահանջել իրենց անունները գրել այն սյունյակում, որին համապատասխանում է իրենց դիրքորոշումը:
Քայլ 4. Մասնակիցներին հնարավորություն տալ պաշտպանել իրենց դիրքորոշումը:
Քայլ 5. Այն մասնակիցները, ովքեր փոխել են իրենց դիրքորոշումը, կարող են պատճառաբանել, թե ինչու են այդպես արել:
Քայլ 6. Ստուգել մասնակիցների դիրքորոշման կայունությունը՝ ներկայացնելով ծայրա-հեղ օրինակներ/ օրինակ՝ ենթադրենք, որ այն տարածաշրջանը, որտեղ գտնվում է քրեակատարողական հիմնարկը, կան շատ դատապարտված անձինք, ովքեր ունեն ընտրելու իրավունք և նրանք ավելի շատ են, քան օրինապաշտ քաղաքացիները, ովքեր ունեն ընտրելու իրավունք, և բանտարկյալները ցանկանում են քվեարկել հնարավոր հանցագործի օգտին, ով կարող է առաջադրել իր թեկնածությունը/:
Քայլ 7. Ամփոփեք քննարկումը և տվեք եզրակացություն:

Մասնակիցները կարող են օգտագործել PRES-ի բանաձևը, որը ներկայացվում է ստորև:

Դիրքորոշման ներկայացումը ոչ միայն սովորեցնում է ունենալ սեփական դիրքորոշում, այլ նաև կարող է փոխել անձի արժեհամակարգը:

Օրինակ: Կարո՞ղ է արդյոք նոր հեռացված բռնապետական ռեժիմի ներկայացուցչին թույլատրվել առաջադրվելու նոր ժողովրդավարական ընտրությունների համար:

Օգտագործեք վերոնշյալ 7 քայլերը, որպեսզի մասնակիցներն այս կամ այն դիրքորոշումն ունենան:

1.2.2.20 Արագ փաստարկում՝ «PRES»-ի բանաձև

PRES-ի բանաձևը մշակվել է մասնակիցներին օգնելու նպատակով, մասնավորապես՝ իրավունքի ոլորտում, տեղում ինչ-որ տրամաբանական փաստարկ կառուցելու համար:

Այս բանաձևով ցանկացած դիրքորոշում ներկայացվում է հետևյալ կերպ.

- Դիրքորոշումը (**P**oint of view)
- Իրենց դիրքորոշման պատճառը (**R**eason)
- Օրինակ կամ ապացույց, որը կուժեղացնի դիրքորոշումը (**E**xample or **E**vidence)
- Դիրքորոշման ամփոփում (**S**ummary)

Օրինակ՝ *Դատապարտյալներին ընտրելու իրավունք թույլ տալու հարցին կողմ փաստարկումը, PRES-ի բանաձևի համաձայն, կարող է ներկայացվել հետևյալ կերպ.*

- Իմ դիրքորոշումն այն է, որ ես կողմ եմ, որպեսզի դատապարտյալներն ունենան ընտրելու իրավունք:
- Պատճառն այն է, որ ես կարծում եմ, որ, դատապարտված լինելով, նրանք արդեն վճարում են իրենց կատարածի համար և պետք է նրանց պետք է հավասարապես վերաբերվել:
- Իմ դիրքորոշման ապացույցն այն է, որ Սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավահավասար է և չի կարող անհիմն խտրականության ենթարկվել:
- Հետևաբար, ամփոփելով, ես կողմ եմ, որպեսզի դատապարտյալներն ունենան ընտրելու իրավունք:

Դատապարտյալներին ընտրելու իրավունք թույլ տալու հարցին դեմ փաստարկումը, PRES-ի բանաձևի համաձայն, կարող է ներկայացվել հետևյալ կերպ.

- Իմ դիրքորոշումն այն է, որ ես դեմ եմ, որպեսզի դատապարտյալներն ունենան ընտրելու իրավունք:
- Պատճառն այն է, որ ես կարծում եմ, որ դատապարտյալների իրավունքները պետք է սահմանափակվեն, և նրանք չպետք է ունենան օրինապաշտ քաղաքացիներին համահավասար իրավունքներ/:
- Իմ դիրքորոշման ապացույցն այն է, որ Սահմանադրությունը սահմանում է, որ իրավունքները կարող են սահմանափակվել, եթե նման սահմանափակումը նախատեսվում է օրենքով:
- Հետևաբար, ամփոփելով, ես դեմ եմ, որպեսզի դատապարտյալներն ունենան ընտրելու իրավունք:

Եթե աշակերտը ցանկանում է փաստարկել, որ իր համար անհասկանալի է, թե արդյո՞ք դատապարտյալները պետք է ունենան ընտրելու իրավունք, PRES-ի բանաձևի համաձայն, կարող է ներկայացվել հետևյալ կերպ.

- Իմ դիրքորոշումն այն է, որ ես չգիտեմ, արդյո՞ք ես կողմ եմ, թե՞ դեմ եմ, որ դատապարտյալներն ունենան ընտրելու իրավունք:
- Պատճառն այն է, որ շատ երկրներ թույլատրում են, որպեսզի դատապարտյալներն ընտրելու իրավունք ունենան:
  Օրինակ՝ Հարավային Աֆրիկան թույլատրում է, իսկ Միացյալ Թագավորությունը՝ ոչ:
- Հետևաբար, ամփոփելով, ես չգիտեմ, ես կողմ եմ, թե՝ դեմ, որ դատապարտյալներն ունենան ընտրելու իրավունք:

<u>PRES-ի բանաձևը սովորեցնելու քայլեր</u>.

Քայլ 1. Ներկայացնել և բացատրել PRES-ի բանաձևը:
Քայլ 2. Ցույց տալ PRES-ի բանաձևը:
Քայլ 3. Հարց տալ մասնակիցներին վիճելի հարցի վերաբերյալ և պահանջել, որպեսզի պատասխանեն՝ օգտագործելով PRES-ի բանաձևը:
Քայլ 4. Ամփոփել:

Այս մեթոդը կարող է համադրվել այլ մեթոդների հետ, օրինակ՝ դիրքորոշում ներկայացնելու մեթոդի հետ:

PRES-ի բանաձևը սովորեցնում է արագ կողմնորոշվելու հմտությունը:

1.2.2.21 Խնդրի լուծում՝ FIRAC-ի բանաձևը

Իրավական խնդիր լուծելիս՝ կարելի է օգտագործել FIRAC-ի բանաձևը՝ դիրքորոշումը ներկայացնելու համար: FIRAC-ը հետևյալ կերպ է բացվում.

F = Facts՝ Փաստեր,

I = Issues՝ Հարցադրումներ,

R = Rule of law՝ Կիրառելի իրավունք,

A = Application of rule of law to facts՝ Կիրառելի իրավունքի կիրարկում՝ փաստերը համադրելով

C = Conclusion՝ Եզրահանգում

Քայլ 1. Պարզել փաստերը. պետք է պարզել գործին վերաբերող փաստերը: Օրինակ՝ կարող է հարց առաջանալ, թե ինչպե՞ս է քաղաքական կուսակցությունը խախտել Ընտրական օրենսգիրքը:
Քայլ 2. Անհրաժեշտ է պարզել հարցադրումները. օրինակ՝ պետք է պարզել, թե արդյո՞ք քաղաքական կուսակցությունն անօրինական եղանակով միջամտել է այլ քաղաքական կուսակցության քարոզարշավին:

Քայլ 3. Պարզել կիրառելի իրավունքը. պետք է քննարկել Ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածները:
Քայլ *4. Կիրառել իրավունքը փաստերի նկատմամբ.* ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածները պետք է կիրառվեն փաստերի նկատմամբ:
Քայլ 5. Եզրահանգում: Եզրակացությունը պետք է լինի, թե արդյո՞ք քաղաքական կուսակցությունը խախտում է թույլ տվել մյուս քաղաքական կուսակցության հանդեպ:

1.2.2.22 Արժեքների հստակեցում

Արժեքների հստակեցման վարժությունները խթանում են մասնակիցներին արտահայտելու ինչպես իրենց կարծիքը և ուսումնասիրելու իրենց արժեքները, վերաբերմունքը, այնպես էլ այլոց կարծիքը, արժեքները, վերաբերմունքը: Այսպիսով, մասնակիցներին հնարավորություն է տրվում ուսումնասիրել իրենց վերաբերմունքը և տեսակետը: Միևնույն ժամանակ, նրանք դիտարկում են այլ անձանց դիրքորոշումները: Արժեքների հստակեցում վարժությունը նպաստում է հաղորդակցման հմտության զարգացմանը և ձևավորում է հանդուրժողականություն այլ անձանց հանդեպ:

Այս մեթոդը մասնակիցների մոտ զարգացնում է լսելու ունակությունը, սովորեցնում է հաղորդակցման հմտություններ, այլ անձանց հանդեպ հանդուրժողական վերաբերմունք, զարգացնում է խնդիրները լուծելու և որոշումներ ընդունելու ունակությունը, քննադատական մտածելակերպը և նպաստում է մասնակիցների տեսակետների կայունությանը:

Այս մեթոդը ներառում է հետևյալ հինգ քայլերը.

Քայլ 1. Մասնակիցներին հարցրեք իրենց կարծիքն այս կամ այն հարցի շուրջ:
Քայլ 2. Մասնակիցներին հանձնարարեք պարզաբանել իրենց կարծիքը:
Քայլ 3. Մասնակիցներին հանձնարարեք պատճառաբանել իրենց տեսակետը:
*Քայլ 4.*Մասնակիցներին հանձնարարեք հաշվի առնել այլ անձանց կարծիքները/հարցնելով մասնակիցներին, թե նրանցից ով է հակառակ կարծիքին/:
Քայլ 5. Հանձնարարեք մասնակիցներին քննարկել թե՛ իրենց և թե՛ ուրիշների տեսակետները, գտնել փաստարկների ուժեղ և թույլ կողմերը:
Քայլ 6. Հանձնարարեք մասնակիցներին վերջնական որոշում ընդունել հարցի կապակցությամբ:
Քայլ 7. Ընդհանուր քննարկում անցկացրեք և ամփոփեք:

1.2.2.23 Յուրաքանչյուրը սովորեցնում է ինչ-որ մեկին

«Յուրաքանչյուրը սովորեցնում է ինչ-որ մեկին» մեթոդը պահանջում է բոլոր մասնակիցներին ներգրավվել դասավանդելու դասընթացին առնչվող թեմայով: Ամեն մի մասնակից սովորեցնում է մյուսին ինչ-որ մի թեմա (օրինակ՝ ժողովրդավարության ուղենիշեր) այնպես, որ վարժության ավարտից հետո բոլոր մասնակիցները սովորեն թեման ամբողջապես:

Այս մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

Քայլ 1. Դասավանդողը պատրաստում է թերթիկներ, որտեղ գրում է թեմային առնչվող արտահայտություններ (օրինակ՝ ժողովրդավարության ուղենիշեր): Բավարար քանակությամբ թերթիկներ է անհրաժեշտ պատրաստել, որպեսզի թեման ամբողջությամբ արտացոլվի:
Քայլ 2. Թերթիկները բաժանվում են մասնակիցներին և նրանց հանձնարարվում է իրենց դասընկերներին սովորեցնել այն, ինչ գրված է թերթիկի վրա:
Քայլ 3. Մասնակիցները սենյակով մեկ պտտվում են և սովորեցնում այն, ինչ գրված է թերթիկներում:
Քայլ 4. Երբ բոլոր մասնակիցները սովորեցնում են այն, ինչ գրված է թերթիկների վրա, դասընթացը վարողն ավարտում է վարժությունը:
Քայլ 5. Դասընթացը վարողը ստուգում է՝ արդյո՞ք բոլոր մասնակիցները յուրացրել են թեման:
Քայլ 6. Դասընթացը վարողն ամփոփում և եզրափակում է դասընթացը:

Օրինակ: Սովորեցնել երեխաների իրավունքների մասին

Օգտագործեք վերոնշյալ 6 քայլերը՝ մասնակիցներին՝ ժողովրդավարական պետությունում գործող երեխաների իրավունքների մասին սովորեցնելուհամար:

1.2.2.24 Տեսողական օժանդակ միջոցներ

Տեսողական օժանդակ միջոցներն են նկարները, պատկերները, ցուցապաստառները, տեսաձայնագրությունները և ֆիլմերը: Տեսողական օժանդակ միջոցները կարող են օգտագործվել հետաքրքրությունը բարձրացնելու համար, ընթերցանության հմտությունները բարելավելու համար, դրանք ձևավորում են մանրակրկիտ ուսումնասիրության հմտություններ, խթանում են քննադատական մտածելակերպ ունենալուն և նպաստում արժեքային համակարգի հստակեցմանը: Մասնակիցներին կարող է հանձնարարվել նկարագրել և վերլուծել այն, ինչ տեսել են, և հարցերի միջոցով այս մեթոդը կիրառել այլ իրավիճակներում:

Դասընթացը վարողն այս մեթոդը կիրառելիս կարող է կատարել հետևյալ քայլերը.

Քայլ 1. Մասնակիցները նկարագրում են, թե ի՞նչ են տեսել (կենտրոնանալ տեսողական օժանդակ միջոցի տարրերի վրա և նկարագրել այն ամենը, ինչ տեսնում են, ներառյալ՝ սիմվոլները):
Քայլ 2. Մասնակիցները վերլուծում են այն ամենը, ինչ տեսել են (ինչպե՞ս են նկարի տարբեր տարրեր իրար հետ առնչվում, նկարի նշանակությունը կամ էությունը, ի՞նչ են իրենցից ներկայացնում կերպարները կամ մարդիկ):
Քայլ 3. Մասնակիցները կիրառում են տեսողական օժանդակ միջոցի գաղափարը (գաղափարը կիրառում են այլ իրավիճակներում՝ մտածելով, թե ի՞նչ է հիշեցնում նկարը, արդյո՞ք կարող են նմանատիպ այլ իրավիճակներ հիշել, և ինչպե՞ս է այդ գաղափարը կիրառվում տեղական մարդկանց և համայնքների նկատմամբ):
Քայլ 4. Մասնակիցները հստակեցնում են իրենց արժեհամակարգը (արտահայտում են իրենց կարծիքը տեսողական օժանդակ միջոցների նկատմամբ, արդյո՞ք նրանք կիսում են նկարչի տեսակետը, թե՝ ոչ, ինչպե՞ս են վերաբերվում գաղափարին, և, ըստ նրանց, ի՞նչ պետք է արվի խնդիրը լուծելու համար):

Քայլ 5. Դասընթացը վարողը համակարգում է ընդհանուր քննարկումը և գնահատում է, թե ի՞նչ են մասնակիցները սովորել:

Օրինակ: Ինչ կարելի է նկարից հասկանալ ժողովրդավարության վերաբերյալ:

Վերոնշյալ հինգ քայլերը կիրառելով՝ օգտագործեք ինչ-որ նկար՝ քննարկում անցկացնելու համար:

1.2.2.25 Հրավիրված մասնագետներ

Այս մեթոդը դասընթացի մասնակիցներին կարող է տալ շատ մեծ տեղեկատվություն, նյութեր և փորձ, որը դասագրքերում հասանելի չէ:

Դասընթացը վարողները պետք է օգտագործեն հետևյալ քայլերը.

Քայլ 1. Պետք է ընտրել համապատասխան մասնագետ (օրինակ՝ քաղաքական գործիչ, դատավոր, փաստաբան, ՀԿ-ի ներկայացուցիչ կամ այլ պետական պաշտոնյա):
Քայլ 2. Մասնագետին և դասարանին պետք է նախապես պատրաստել (մասնագետին և մասնակիցներին պետք է հայտնել սպասելիքների մասին, մասնակիցներին պետք է հանձնարարել պատրաստեն հարցեր, և մասնագետներին հայտնել հնարավոր հարցերի շրջանակի մասին):
Քայլ 3. Ղեկավարել դասարանը (մասնագետին խնդրել կարճ ելույթով հանդես գալ կամ դերախաղ կազմակերպել):
Քայլ 4. Ամփոփել այցը (մասնակիցներին հարցնել, թե ի՞նչ են սովորել մասնագետից, արդյո՞ք նա պատասխանել է իրենց բոլոր հարցերին, և ինչքանո՞վ է այն վերաբերելի արդեն իսկ իրենց սովորածին):

1.2.2.26 Մասնագիտական այցեր

Մասնագիտական այցերը օգտակար են, քանի որ դասընթացը վարողները կարող են ընտրել հետաքրքիր վայրեր մասնակիցների հետ այցելելու համար: Այս այցերը պետք է այնպես կազմակերպվեն, որ համահունչ լինեն մասնակիցների սովորածին:

Այցի մասին մասնակիցները պետք է նախօրոք տեղեկացվեն և նրանց պետք է ասել, թե կոնկրետ ինչին պետք է ուշադրություն դարձնեն: Նրանց պետք է հանձնարարվի նաև նշումներ կատարել դիտարկումների թերթի վրա, որը պետք է նախապես կազմվի: Այդ թերթերը կարող են հիմք հանդիսանալ հետագայում այցի մասին քննարկում կազմակերպելու համար:

Դասընթացը վարողները պետք է կիրառեն հետևյալ քայլերը մասնագիտական այցեր կազմակերպելու համար.

Քայլ 1. Որոշել ուր գնալ (դատարան, նախարարություն և այլն):
Քայլ 2. Պլանավորել այցը (մասնակիցները և հյուրերը պետք է պատրաստ լինեն այցին, մասնակիցները պետք է ունենան դիտարկման թերթիկներ):

Քայլ 3. Այցը ղեկավարել (մասնակիցները պետք է ուշադիր հետևեն իրականացվող միջոցառումներին, հարցեր տան, իրենց կարծիքը հայտնեն, լրացնեն դիտարկման թղթերը):
Քայլ 4. Ամփոփել այցը (մասնակիցները պետք է հաղորդեն, թե ի՞նչ են տեսել, ի՞նչ են զգացել, ի՞նչ են սովորել և ինչքանո՞վ էր համահունչ իրենց սովորածը նախկինում ձեռք բերած գիտելիքի հետ):

Օրինակ: Մասնագիտական այց ժողովրդավարությունը գործողության մեջ տեսնելու համար:

Օգտագործեք վերոնշյալ հինգ քայլերը մասնագիտական այց կազմակերպելու համար օրինակ՝ Ազգային ժողով կամ այլ հաստատություն:

1.2.2.27 «Երազանքի երկիր»

Այս եզրույթն օգտագործվում է, որպեսզի մասնակիցները մտածեն իրենց երկում իրավական փոփոխությունների մասին և ներկայացնեն, թե ինչպե՞ս կցանկանային այն փոխել ապագայում: Այս մեթոդը պահանջում է, որպեսզի մասնակիցներն անցնեն ներկայիս փուլով, երազած փուլով և իրականության փուլով և բացահայտեն, թե ի՞նչն է խանգարում իրենց երազանքին և արդյունքում կոնկրետ գործողություններ մշակեն:

Դասընթացը վարողները պետք է կատարեն հետևյալ քայլերը.

Քայլ 1. Մասնակիցներին խնդրել ներկայացնել ներկայիս քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային վիճակն իրենց երկրում:
Քայլ 2. Մասնակիցներին հանձնարարել գրել իրենց անձնական ցանկությունները երկրի զարգացման հարցում:
Քայլ 3. Մասնակիցներին հարցնել, թե ի՞նչ փոփոխություններ պետք է կատարվեն քաղաքական հաստատություններում և հասարակությունում երազանքին հասնելու համար:
Քայլ 4. Տարբեր ցանկությունները և առաջարկությունները գրառել, և մասնակիցներին խնդրել, որպեսզի մեկնաբանեն դրանցից յուրաքանչյուրը:
Քայլ 5. Բացահայտել այն բնագավառները, որտեղ մասնակիցները կցանկանային ներգրավվել, որպեսզի իրականություն դարձնեն իրենց երազանքը:

Օրինակ: Ինչ երազանք ունես քո երկրի կամ համայնքի համար:

Օգտագործեք վերոնշյալ քայլերն այս վարժությունը կատարելու համար:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 Ինչ է իրավունքը. Իրավունքը և հասարակական բարոյականության նորմերը

Այս մասը ուսումնասիրելուց հետո աշակերտները կարող են բացատրել իրավունքի էությունը, իրավական կարգավորման նպատակները, իրավունքի և հասարակական այլ նորմերի տարբերությունները:

Գնահատման չափորոշիչներ

1. Առօրյա կանքում հանդիպող իրավիճակների և իրավունքի հարաբերակցություն.
2. Իրավունքի և բարոյականության նորմերի հարաբերակցությունը:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբային քննարկում՝ 10 րոպե Խմբային ներկայացում՝ 15 րոպե Քննարկում և ամփոփում՝ 15 րոպե Ընդհանուր՝ 45 րոպե

Ընթացակարգ

1. Լսարանից հարցնել խնդրի էությունը:
2. Լսարանը բաժանել 5 հոգուց կազմված փոքր խմբերի:
3. Խմբերից յուրաքանչյուրին տալ վերոհիշյալ 1-ին կամ 2-րդ հարցերը: Հանձնարարվող հարցադրումները կրկնել խմբերի քանակով պայմանավորված:
4. Լսել խմբերից յուրաքանչյուրի զեկույցը:
5. Ամփոփել խմբային քննարկումների ընդհանուր արդյունքները և տալ եզրահանգումներ:

Դասավանդողը կարող է որոշ ժամանակ տրամադրել՝ աշակերտների հետ քննարկելու համար այն հարցը, թե ինչ է իրավունքը: Արդյո՞ք ծնողները ընտանիքում ստեղծում են իրավունք և օրենք:

Խնդիր 1.

Այս վարժության նպատակն է ցույց տալ, թե ինչպես է իրավունքը ազդում մարդկանց կյանքի տարբեր կողմերի վրա: Այս նպատակով դասավանդողը կարող է տարբեր նկարներ ցուցադրել և պահանջել, որ աշակերտները մատնանշեն այն ամենը, ինչ իրենց կարծիքով այդ նկարում առնչվում է իրավունքին:

Անհատական աշխատանք՝ 2 րոպե Հարցուպատասխան՝ 38 րոպե Քննարկում և ամփոփում՝ 5 րոպե Ընդհանուր՝ 45 րոպե

1. Աշակերտներից պահանջեք գրի առնել առավոտյան իրենց կողմից իրականացված

առաջին գործողությունը:

2. Իրականացրեք պատասխանների փոխանակում:
3. Գրի առեք աշակերտների պատասխանները գրատախտակին՝ ստորև ներկայացված սյունակով:
4. Հարցրեք աշակերտներին,թե արդյոք նրանց կարծիքով նշված գործողությունները որևէ առնչություն ունեն իրավունքի հետ, և եթե այո, ապա որոնք:
5. Հարցրեք աշակերտներին, թե ինչու է անհրաժեշտ իրավական կարգավորումը:
6. Ընդհանուր քննարկում կազմակերպեք:

Օրինակներ ՝

Լոգանք ընդունել	Այո /հանրության առողջություն/	Ջուրը պետք է մաքուր լինի	Առողջապահություն
Նախաճաշել	Այո /սննդամթերքի վերաբերյալ օրենսդրություն/	Սննդամթերքը պետք է օգտակար լինի, զերծ վտանգավոր նյութերից	Առողջապահություն
Տրանսպորտ նստել	Այո /ճանապարհային երթևեկության կանոններ/	Վարորդները պետք է պահպանեն աջակողմյան երթևեկությունը	Անվտանգություն

Խնդիր 2.

Այս խնդիրը նախատեսված է աշակերտների վերլուծական կարողությունները զարգացնելու համար: Դասավանդողը պետք է հարցեր տա՝ պարզելու համար, թե արդյոք աշակերտները ընկալել են խնդրի բոլոր փաստերը:

1. Ընդհանուր լսարանին հարցրեք, թե որոնք են խնդրի փաստերը:
2. Լսարանը բաժանեք փոքր խմբերի՝ յուրաքանչյուրում 5 հոգի:
3. Խումբ 1-ին խնդրեք, որ պատրաստի մեղադրանքի կողմի փաստարկները, խումբ 2-ը՝ պաշտպանության, խումբ 3-ը՝ կլինեն դատավորները, խումբ 4-ը՝ փորձագետներ, խումբ 5-ը՝ իրավունքի փիլիսոփաներ:
4. Ապա՝ մեղադրանքի և պաշտպանության խմբերը ներկայացնում են իրենց փաստարկները, իսկ դատավորները իրենց դատավճիռներ են կայացնում:
5. 4-րդ խումբը պետք է իր դատավճիռը առաջարկի այն մասին, որ Նահապետն ու Նարեկը մեղավոր են:
6. 5-րդ խումբը պետք է բացատրի կապը իրավունքի և բարոյականության միջև:
7. Ամփոփեք դասարանում ընդհանուր քննարկմամբ:

Նահապետին և Նարեկին պատժելու հարցը լուծելու համար պետք է ուշադրություն դարձնել պատժի նպատակների վրա: Որպես կանոն դրանք հետևյալն են.

1) Հատուցում-հասարակության մեջ անօրենությունը պատժելու համար.
2) Կանխարգելում-հանցանք կատարած անձի կողմից կրկին անգամ նույն արարքը

կատարելը կանխելու կամ հասարակության մյուս անդամների կողմից նմանաբնույթ արարքների կատարումը կանխարգելելու համար.

3) Վերադաստիարակում-հանցանք կատարած անձի դաստիարակում՝ նրան հետագա հակահիրավական վարքագծից ձեռնպահ պահելու համար.
4) Մեկուսացում-հանցանք կատարած անձի մեկուսացում հասարակությունից, որ նա այլևս չկարողանա վնասել հասարակության իր հակաօրինական վարքագծով:

Խնդրի փաստերի վերհանում՝ 10 րոպե
Խմբերի նախապատրաստում՝ 10 րոպե
Խմբային ներկայացումներ՝ 15 րոպե
Քննարկում և ամփոփում՝ 10 րոպե
Ընդհանուր՝ 45 րոպե

Աշակերտներին հարցրեք, թե պատժի նպատակները, որքանով կիրագործվեն Նահապետին և Նարեկին դատապարտելու պարագայում: Կողմերը կարող են պնդել, որ պատիժը այս կոնկրետ դեպքում չի ծառայի իր նպատակներին, քանի որ յուրօրինակ իրավիճակ է և միակ նպատակը, որին կարելի է հասնել տվյալ դեպքում՝ հատուցումն է:

Մյուս կողմից հանրային բարոյականության վերաբերյալ ժամանակակից արժեքները դատապարտում են անձին կյանքից զրկելը գրեթե բոլոր իրավիճակներում: Բայց առանձին դեպքերում, ավելի մեծ արժեք փրկելու համար, անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեզ անհրաժեշտության վիճակներում կատարված արարքները կարող են արդարացվել անգամ հանրային բարոյականության նորմերով:

Աշակերտները պետք է մտածեն, թե ինչպիսի արարքները կարող են իրավական առումով լինել օրինական, բայց բարոյական առումով ոչ և հակառակը:

ԳՐԻՉԻ ԽԱՂԸ /այլընտրանքային/

Նպատակը. Այս խաղի նպատակն է ցույց տալ, թե ինչու է հասրակությանը անհրաժեշտ օրենքեր և այլ իրավական կարգավորումներ ունենալ:

1. Դասավանդողը հայտարարում է, որ այս խաղի միջոցով աշակրետներին կբացատրվի իրավական կարգավորումներ ունենալու անհրաժեշտությունը:
2. Ուսուցիչը յուրաքանչյուր շարքում առաջին նստարանին նստած աշակերտին տալիս է մեկ գրիչ /կամ այլ առարկա/: Այն բանից հետո, երբ բոլոր առաջին նստարանի աշակերտները գրիչներ ստացած կլինեն, դասավանդողը հայտարարում է, որ կարող են սկսել խաղալ:
3. Աշակերտները շփոթության մեջ կհայտնվեն, իսկ որոշներն էլ նույնիսկ կբարկանան, որ նրանք չունեն ուղղություն, թե ինչպես խաղան: Մեկ-երկու րոպեից դասավանդողը բացարում է, որ պետք է գրիչը փոխանցել շարքով մինչև վերջ և հետ փոխանցել առաջին շարք: Հաղթող կկլինիայն թիմը, որն աաջինը ավարտի:
4. Հենց աշակերտները սկսեն կատարել Ձեր հրահանգը, նրանց արագ ընդհատեք և ասեք, որ նրանք մոռացել են, գրիչը փոխանցել միայն իրենց ձախ ուսի վրայով: Նրանք նորից կբողոքեն, բայց ուշադրություն մի դարձրեք և պահանջեք, որ նրանք շարունակեն խաղը:

5. Հանկարծակի նորից ընդհանտեք խաղը և ասեք, որ Դուք ընդհանտել եք այն պատճառով, որ որոշ շարքերում ավելի շատ աղջիներ /տղաներ/ կան, քան տղաներ /աղջիկներ/: Պահանջեք շարունակել խաղը, բայց սեռային առումով մեծամասնություն կազմով ուսանողները պետք է դուրս թողնվեն խաղից: Այս դեպքում աշակրետները, որոնք ներգրավված են լինելու խաղից հաճախ կարիք կունենան իրենց տեղի վեր կենալ և գնալ մյուս շարք՝ գրիչը փոխանցելու համար:
6. Խաղը շարունակվում է և Դուք Ձեզ հայեցողությամբ ընտրված որևէ թիմի հաղթող ճանաչում:
7. Երբ հաղթող թիմը հայտարարվի, խաղի շատ մասնակիցներ ամենայն հավանականությամբ զայրացած կլինեն խաղի կազմակերպման ոճից: Այս զայրույթը պետք է դառնա քննարկման հիմքը: Դուք կարող եք կսել հետևյալ հարցից. Ինչը Ձեզ այս խաղում զայրացրեց: Ինչն էր անարդար:

Պատասխանները, որոնք կհնչեն պետք է ուղղված լինեն հինգ հիմնական դրույթներ ընդգծելու.

1) Խաղը չի կարող հաճելի լինել առանց նախապես հայտարարված և հստակ կանոնների: Օրինակ՝ դատարանները չեն կարող կիրառել անհստակ և եկիմաստ օրենքներ, կամ օրենքներ, որոնք հրապարակված չեն:
2) Կանոնները չեն կարող փոփոխվել խաղի կեսից՝ չվանասելով այլոց: Օրինակ՝ օրենքները չեն կարող փոխվել այնպես, որ պատախանատվութուն նախատեսեն այն արարքների համար, որոնք մինչև օրենքի փոփոխությունն են կատարվել: Այս սկզբունքը գործում է բոլոր ժողովրդավարական պետություններում:
3) Մարդկանց որոշակի խմբեր չեն կարող հայեցողականորեն խտրական վերաբերմունքի արժանանալ մյուսների համեմատ: Բոլոր մարդիկ հավասր են և պետք է հավասար վերաբերմունքի արժանան: Այս սկզբունքը ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ:
4) Որոշումները չեն կարող ընդունվել հայեողականորեն: Այն մարմինները, որոնք օրենք են կիրառում պետք է անկողմնակալ որոշումներ կայացնեն: Մարդիկ ունեն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իրենց գործի քննության իրավունք:
5) Շատ աշակրետներ կարող է նկատեն, որ խաղը ժողովրդավարական ձևով չանցկացվեց, քանի որ իրենց նկատմամաբ կիրառվող կանոնները նախաես իրենց հետ չէին քննարկվում և միանձնյա էին որոշվում: Դրանով նրանք կբարձրացնեն նաև իրնեց պատվիրակներին օրենսդիր մարմնում ունենալու և անուղղակի ժողովրդաիշխանության կարևորության հարցերը:

Այս խաղի արդյունքում Դուք պետք է խրախուսեք լսարանին տեսնելու կապը այս խաղի և հասարակության մեջ օրենքների կարևորության միջև: Խաղի ավարտին փորձեք նաև լսարանի հետ քննարկել, թե ինչպիսին պետք է լինեն օրենքները՝ ելնելով այդ խաղից իրենց ստացած փորձառությունից, փորձեք տալ օրենքի սահմանումը: Ամենպարզ սահմանումը կինի հետևայլը. *Օրենքը համապարտադիր կանոնների ամբողջություն է, որը կարգավորում է հասարակության անդամների վարքագիծը համապատասխան համայնքի ներսում*: Օրենքները պետք է լինեն հստակ, արդարացի, զերծ ներքին հակասություններից, ոչ խտրական և չպետք է կիրառվեն հայեցողական կերպով: Մարդիկ պետք է իրավունք ունենան իրենց ներկայացուցիչների ընտրության միջոցով մասնակցել օրենքների ստողծմանը:

2.2 Նորմատիվ իրավական ակտերի համակարգը

Այս բաժնի նպատակն է աշակերտներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի տեսակներին, դրանց իրավական ուժին, ընդունման եղանակներին: Աշակերտները պետք է կարողանան տարբերել օրենքները իրավական ակտերի մյուս տեսակներից:

2.2.1 Սահմանադրություն

Այս մասի նպատակն է աշակերտներին ծանոթացնել ՀՀ Սահմանադրությանը, դրան նշանակությանը և տեղին իրավական ակտերի համակարգում, դրանում ամրագրված հիմնարար սկզբունքներին:

1. ՀՀ Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ: Հանրաքվեն անցկացվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և դրան մասնակցում են Հայաստանի Հանրապետության՝ 18 տարին լրացած քաղաքացիները: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայնի իրավունք: Հանրաքվեի դրված Սահմանադրությանը կամ դրանում փոփոխությունների նախագիծը-նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:
2. Սահմանադրությունը երկրի հիմնական օրենքն է, ինչը նշանակում է, որ եթե որևէ այլ իրավական ակտ հակասում է Սահմանադրությանը այն չի կարող գործել:
3. ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է միջազգային իրավական ակտերով նախատեսված և պաշտպանվող բոլոր հիմնական իրավունքները՝ քաղաքական, քաղաքացիական և սոցիալ-մշակութային. մարդու արժանապատվության իրավունքը, բոլորի հավասարությանը օրենքի առջև, կյանքի իրավունք, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելք, անձնական ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք, իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հավաքների ազատության իրավունք, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունք, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, ընտրելու և ընտրվելու իրավունք, իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունք, առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունք և այլն:
4. ՀՀ Սահմանադրությունը պետական իշխանության մարմինների գործունեության հիմքում դնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման սկզբունքը: Օրենսդիրը ընդունում է օրենքներ, գործադիրը իրագործում է դրանք, իսկ դատական իշխանությունը մեկնաբանում է օրենքները՝ իրականացնելով արդարադատություն: Յուրաքանչյուր գործառույթ իշխանության երեք թևերը իրականացնում են միմյանցից անկախ: ՀՀ Սահմանդրությամբ նախատեսվում են Ազգային ժողովի, Կառավարության,

Դատարանների, Դատախազության, Կենտրոնական բանկի գործունությանը վերաբերող դրույթներ:

2.2.2 Օրենքներ, ինչպես են դրանք ստեղծվում

Այս մասի ուսումնասիրության արդյունքում աշակերտները կտիրապետեն գիտելիքների ՀՀ իրավական համակարգի պատմության, օրենքների ստեղծամն գործընթացի, օրենքների մեկնաբանման վերաբերյալ:

Գնահատման չափորոշիչներ

1. Մայրցամաքային և անգլոսաքսոնական իրավական համակարգերի տարբերակման ունակություն
2. ՀՀ իրավական ակտերի համակարգի իմացություն
3. Օրենքների ստեղծման գործընթացի իմացություն
4. Օրենքների մեկնաբանման հիմունքների իմացություն:

Խնդիր 1.

Այս խնդիրը ցույց է տալիս, թե ինչպես գրված օրենքը կարող է ստանալ տարբեր մեկնաբանություններ, կախված նրանից թե մարդիկ իրենց փաստարկները հիմնում են.

ա/ օրենքի տառի վրա.

բ/ օրենսդրի հետապնդած նպատակի վրա.

գ/ օրենքի իրենց սեփական ընկալման վրա:

Դատարանները, որպես կանոն, օրենքների մեկնաբանությունը իրականացնում են վերոհիշյալ ա և բ կետերում նախատեսված սկզբունքների հիման վրա:

Աշակերտներին ասեք, որ յուրաքանչյուր խումբ պետք է հիմնավորի իր պատասխանը: Դասավանդողը պետք է գրատախտակին գրի առնի պատասխանները:

Խումբ	**1**	**2 և այլն**
Իրավիճակներ	**Օրինակներ**	**Օրինակներ**
1. Մեքենայով անցնելը	Չի թույլատրվում - Կխաթարի անդորրը - Օրենքի տառն է	Չի թույլատրվում - Պետք է ավելի վաղ դուրս գա տնից - Օրենքի տառն է
2. Աղբատար մեքենան	Չի թույլատրվում - Կխաթարի անդորրը - Օրենքի տառն է	Թույլատրվում է -այգին մաքուր պահելու համար - Օրենսդրի հետապնդած նպատակն է եղել

3. Շտապօգնության մեքենան	Թույլատրվում է -հրատապ իրավիճակ է -օրենքի նպատակն է	Չի թույլատրվում - Միևնույնն է անձը մահանալու է - Օրենքի տառն է

Վարժության ընթերցում՝ 5 րոպե Խմբային քննարկումներ՝ 10 րոպե Խմբային ներկայացումներ՝ 20 րոպե Քննարկում և ամփոփում՝ 5 րոպե Ընդհանուր՝ 40 րոպե

Վարժության վերջում դասավանդողը պետք է հարցնի թե արդյոք օրենքը կարող է ավելի հստակ գրվել, նման քննարկումներից խուսափելու համար: Արդյոք օրենքները պետք է շատ մանրամասն լինեն, որ քաղաքացիները հստակ հասկանան դրա իմաստը: Արդյո՞ք օրենքները պետք է ճկուն լինեն՝ տարբեր իրավիճակների հարմարվելու համար: Կարող են օրենքները միաժամանակ լինել և ճկուն և մանրամասն: Ինչպես կարող են արտակարգ իրավիճակները կանխատեսվել օրենքում:

2.3 Դատարանները և վեճերի լուծման արտադատական եղանակները

Այս բաժնի ուսումնառության արդյունքում աշակերտները կկարողանան հասկանալ դատարանների և վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների գործունեությունը:

Գնահատման չափորոշիչներ

1. ՀՀ դատական համակարգի տարբեր դատարանների իմացություն
2. Տարբեր ատյանի դատարանների դերի իմացություն
3. Վեճերի լուծման տարբեր մեխանիզմների միջև ընտրություն կատարելու ունակություն:

Ներակայցված խնդիրների նպատակն է աշակերտներին բացատրել, թե որ դատարանին է անհրաժեշտ է դիմել տարբեր իրավիճակներում:

Խնդիր 1.

Նահապետի պարագայում, քանի որ արարքը կատարվել է Կապանում, գործը կքննի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, որին ընդդատյա են քրեական և քաղաքացիական բոլոր գործերը: Եթե Նահապետը համաձայն չլինի դատարանի որոշման հետ, կարող է այն բողոքարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, իսկ ապա Վճռաբեկ դատարան:

Խնդիր 2.

Նարեն կարող է դիմել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Որպես այլընտրանք Նարեն կարող է դիմել նաև վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների, ինչպես օրինակ՝ արբիտրաժ: Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռի հետ համաձայն չլինելու դեպքում Նարեն այն կարող է բողոքարկել քաղաքացիական վերաքննիչ դատարան, իսկ ապա վճռաբեկ դատարան:

Խնդիր 3.

Նարեկը կարող է դիմել ՀՀ վարչական դատարան, իսկ վճռի հետ համաձայն չլինելու դեպքում վարչական վերաքննիչ դատարան, ապա վճռաբեկ դատարան:

Խնդիր 4.

Եթե Հայաստանի Հանրապետության որևէ դատարան Շաքեի նկատմամբ կիրառի հակասահմանադրական օրենք և Շաքեն իր նկատմամբ կայացված դատական ակտը բողոքարկի վերաքննության և վճռաբեկության կարգով, դրանից հետո նա կարող է դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Որպես այլընտրանք, Շաքեն կարող է դիմել նաև մարդու իրավունքների պաշտպանին կամ Ազգային ժողովի պատգամավորներին՝ օրենքի սահմանադրականության հարով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու միջնորդությամբ:

2.4 Վեճերի լուծման արտադատական եղանակները

Զանգվածային լրատվության միջոցները ավելի հաճախ անդրադառնում են պետական դատարանների կողմից վեճերի լուծման հարցերին, ինչի արդյունքում մարդիկ հակված են կարծելու, թե պետական դատարաններն են վեճերի լուծման միակ եղանակը: Այս բաժինը բացատրում է վեճերի լուծման այլ եղանակների մասին, որոնք մարդկանց զերծ են պահում դատարան դիմելուց: Իհարկե, մարդիկ կարող են իրավունքը իրենց ձեռք վերցնել և դիմել ինքնդատաստանի, սակայն դա իրավական առումով գրագետ եղանակը չէ: Դատարանից դուրս վեճերը լուծելու համար պրակտիկայում վաղուց ձևավորվել են համապատասխան այլընտրանքային եղանակներ, ինչպիսիք են բանակցությունները, արբիտրաժը և մեդիացիան:

Խնդիր 1.

Նահապետը սխալ է գործել հասարակության աչքերում: Հասարակությունը բոլոր դեպքերում քննադատաբար է մոտենում այլ անձի գույքը կամ կյանքը ոչնչացնելու քայլերին, անգամ եթե դա արդյունք է տուժողի կողմից դրսևորած խաբեության կամ այլ անօրինական վարքագծի: Անգամ, եթե անձը զոհ է որևէ ապօրինության, մարդիկ ակնկալում են, որ դրա դեմ պետք է պայքարել օրինական ճանապարհով: Նահապետը կարող էր դիմել բանակցությունների, ոստիկանություն, դատարան:

Խնդիր 2. Որոնք են ստորև նշված վեճերի լուծման լավագույն եղանակները.

Այս վարժության նպատակն է ցույց տալ աշակերտների, որ բոլոր իրավական վեճերը չէ, որ պետք է դատական կարգով լուծվեն:

1. Մհերի հոր և Մհերի միջև վեճը առավել հեշտ կլուծվի ոչ ֆորմալ բանակցությունների միջոցով: Դա կարող է իրականացվել նաև միջնորդի մասնակցությամբ, որը լավ ճանաչում է Մհերին և նրա հորը /օրինակ՝ մայրը, եղբայրը, քույրը և այլ բարեկամները/: Իմաստալից չի լինի օտար մարդու հանձնել այդ վեճի լուծումը: Այստեղ խնդրահարույց կլինի իրավական ընթացակարգերի դիմելը, հատկապես, եթե Մհերը չափահաս լինի: Դատարանը գուցե հորը չպարտադրի ուսման վարձի վճարումը, մինչդեռ բարոյական առումով խնդիր կառաջանա, եթե հայրը մյուս երեխաների համար դա արած լինի:
2. Շաքեն նախ պետք է փորձի բանակցել խանութի սեփականատիրոջ կամ մենեջերի հետ: Եթե դա արդյունք չտա, Շաքեն կարող է գնալ մեդիատորի մոտ, իսկ որպես վերջին միջոց՝ դատարան: Այս խնդրի շրջանակում կարող եք փոքր մեդիացիա կազմակերպել:

Բացատրեք մեդիացիայի փուլերը-10 րոպե Մասնակիցներին բաժանեք 3 հոգանոց փոքր խմբերի /օրինակ՝ Շաքե, վաճառող և մեդիատոր/ -5 րոպե Ժամանակ տվեք մեդիացիային պատրաստվելու-10 րոպե Իրականացրեք մեդիացիաները-10 րոպե Զեկուցումներ ներկայացրեք-10 րոպե Ընդհանուր-45 րոպե:

3. Աշխատանքային վեճերը հաճախ լուծվում են արբիտրաժի կամ բանակցությունների ճանապարհով: Այդ նպատակով դեռևս աշխատանքային պայմանագրում հաճախ նախատեսվում է, որ գործատուի և աշխատողի միջև վեճը լուծվելու է արբիտրաժով: Անգամ, եթե պայմանագրում նման բան նախատեսված չլինի գործատուն և Նարեկը վեճի ծագումից հետո կարող են համաձայնվել գնալ արբիտրաժ: Այդ վեճերի լուծման ավելի արագ և մատչելի մեխանիզմ է:
4. Ամուսնալուծվել ցանկացող զույգերը հաճախ փորձում են գույքի բաժանման շուրջ համաձայնության գալ բանակցությունների ճանապարհով: Հաճախ նրանք կարող են նաև իրավաբան վարձել դրա համար:
5. Առևտրային վեճերը առավել նպատակահարմար է լուծել մեդիացիայի կամ արբիտրաժի ճանապարհով, քանի որ դրանք վեճերի լուծման արագ, քիչ ծախսատար և հետագա գործնական հարաբերությունները պահպանելու հնարավորություն տվող եղանակներ են:

2.5 Փաստաբանությունը

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կարող են հասկանալ թե ինչ է փաստաբանը, ինչպես ստանալ իրավաբանական օգնություն:

Գնահատման չափորոշիչներ

1. Կարողանալ բացատրել, թե երբ են մարդիկ փաստաբանի կարիք ունենում
2. Կարողանալ տարբերակել իրավաբանին և փաստաբանին
3. Իմանալ,թե ով կարող է օգտվել անվճար իրավաբանական օգնության իրավունքից
4. Տիրապետել փաստաբան-վստահորդ հարաբերությունների հիմունքներին:

2.5.1 Ով է փաստաբանը

Չնայած, որ «Իրավունք բոլորի համար» ծրագիրը կոչված է օգնելու Ձեզ առօրյա իրավական խնդիրները լուծելու հարցում, այնուամենայնիվ, առանձին իրավիճակներում կարևոր է դիմել փաստաբանի օգնության: Առանձին դեպքերում կարևոր է արագ դիմել իրավաբանի մասնագիտական օգնության՝ հետագա իրավական բարդություններից խուսափելու համար:

Խնդիր 1.

Այս վարժության նպատակն է աշակերտներին դրդել մտածելու, թե որ իրավիճակներում է անհրաժեշտ է դիմել իրավաբանի օգնության: Աշակերտները պետք է նաև մտածեն վեճերի լուծման այլընտրանքային եղանակների մասին, եթե դրանք կիրառելի են համապատասխան իրավիճակում:

1) Եթե Նարեկը ապահովագրված է և ապահովագրական ընկերությունը պատրաստ է վճարել ամբողջ գումարը, ապա փաստաբանի դիմելու կարիք չկա: Սակայն եթե ապահովագրական ընկերությունը հրաժարվի վճարել ամբողջ գումարը, կամ խանութի սեփականատերը դատարան հայց ներկայացնի ընդդեմ Նարեկի, ապա նա կարիք կունենա դիմելու փաստաբանի խորհրդատվության:
2) Այս դեպքում հարցը, թերևս, կարող է լուծվել առանց փաստաբանի միջամտության, պարզապես գնալով ոստիկանություն և բացատրելով եղելությունը: Սակայն, եթե ոստիկանությունը Ձեզ տուգանի և խնդիրներ ստեղծի, ապա կարող է առաջանալ փաստաբանի կարիք:
3) Եթե Նարեկը ունենալու է գույքի բաժանման, երեխաների խնամքի հետ կապված խնդիրներ, ապա ցանկալի , որ նա դիմի փաստաբանի օգնության:
4) Անահիտը կարող է դիմել փաստաբանի օգնության կտակի էությունը և դրա իրավական հետևանքները իրենց մանրամասն պարզաբանելու համար: Սակայն այս գործառույթը կատարում են նաև նոտարները, կտակը կազմելու ժամանակ, որոնց Անահիտը ի վերջո պետք է դիմի կտակ կազմելու համար: Ուստի Անահիտը խորհրդատվությունը կարող է ստանալ նաև նոտարից՝ առանց լրացուցիչ փաստաբանի օգնության դիմելու:
5) Բնակարանը վաճառելիս Նահապետը կարիք կունենա իրավաբանից ստանալ խորհրդատվություն իր գործարքի իրավական հետևանքների, առուվաճառքի պայմանագրի բովանդակության հետ կապված: Սակայն, եթե Նահապետը որոշի առուվաճառքի պայմանագիրը կնքել նոտարի մոտ, ապա նման խորհրդատվություն կարող է ստանալ նաև նոտարից:

Խնդիր 2.

1. Յուրաքանչյուր ոք կարող է անձամբ հանդես գալ դատարանում և ներկայացնել իր

շահերը:

2. Եթե Նահապետը բավարար միջոցներ չունի փաստաբան վարձելու համար, ապա քաղաքացիական գործով նա կարող է ստանալ անվճար իրավաբանական օգնություն որպես Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակից: Այդ նպատակով Նահապետը պետք է դիմի հանրային պաշտպանի գրասենյակ: Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար Նահապետը կարող է դիմել նաև տարբեր իրավաբանական կլինիկաների, որոնք գործում են համալսարանների շրջանակում :
3. Նահապետի հարևանը, որը իրավաբան է, սակայն փաստաբան չէ, կարող է Նահապետի շահերը ներկայացնել դատարանում, քանի որ դա նա կատարում է անվճար հիմունքներով: Եթե հարևանը նման գործունեությունը իրականացներ վճարի դիմաց, ապա օրենքով նրան կարգելվեր ներկայացնել Նահապետի շահերը դատարանում, քանի որ հարևանը փաստաբան չէ:

Խնդիր 3.

1. Նարեն կարող է օգտվել անվճար իրավաբանական օգնությունից, քանի որ ընկնում է անվճարունակ ֆիզիկական անձանց կատեգորիայի տակ: Այդ նպատակով նա Հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի անվճարունակությունը հաստատող ապացույցներ՝ առ այն որ չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվում է 3 անչափահաս չաշխատող երեխաների հետ:
2. Նարեկի հարևանները կարող են օգտվել անվճար իրավաբանական օգնությունից, եթե ունեն փախստականի կարգավիճակ:
3. Ընդհանուր առմամբ 2-րդ խմբի հաշմանդամները կարող են հավակնել անվճար իրավաբանական օգնության: Սակայն նման օգնությունը չի կարող տրամադրվել անվճար, եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ: Տվյալ օրինակում Անահիտը բավական միջոցներ ունի, ուստի նրան կարող է մերժվել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Դերախաղ. Ավտովթարի գործը

Այս դերախաղը նպատակ ունի.

1. Աշակերտներին ուսուցանել փաստաբանի ընտրության համար նշանակություն ունեցող փաստերին,
2. Հաղորդակից դարձնել իրավաբանական ներկայացուցչության էությանը,
3. Աշակերտներին հուշել այն տեղեկատվությունը, որը նրանք պետք է հաղորդեն իրենց փաստաբանին՝ վերջինիս աշխատանքին աջակցելու համար:

Աշակերտները պետք պատրաստվելու ժամանակ ունենան: Մինչև դերախաղի սկիզբը դասավանդողը կազմում է հարցազրույցի հարցերի խումբ: Հարցերի մեջ կարող են ներառվել փաստաբանի վճարին, իրավաբանական օգնության ծավալին, նմանաբնույթ հարցերում փաստաբանի նախկին փորձառությանը, փաստաբանին տեղեկատվություն տրամադրելու, գործի ընթացքի մասին հաճախորդին տեղյակ պահելուն վերաբերող հարցեր:

Դերախաղից հետո աշակերտները պետք է քննարկեն, թե արդյո՞ք իրենք կընտրեն այդ փաստաբանին: Որոշումը պետք է հիմնվի փաստաբանի անհատական հատկանիշների, վստահելիության, փորձառության, հաղորդակցման հմտությունների և առաջարկած վճարի չափի վրա:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Կյանքի իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները պատկերացում կկազմեն մարդու իրավունքների և ազատությունների դասակարգման, կյանքի իրավունքի բովանդակության մասին, կվերլուծեն այս իրավունքի տարբեր ասպեկտները:

Գնահատման չափորոշիչներ

1. Կյանքի իրավունքի բովանդակության բացահայտում
2. Մահապատժի և կյանքի իրավունքի հարաբերակցության ներկայացում
3. Էվթանազիայի և կանքի իրավունքի հարաբերակցության ներկայացում
4. Հղիության արհեստական ընդհատման և կյանքի իրավունքի հարաբերակցության ներկայացում
5. Պատերազմական գործողությունների ժամանակ հովանավորվող անձանց և կյանքի իրավունքի հարաբերակցության ներկայացում

Խնդիրների նպատակն է խթանել աշակերտների մոտ տեսական գիտելիքներն ընդհանրացնելու և կիրառելու ունակությունները:

Խնդիր 1.

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է նախ հստակեցնել հղիության ժամկետները, դրանից հետո, առաջնորդվել ընդհանուր այն կանոնով, ըստ որի՝ հղիության արհեստական ընդհատում թույլատրվում է կատարել մինչև 12 շաբաթական հղիության ժամկետում, և միայն բացառիկ դեպքերում է թույլատրվում ավելի ուշ ժամկետում հղիությունն արհեստականորեն ընդհատել: Այնուհետև պետք է քննարկել առկա բացառությունները: Աշակերտներին պետք է հնարավորություն ընձեռնել ներկայացնելու նաև սեփական տարբերակները: Եթե հղիության ժամկետերը մեծ են 12 շաբաթից և չկան այլ հակացուցումներ, բժիշկը ենթակա է քրեական պատասխանատվության ապօրինի աբորտ կտարելու համար:

Խնդիր 2.

Այս խնդրի շրջանակներում քննարկման ենթակա են էվթանազիայի ինստիտուտին առնչվող առանձնահատկությունները: Պետք է հստակ ընդգծել, որ ՀՀ օրենսդրությամբ արգելվում է էվթանազիան, և այն իրականացնող անձինք ենթական են քրեական պատասխանատվության:

Նյութի ներկայացում՝	10 րոպե
Խնդիրների ներկայացում՝	10 րոպե
Քննարկում՝	10 րոպե
Ձեկուցում՝	5 րոպե
Ընդհանուր քննարկում՝	10 րոպե
Ընդհանուր՝	45 րոպե

3.2 Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները կկարողանան հասկանալ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելքի իրավունքի բովանդակությունը, կտարանջատեն խոշտանգում և դաժան կամ անմարդկային վերաբերմունք եզրույթները, կծանոթանան այս իրավունքի քրեական և քրեադատավարական երաշխիքներին:

Գնահատման չափորոշիչներ

1. Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելքի իրավունքի բովանդակության ներկայացում
2. «Խոշտանգում» եզրույթի տարրերի բացահայտում
3. «Դաժան կամ անմարդկային վերաբերմունք» եզրույթի բովանդակային ներկայացում
4. Ձերբակալված, կալանավորված, պատիժը կրող անձինք և խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու արգելքի իրավունքի հարաբերակցությունը

Ներկայացված հարցերի նպատակն է նպաստել քննարկվող իրավունքի բովանդակային տարրերի ընկալմանը, ընդգծել այս իրավունքի իրականացումն ապահովող երաշխիքները, առանձնացնել դրանցից առավել էականները:

Առաջադրված խնդիրների նպատակն է օգնել աշակերտներին քննարկվող իրավունքի վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները կիրառել պրակտիկայում կոնկրետ օրինակների համատեքստում:

Խնդիր 1.

Այս խնդրի քննարկման ժամանակ պետք է շեշտադրել այն հանգամանքը, որ խոշտանգում կամ դաժան կամ անմարդկային արարք չեն դիտվում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից: Կոնկրետ դեպքում անձին ազատազրկման դատապարտելը ուղեկցվում է նրան հոգեկան տառապանքներ պատճառելու հետ, սակայն նման իրավիճակը չի կարող դիտվել խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի լույսի ներքո:

Խնդիր 2.

Այս խնդրում կարևորվել է այն, որ պատիժը մեր երկրում ունի դաստիարակչական և նախականխիչ բնույթ՝ միտված լինելով սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձին ուղղելուն, ինչպես նաև հանցագործությունների կանխմանը: Այսինքն, պատշաճ վերաբերմունքի արժանի են նաև դատապարտյալները, և նրանք, պատիժը կրելու ընթացքում, չպետք է արժանանան իրենց արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Ավելին, վերջիններիս արժանապատվությունը կարող է ոտնահարվել ոչ միայն իրավասու պաշտոնատար անձանց կողմից. այստեղ պետք է

կարևորել քրեակատարողական հաստատությունների սոցիալ-տնտեսական պայմանները, որտեղ իրենց պատիժն են կրում այդ անձինք:

Խնդիր 3.

Այս խնդիրը քննարկելիս պետք է առանձնացնել քրեադատավարական այն երաշխիքները, որոնք կոչված են ապահովելու քրեական գործի քննության ընթացքում անձի արժանապատվության իրավունքը: Այստեղ պետք է ընդգծել, որ արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով: Արգելվում է անձին ներգրավել երկարաժամկետ կամ ֆիզիկական տանջանքներ պատճառող, նրա կամ շրջապատողների առողջության համար վտանգ ներկայացնող քննչական փորձարարությունների, դատավարական այլ գործողություններ կատարելուն:

Նյութի ներկայացում՝ 10 րոպե Խնդիրների ներկայացում՝ 10 րոպե Քննարկում՝ 10 րոպե Ձեկուցում՝ 5 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

3.3 Անձնական ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները պատկերացում կկազմեն անձնական ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքի բովանդակության, ազատությունից զրկելու կարգի և հիմքերի, ազատազրկված անձանց իրավունքների և պարտականությունների մասին:

Գնահատման չափորոշիչներ

1. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի բովանդակության ներկայացում
2. Ազատությունից զրկելու կարգի և հիմքերի ներկայացում
3. Անձնական խուզարկության ընթացակարգի ներկայացում
4. Անձնական զննության առանձնահատկությունների ներկայացում

Ներկայացված հարցերի նպատակն է ամրապնդել աշակերտների մոտ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի բովանդակային ընկալումը, ինչպես նաև ընդգծել այս իրավունքի սահմանափակման կարգն ու դեպքերը:

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է քննարկում կազմակերպել ձերբակալում և կալանավորում եզրույթների հարաբերակցության, դրանց ժամկետների և իրականացման ընթացակարգերի վերաբերյալ:

Խնդիր 2.

Այս խնդրի շրջանակներում պետք է քննարկվեն ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրական հիմքերը: Հստակ պետք է ընդգծել, որ անձի ազատությունը չի կարող սահմանափակվել նրա կողմից քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու հետևանքով:

Խնդիր 3.

Այս խնդրի շրջանակներում պետք է քննարկվեն ազատության սահմանափակման այն հիմքերը, որոնք կախված չեն անձի կողմից իրավախախտում կատարելու փաստի հետ:

Խնդիր 4.

Այս խնդրի նպատակն է աշակերտների մոտ ամրապնդել ազատության իրավունքի սահմանադրական սահմանափակման հիմքերը:

Նյութի ներկայացում՝ 10 րոպե Քննարկում՝ 5 րոպե Խնդիրների քննարկում՝20 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

3.4 Բնակարանի անձեռնմխելիության իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները կընկալեն և կբացատրեն բնակարանի անձեռնմխելիության իրավունքի առանձնահատկությունները:

Գնահատման չափորոշիչներ

1) Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ներկայացումը
2) ՛՛Բնակարան՛՛ եզրույթի բովանդակային տարրերի ներկայացում
3) Բնակարանում բնակվողների ցանկությանը հակառակ բնակարան մուտք գործելու կարգի ներկայացում

Խնդիրների նպատակն է ամրապնդել աշակերտների տեսական գիտելիքները բնակարանի անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ և դրանք արդյունավետորեն կիրառել կոնկրետ օրինակներում:

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է հստակեցնել իրավասու պաշտոնատար անձանց կողմից բնակարան մուտք գործելու կարգն ու առանձնահատկությունները: Քննարկումները պետք է ծավալվեն այն հարցը շուրջ, արդյոք բոլոր դեպքերում բնակարան մուտք գործելու համար անհրաժեշտ է դատարանի որոշումը, քննարկել 'բնակարանի խուզարկություն' և 'բնակարանի զննում ' եզրույթների հարաբերակցությունը:

Խնդիր 2.

Սույն խնդրի նպատակն է աշակերտների մոտ ամրապնդել բնակարան մուտք գործելու՝ օրենսդրությամբ նախատեսված կարգերը, բացահայտել դրանց բովանդակությունը և իրականացման առանձնահատկություններն ու տարբերությունները:

Խնդիր 3.

Այս խնդրի նպատակն է հստակեցնել բնակարանի 'սեփականատեր' եզրույթի բովանդակությունը: Պետք է ընդգծել, որ բնակարանի սեփականատերը, այն վարձակալած անձը, կամ օրինական այլ հիմքերով բնակարանում գտնվող յուրաքանչյուր անձ օժտված է բնակարանի անձեռնմխելիության իրավունքով:

Նյութի ներկայացում՝ 10 րոպե Խնդիրների ներկայացում՝ 10 րոպե Խմբային քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

3.5 Անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժինն ավարտելուց հետո աշակերտները՝

1. պետք է ճանաչեն անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության հիմնական իրավունքները,
2. պետք է հասկանան անձնական և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկատվության օգտագործման սահմանափակումները,
3. պետք է հասկանան նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի բովանդակությունը:

Գնահատման չափորոշիչներ

1. Անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի էության պարզաբանում:
2. Անձնական և ընտանեկան կյանքի առանձնահատկությունների գիտակցում:

3. Բացառություններ, որոնք թույլ են տալիս սահմանափակել անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքը:
4. Իր վերաբերյալ տեղեկատվության ստացման և դրա տարածման արգելքի հետ կապված անձի իրավունքները:

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է բացահայտել.

- թե որքանով են կարողանում աշակերտները հասկանալ անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի սահմանները:
- ո՞ր դեպքերում նման բնույթի տեղեկատվության օգտագործումը կամ տարածումը կհամարվի իրավունքի խախտում և որ դեպքերում՝ չի համարվի:
- լիարժեքորեն գիտակցել անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի բովանդակությունը:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

Այս խնդրում աշակերտները պետք է կարողանան նկատել, որ տեղի է ունեցել անձի անձնական և հատկապես՝ ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի խախտում, քանի որ առանց ծնողների համաձայնությամբ ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ տարածվել է որդեգրման վերաբերյալ տեղեկատվություն, ինչն ուղղակիորեն արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Անձի անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվությունը տարածել կամ ինչ-որ ձևով օգտագործել թույլատրվում է մայն օրենքով ուղղակիորեն սահմանված լինելու դեպքում:

Խնդիր 2.

Այս խնդրի նպատակն է աշակերտների շրջանում վերլուծական ընդունակությունների զարգացումը, որի հիման վրա նրանք կկարողանան.

- հիշել և օգտագործել այն դեպքերը, երբ օրենսդրությունն է պահանջում անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակումներ.
- Տրամադրել պետական մարմինների հետ հարաբերություններում պահանջվող տեղեկատվության տրամադրման հիմնավորումները:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

1. Այո, փաստաբանն իրավունք ուներ պահանջեր նման տեղեկատվություն, քանի որ նման իրավասություն նրան վերապահված է օրենքով՝ իր մասնագիտական գործունեությունը պատշաճ կազմակերպելու համար:
2. Առարկության դեպքում փաստաբանը պետք է ներկայացնի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, «Քաղաքացիական դատավարության» ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածները, որոնք սահմանում են պետական մարմիններից տեղեկատվություն պահանջելու փաստաբանների իրավունքը, ինչպես նաև ներկայացնի այն դատական գործը, որի շրջանակներում ինքը ներկայացնում է կոնկրետ կողմի շահերը:
3. Անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքը կարելի է սահմանափակել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

3.6 Տեղեկատվություն ստանալու իրավունք

3.6.1 Հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը

Խնդիր 1

Ներկայացված խնդիրը կբացահայտի աշակերտների մտածելու և վերլուծություններ անելու կարողությունը և կպարզի՝

- արդյոք աշակերտները պատկերացնում են հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության և անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքների հարաբերակցությունը,
- թե արդյոք աշակերտները գիտեն նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը ո՞ր դեպքերում կարող է ենթարկվել սահմանափակումների,
- արդյոք աշակերտները պատկերացնում են նշված իրավունքի սահմանափակման հիմքերի և դրանց էությունը:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր**՝ 30 րոպե

1. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության և անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքները գտնվում են մասի և ընդհանուրի փոխհարաբերակցության մեջ:
2. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումը հնարավոր է միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է՝ հասարակական կարգի պահպանության, հանցագործությունների կանխման,

հանրության առողջության և բարոյականության պաշտպանության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Այս իրավունքները կարող են ժամանակավորապես սահմանափակվել նաև ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

3. Արտակարգ իրավիճակներում հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ հայտարարում է ՀՀ Նախագահը՝ խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ և ընդունելով համապատասխան որոշում: Առանձին դեպքում հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել նաև դատարանի որոշման՝ քրեական հետապնդումն իրականացնող մարմնի դիմումի հիման վրա:

Խնդիր 2

Ներկայացված խնդիրը նպատակ ունի պարզելու, թե

- արդյոք աշակերտները լիարժեք պատկերացում ունեն, թե որոնք են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանները, և նշված իրավունքը արդյոք ունի սահմանափակումներ և որ դեպքերում,
- արդյոք ուսանողները գործնական օրինակով հասկանում են, թե որոնք են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտումները և կարող են ներկայացնել և վերլուծել, թե ինչու են դրանք համարվում խախտումներ:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

1. Ո՛չ փոստատարը, ո՛չ էլ հարևանը իրավունք չունեն ծանոթանալ նամակի բովանդակությանը:
2. Այո, առկա է մասնավոր կյանքի անձեռնամխելիության իրավունքը խախտում: Խախտվել է նամակագրության գաղտնիության իրավունքը:

3.7 Կարծիքն ազատ արտահայտելու իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժինն ավարտելուց հետո աշակերտները՝

1. կհասկանան կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի բովանդակությունը,
2. կգիտակցեն խոսքի ազատության իրավունքի ծավալները և սահմանները,

3. կհասկանան տեղեկատվության ազատության իրավունքի էությունը,
4. կճանաչեն պետության երաշխիքները լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատության ապահովման գործում:

Գնահատման չափորոշիչներ

1. Կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի բաղադրատարրերի նշումը:
2. Ի՞նչ բովանդակություն ունի խոսքի ազատությունը:
3. Որո՞նք են տեղեկատվության ազատության տարրերը:
4. Խոսքի և տեղեկատվության ազատության սահմանները:
5. Պետությունը և լրատվամիջոցներն ու տեղեկատվության փոխանցման այլ միջոցները տեղեկատվության ազատության համատեքստում:

Խնդիր 1

Այս խնդրի նպատակն է բացահայտել.

- արդյոք աշակերտները լիարժեքորեն պատկերացնում են, թե ինչ է իրենից ներկայացնում կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի բովանդակությունը,
- ինչպես են աշակերտները հասկանում և տարբերակում իրարից կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը և խոսքի ազատության իրավունքը, ներկայացված դեպքում ինչպես են ներկայացնում դրանց հարաբերակցությունը,
- արդյոք աշակերտները հասկանում են, թե որոնք են կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի սահմանները, արդյոք կարելի է մարդուն ստիպել հրաժարվելու իր կարծիքից:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

1. Նման կարծիք ունենալը քաղաքացի Նահապետի իրավունքն է:
2. Խնդրի օրինակով նման կարծիքի իրավունքը և խոսքի ազատության իրավունքը ներդաշնակորեն կարող են համատեղվել, և անձը կարող է նաև արտահայտել խոսքի միջոցով իր կարծիքն՝ առանց որևէ սահմանափակումների:
3. Լրագրողի նման պահանջը իրավազուրկ է: Ոչ ոք իրավունք չունի պարտավորեցնել մեկ այլ անձի հանրայնացնել իր կարծիքը:

Խնդիր 2

Այս խնդրի նպատակն է պարզել,

- թե արդյոք աշակերտները հասկանում են, որոնք են տեղեկատվության ազատության տարրերը և բովանդակությունը

- արդյոք աշակերտները պրակտիկ օրինակով կարող են ցույց տալ տեղեկատվության ազատության սահմանները,
- արդյոք աշակերտները գիտեն տեղեկատվության տարածման իրավունքի թույլատրելիության սահմանները:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

1. Տեսահոլովակ ստեղծելը կարող է տեղեկատվության ազատության տարրերի մեջ մտնել, եթե տեսահոլովակը չի պարունակում տեղեկատվություն, և այդ տեղեկատվության շրջանառությունը սահմանափակված չէ:
2. Տեսահոլովակ ստեղծողն իրավունք ունի տարածել այն, այդ թվում՝ փոխանցել իր ընկերներին, եթե այդ տեղեկատվության շրջանառությունը սահմանափակված չէ:

3.8 Կրթության իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժինն ավարտելուց հետո աշակերտները՝

1. կհասկանան կրթության իրավունքի բովանդակությունը,
2. կկարողանան բացատրել կրթության իրավունքի իմաստը, գործնականում դրա իրացման ձևերը, ինչպես նաև այդ իրավունքի կենսագործման գործում պետության պարտավորությունները:

Գնահատման չափորոշիչներ

1. Կրթության իրավունքի բաղադրատարրերի նշումը:
2. Ո՞ր դեպքերում է կրթությունը պարտադիր:
3. Որո՞նք են ուսումնական հաստատությունների տարբերությունները և կրթությունն ի՞նչ առանձնահատկություններով ու կարգով է տրամադրվում դրանցում:
4. Անվճար և վճարովի կրթություն:
5. Ինչպե՞ս կարելի է ստանալ անվճար կրթություն պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում:

Խնդիր 1

Այս խնդրի միջոցով հնարավոր է բացահայտել, թե

- արդյոք աշակերտները գիտեն կրթության իրավունքի բովանդակությունը և կարող են այն մեկնաբանել,

- կրթության ինչ տեսակներ կան Հայաստանի Հանրապետությունում, որն է դրանցից պարտադիր,
- արդյոք աշակերտները ամբողջական պատկերացում ունեն Հայաստանի Հանրապետությունում կրթության իրավունքի իրականացման մասին:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

1. Միերն իրավունք կունենա ծնողների համաձայնությամբ լքելու դպրոցը, եթե նրա 16 տարին լրացել է:
2. Միերն իրավունք չի ունենա լքելու դպրոցը, եթե նրա 16 տարի չի լրացել:
3. Հարնակրթական դպրոցի աստիճաններն են՝ տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ), միջին դպրոց (5-9-րդ դասարաններ), ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):
4. Տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ), միջին դպրոց (5-9-րդ դասարաններ):

Խնդիր 2

Ներկայացված խնդրի միջոցով պարզ կդառնա, թե

- ինչպես են աշակերտները պատկերացնում կրթության իրավունքը և գիտեն, այն առաջացնում է որոշակի պարտականություններ այն ունեցողների համար, թե ոչ,
- թե արդյոք աշակերտները գիտեն, թե ինչ աստիճաններից է բաղկացած հանրակրթական դպրոցը Հայաստանի Հանրապետությունում, որ աստիճաններն են պարտադիր,

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

1. Հայաստանի Հանրապետությունում ընդունված կրթական ծրագրերն են՝ նախնական (արհետսագործական), միջին և բարձրագույն մասնագիտական:
2. Նախնական (արհետսագործական) կրթությունն իրականացվում է արհեստագործական ուսումնարան, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, որտեղ աշակերտները ուսանում են տարաբնույթ արհեստներ և նմանաբնույթ այլ մասնագիտություններ:
   Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում:

Հայաստանի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տարատեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:

3. Այո: Օրինակ՝ միջին մասնագիտական կրթությունն իրականացնող հիմնարկները կարող են իրականացնել նաև հանրակրթական ու արհեստագործական կրթական ծրագրեր:
4. Ա. բակալավր,
   Բ. դիպլոմավորված մասնագետ,
   Գ. մագիստրոս,
   Դ. հետբուհական մասնագիտական կրթություն:

Խնդիր 3

Այս խնդրի միջոցով աշակերտների մոտ կզարգանան վերլուծական ընդունակությունները, որոնք միջոցով կբացահատվի, թե

- արդյոք աշակերտները գիտեն, որոնք են Հայաստանի Հանրապետությունում գործող մասնագիտական կրթական ծրագրերը,
- լիարժեք պատկերացում կազմեն, թե ինչպես է յուրաքանչյուր կրթական հաստատություն իրականացնում իր կրթական ծրագիրը, կարող է այն փոփոխվել, թե ոչ,
- հասկանալ մասնագիտական բարձրգույն կրթության կառուցակարգը Հայաստանի Հանրապետությունում:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե

1. Միջնակարգ կրթությունը պետական դպրոցներում անվճար է, սակայն կարող են լինել մասնավոր դպրոցներ, ուսումնական հաստատություններ որոնք պատկանում են մասնավոր անձանց, որտեղ կրթության տրամադրումը կազմակարեպվի վճարովի հիմունքներով:
2. Հնարավոր է հայտարարված մրցույթում ամենաբարձր միավորները հավաքելու և մրցույթում հաղթելու դեպքում:
3. Խորհուրդ կտանք, որ սովորի բարձր առաջադիմությամբ և արդյունքում անցնի անվճար կրթության համակարգին:

Խնդիր 4

Այս խնդրի արդյունքում պարզ կդառնա, թե

- արդյոք ուսանողները գիտեն, թե որ Հայաստանի Հանրապետության կրթական ծրագրերից որոնք են անվճար և որոնք վճարողի, ինչ հիմքով են դրանք սահմանվում,
- արդյոք սովորողները գիտեն, անվճար կրթության իրավունքի մասին, կարողանում են ներկայացնել և մեկնաբանել, թե որ դեպքում անձը իրավունք ունի ստանալու անվճար կրթություն:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝10 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԻԺ

4.1 Հանցագործության հասկացությունը

Առաջադրանքի ներկայացում՝ 10 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 20 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Այս նյութի ուսումնասիրությունից հետո աշակերտները կստանան գիտելիքներ այն մասին, թե ինչ է հանցագործությունը, ինչպես կարելի է տարբերակել այն այլ իրավախախտումներից: Զեռք կբերի բավարար գիտելիքներ հանցագործության հատկանիշների, այն է՝ դրա հանրային վտանգավորության, հակաիրավականության, մեղավորությամբ կատարված արարք լինելու վերաբերյալ:

Խնդիր 1.

Նարեկը, ըստ էության քրեական պատասխանատվության ենթակա չէ, քանի որ նրա կողմից որևէ կոնկրետ քայլ չի կատարվել՝ ուղղված Նահապետի սպանությանը, իսկ հանցագործություն է միայն արարքը: Անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության իր մտքերի համար:

4.2 Հանցագործության տեսակները

Առաջադրանքի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 25 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Այս թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են հանցագործությունների տեսակները: Անդրադարձ կատարվել դրանցից յուրաքանչյուրին, մասնավորապես՝ ոչ մեծ, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին: Նյութի ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում տրամադրել աշակերտներին գիտելիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն նրանց որոշելու հանցագործության ծանրության աստիճանը, որով պայմանավորված քրեական օրենսդրությունը նախատեսում է մի շարք առանձնահատկություններ:

Խնդիր 1.

Մհերի կատարած արարքը դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին: Հանցագործության ծանրության աստիճանը որոշելիս պետք է ուշադրություն դարձնել կոնկրետ հանցագործության համար նախատեսված սանկցիային, այլ ոչ թե նրան, թե անձի նկատմամբ ինչ պատիժ է նշանակվել:

4.3 Անհրաժեշտ պաշտպանություն և ծայրահեղ անհրաժեշտություն

Առաջադրանքի ներկայացում՝ 10 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Թեմայի ուսումնասիրության արդյունքում աշակերտներին գիտելիքներ են տրամադրվում անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտների վերաբերյալ: Նախ և առաջ՝ հնարավորություն է տրվում տարբերակելու այս ինստիտուտները միմյանցից՝ ընդգծելով դրանց առանձնահատկությունները: Նյութը պարունակում է նաև դրանց իրավաչափության պայմանները մատնանշող տեղեկատվություն, որի յուրացումը հնարավորություն կտա գնահատելու, թե արդյոք անձի գործողություններում առկա է անհրաժեշտ պաշտպանություն կամ ծայրահեղ անհրաժեշտություն, թե դրանց սահմանազանցում:

Խնդիր 1.

Նահապետի գործողություններում առկա են անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում: Նախ և առաջ, փաստենք, որ Նահապետի կողմից դանակը վերցնելուց հետո արդեն ուժերի հարաբերակցությունը հօգուտ նրա էր: Այս իրավիճակում առողջությանը ծան վնաս հասցնելը պատճառված համաչափ վնաս չէ, ուստի տեղի է ունեցել սահմանազանցում:

Խնդիր 2.

Նարեկի գործողություններում բացակայում է անհրաժեշտ պաշտպանության տարրերը. կատարվել է սպանություն: Նախ և առաջ, խնդրի տվյալներից երևում է, որ վերջին ամրակազմ երիտասարդ էր, ով կարողանում է փախուստի մատնել իր վրա հարձակված երկու անձանց: Դեռ ավելին, վազելով նրանցից մեկի ետևից դանակի հարվածներ է հասցրել, որոնք հանգեցրել են անձ մահվան:

Խնդիր 3.

Անահիտը ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի որ նրա գործողություններում առկա չեն որևէ հանցագործության հատկանիշներ:

Խնդիր 4.

Նահապետը ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի որ նրա գործողությունները վկայում են ծայրահեղ անհրաժեշտության առկայության մասին: Սույն դեպքում Նարեի կյանքը փրկելու նկատառումից ելնելով Շաքեի առողջությանը ծանր վնաս է հասցրել:

Խնդիր 5.

Նարեկի գործողություններում առկա են ծայրահեղ անհրաժեշտության հատկանիշներ, քանի որ սույն դեպքում աշխատակցուհու կյանքը փրկելու դիմաց վնաս

է պատճառվել գույքային արժեք ներկայացնող առարկաներին: Ուստի ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցման մասին խոսելը նույնիսկ առարկայազուրկ կլինի:

Խնդիր 6.

Առկա է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ, քանի որ երկու անձանց կյանքը փրկելու համար զոհաբերվում է մեկ անձ: Խնդրի պատասխանը էականորեն կփոխվեր, եթե անձի ընտրություն կատարվեր ոչ թե վիճակահանությամբ, այլ որևէ անձի որոշմամբ, տվյալ դեպքում գործ կունենայինք սպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցման հետ՝ կապված խնդրի մյուս տվյալներից:

Օգնության երկու օրից հասնելը կփոխեր իրավիճակը էականորեն, եթե այդ հանգամանքի առկայությունը գիտակցեին Նարեկը, Միերը և Նահապետը, հակառակ դեպքում որևէ ազդեցություն չէր թողնի:

4.4 Անմեղության կանխավարկած

Առաջադրանքի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 25 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր**՝ 45 րոպե

Այս թեմայի շրջանակներում աշակերտները գիտելիքներ ձեռք կբերեն այս սահմանադրաիրավական սկզբունքի վերաբերյալ, այն է՝ անմեղության կանխավարկածը: Ուսումնասիրվող նյութի մեջ ներառված է նաև այս սկզբունքի կիրարկումն ապահովելուն ուղղված երաշխիքների վերլուծությունը:

Խնդիր 1.

Դատավորի գործողությունները էականորեն խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, խարխլում դրա հիմքերը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նաև քրեական օրենսդրությունը ուղղակիորեն ամրագրում է, որ անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, անձի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված է մեղադրանքի կողմի վրա:

4.5 Ձերբակալում

Առաջադրանքի ներկայացում՝ 10 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 20 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր**՝ 45 րոպե

Նյութի ուսումնասիրության արդյունքում աշակերտները պատկերացում կկազմեն, թե ինչ է իրենից ներկայացնում ձերբակալումը, ինչ դատավարական նշանակություն ունի այն: Թեմայի շրջանակներում կուսումնասիրվեն նաև

ձերբակալման էությունը կազմող գործողությունների վերլուծությունը, ինչպես նաև դրա առանձին տեսակների քննարկումը:

Խնդիր 1.

Մեերի ձերբակալման գործում առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում, որը դրսևորվել է անձին ձերբակալման տակ պահելու ժամկետի կոպիտ ոտնահարմամբ: Անձը կարող է ձերբակալվել առավելագույնը 72 ժամ տևողությամբ, ժամկետի լրանալը հիմք է անձին անհապաղ ազատելու համար: Ձերբակալման 72 ժամվա ժամկետը հաշվարկվում է անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից և որևէ կերպ կապված չէ ոչ աշխատանքային օրերի հետ: Ուստի քրեական հետապնդման մարմինների վկայակոչումը առարկայազուրկ է և անհիմն:

4.6 Կալանավորում

Առաջադրանքի ներկայացում՝ 10 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Ձեկուցում՝ 20 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Թեմայի ուսումնասիրումը հիմնարար գիտելիքներ կտրամադրի աշակերտներին պատկերացում կազմելու կալանավորման վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաև դրա կատարման երաշխիքներին, դատավարական կարգին: Առանձին մասով ներկայացվել է նաև այն անձանց շրջանակը, որոնց կալանավորելիս անհրաժեշտ է հատուկ կարգի առկայություն: Աշակերտները ձեռք կբերեն գիտելիքներ նաև կալանավորման ավարտի կապակցությամբ, մասնավորապես, թե որ դեպքերում և երբ է ավարտվում այս ինստիտուտի գործողությունը:

Խնդիր 1.

Նարեկը իր մտորումներում իրավացի չէր: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը նախատեսում է մինչև 1 տարի անձին կալանավորման տակ պահելու հնարավորությունը: Ուստի չնայած այն հանգամանքին, որ կալանավորման ժամկետը հաշվակցվում է դատարանի կողմից նշանակված պատժի հետ, սակայն, այնուամենայնիվ, որևէ կերպ անձին արգելվում է պահել կալանքի տակ, եթե լրացել են օրենքով նախատեսված առավելագույն ժամկետները:

4.7 Գրավ

Առաջադրանքի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Ձեկուցում՝ 25 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Նյութը սերտելու արդյունքում աշակերտները ձեռք կբերեն հիմնարար գիտելիքներ գրավի ինստիտուտի վերաբերյալ,: Ներկայացված է նաև այն անձանց շրջանակը, ովքեր կարող են վճարել գրավի առարկա հանդիսացող դրամական միջոցները: Ներկայացվել են օրենսդրությամբ նախատեսված գրավի դրույքաչափերը:

Խնդիր 1.

Դատարանի գործողությունները իրավաչափ չեն, քանի որ որպես վճարվելիք գրավի չափ սահմանվել է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: Քրեադատավարական օրենսդրությունը ուղղակիորեն ամրագրում է, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում նշանակվող գրավի չափը պետք է լինի նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից ավելի:

4.8 Խուզարկություն

Առաջադրանքի ներկայացում՝ 10 րոպե
Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե
Զեկուցում՝ 15 րոպե
Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե
Ընդհանուր՝ 45 րոպե

Թեման ընդհանուր պատկերացում է տալիս խուզարկության՝ որպես քննչական գործողության կատարման հասկացության, կատարման ընդհանուր կարգի վերաբերյալ: Ուսումնասիրության են ենթարկվել նաև խուզարկության կատարման պայմանները, որոնք սահմանված են քրեադատավարական օրենսդրությամբ:

Խնդիր 1.

Առանց բնակարանի սեփականատիրոջ ներկայության հնարավոր է կատարել բնակարանի խուզարկություն քննչական գործողությունը: Այս դեպքերի համար օրենքը նախատեսում է հետևյալ կարգը. անհրաժեշտ է, որ խուզարկությանը մասնակցի բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը:

4.9 Առգրավում

Առաջադրանքի ներկայացում՝ 10 րոպե
Խմբի ներսում քննարկում՝ 5 րոպե
Զեկուցում՝ 20 րոպե
Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե
Ընդհանուր՝ 45 րոպե

Նյութի ուսումնասիրությունը աշակերտներին հնարավորություն կընձեռի ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել առգրավման վերաբերյալ: Բովանդակության մեջ ներառված են նաև հիմնարար գիտելիքներ առգրավման կատարման պայմանների վերաբերյալ:

Խնդիր 1.

Քննիչը, չկազմելով առգրավված առարկաների վերաբերյալ արձանագրությունները, թույլ է տվել քրեադատավարական նորմի էական խախտում: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ուղղակիորեն ամրագրում է, որ առգրավման արդյունքների վերաբերյալ պետք է կազմվի արձանագրություն քննչական գործողության կատարման ավարտին:

4.10 Քրեական գործերի քննությունը դատարանում

Առաջադրանքի ներկայացում՝ 10 բոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 բոպե Զեկուցում՝ 20 բոպե Ընդհանուր քննարկում՝ 5 բոպե **Ընդհանուր՝** 45 բոպե

Նյութի ուսումնասիրություն ընդհանուր գիտելիքներ կտրամադրի Հայաստանի Հանրապետությունում արդարադատության իրականացման, դատարանում քրեական գործերի քննության վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաև քրեական գործերի քննության վերջնական փուլին՝ դատավճռի կայացմանը: Մատնանշվել են դատավճռին ներկայացվող պահանջները:

Խնդիր 1

Դատարանի գործողություններում առկա են քրեադատավարական օրենքի էական խախտումներ: Գործի դատական քննության ապահովումը բխում է, նախ և առաջ ամբաստանյալի, այն է՝ Շաքեի շահերից, քանի որ, ի տարբերություն մինչդատական վարույթի, դատական քննությունը օժտված է մի շարք առանձնահատկություններով, որոնք ապահովում են գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը, անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

4.11 Անչափահասների մասնակցությամբ արդարադատության առանձնահատկությունները

Առաջադրանքի ներկայացում՝ 5 բոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 բոպե Զեկուցում՝ 25 բոպե Ընդհանուր քննարկում՝ 5 բոպե **Ընդհանուր՝** 45 բոպե

Այս թեմայի շրջանակներում ներկայացվել են անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները: Քննարկման առարկա է դարձվել անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգը, ընդգծվել դրանում տեղ գտած յուրաքանչյուր պատժատեսակի, այն է՝ տուգանք, հանրային աշխատանքներ, կալանք և ազատազրկում, կիրառման առանձնահատկությունները: Նյութում ներառված

են նաև այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվի դատարանի կողմից պատիժ նշանակելիս:

Խնդիր 1

Անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս առկա առանձնահատկությունները ներկայացված են նյութի շրջանակներում: Դրանք իրենցից ներկայացնում են ինչպես անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգը, այնպես է պատիժ նշանակելիս դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքները:

ԳԼՈՒԽ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

5.1 Ընտանիք և ամուսնություն

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները կարող են հասկանալ ամուսնության և ընտանիքի բովանդակությունը, ամուսնություն կնքելու կարգը և պայմանները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Գնահատման չափորոշիչներ

1. "Ընտանիք" հասկացության նշանակության բացատրությունը
2. Որոշակի փաստերի պարագայում որոշման կայացում՝ արդյո՞ք այս կամ այն անձն իրավունք ունի ամուսնանալ թե՞ ոչ
3. Որոշակի փաստերի պարագայում որոշման կայացում՝ արդյո՞ք ամուսնությունը վավեր է թե՞ ոչ
4. Ամուսնություն կնքելու պայմանների և կարգի իմացություն

Այս վարժության նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ մտածելու, թե ի՞նչ է «ընտանիք»-ը: Աշակերտները կարող են քննարկել նաև այն հարցը, թե արդյո՞ք կա կատարյալ ընտանիք:

Հարց 1.

Այս հարցերին պատասխան ստանալու համար անհրաժեշտ է դասարանը բաժանել փոքր խմբերի և հանձնարարել նրանց տալ «ընտանիք» հասկացության սահմանումը: Նրանք կարող են քննարկել հետևյալ հարցերը. որոնք են ընտանիքի բնութագրիչները, արդյոք ընտանիքը որոշակի հատուկ հարաբերություններ ունեցող մարդկանց խումբ է, արդյոք այդ հարաբերությունները հիմնված են արյան, ամուսնության կամ այլ կապի վրա, ովքեր են ընտանիքի անդամները: Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր եզրակացությունները:

Հարց 2.

Այս հարցի շրջանակներում քննարկման ենթակա են հետևյալ ենթահարցերը. արդյո՞ք ավանդական ընտանիքը որոշակի փոփոխություններ է կրել, արդյո՞ք ամուսնության մեջ չգտնվող, բայց միասին ապրող մարդիկ հանդիսանում են ընտանիք:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 15 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Հարց 3.

Այս հարցը միտված է օգնելու աշակերտներին հասկանալ ամուսնանալու որոշում կայացնելու կարևորությունը և այն գործոնների ու հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել այդպիսի որոշում կայացնելիս: Դասարանը կարող է բաժանվել մի քանի խմբի, որոնցից յուրաքանչյուրի անդամները պետք է գնահատեն վերոնշյալ գործոնները՝ ըստ դրանց կարևորության աստիճանի: Յուրաքանչյուր խմբի համար ընտրվում է զեկուցող, ով ներկայացնում է խմբի անդամների ամփոփ կարծիքը գրատախտակի վրա:

Հարց 4.

Սույն վարժությունը կօգնի աշակերտներին անդրադառնալ այն հարցերին, որոնք կարող ենք քննարկվել ամուսնանալուց առաջ: Դրանց շարքին կարող են դասվել հետևյալները. որտե՞ղ պետք է ապրի զույգը, արդյո՞ք վաստակած գումարը կբավարարի ընտանիքի ծախսերը հոգալու համար, քանի՞ երեխա է պատրաստվում ունենալ զույգը և այլն:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 10 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր**՝ 30 րոպե

Հարց 5.

Ամուսնանալ պատրաստվող զույգի միջև դերախաղի ընթացքում կարող են քննարկվել վերոնշյալ հարցերը:

5.1.1 Ո՞վ կարող է ամուսնանալ, ամուսնության իրականացման կարգը

Այս վարժության նպատակն է օգնել աշակերտներին՝ հասկանալու և յուրացնելու այն հարցի պատասխանը, թե ու՞մ միջև ամուսնությունն է օրենքով արգելված, ինչպես նաև մտածելու ամուսնության համար սահմանված տարիքային սահմանափակումների շուրջ:

Հարց 1.

Այս հարցի պատասխանը առկա է դասագրքի տեքստում:

Հարց 2.

Մհերը և Շաքեն չեն կարող ամուսնանալ նույնիսկ այն դեպքում, երբ առկա է նրանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, քանի որ Շաքեն 16 տարեկան է, իսկ անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է: Այս դեպքում այս կանոնը պահպանված չէ:

Հարց 3.

Գոյություն ունի ամուսնական նվազագույն տարիքի սահմանման երկու հիմնական պատճառ.

1) Ամուսնությունը ներառում է այնպիսի իրավական և ֆինանսական պարտականություններ, որոնց համար անչափահասը չի կարող պատասխանատու լինել,
2) Ամուսնությունը լուրջ քայլ է, որը պահանջում է որոշակի աստիճանի հասունություն և կայացվածություն, որոնք հատուկ են միայն չափահաս անձանց:

Աշակերտները այս հարցի քննարկման շրջանակներում պետք է անդրադառնան ամուսնական նվազագույն տարիք սահմանելու անհրաժեշտության և օրենքով սահմանված տարիքի հնարավոր փոփոխությանը:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 15 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Հարց 4. *Այս վարժության նպատակն է ստուգել, թե արդյոք աշակերտները հասկանում են, թե ե՞րբ է ամուսնությունը վավեր:*

1) Այս ամուսնությունը վավեր է, քանի որ առկա է Շաքեի ծնողների համաձայնությունը և մյուս կողմը՝ Միերը 18 տարեկան է:
2) Այս ամուսնությունը վավեր է, քանի որ 18 տարեկան անձանց ամուսնության դեպքում նրանց ծնողների համաձայնությունը չի պահանջվում:
3) Այս ամուսնությունն անվավեր է, քանի որ օրենքը արգելում է մերձավոր ազգականների միջև ամուսնությունը:
4) Այս ամուսնությունը անվավեր է, քանի որ Շաքեն ամուսնացել է իր կամքին հակառակ:
5) Այս ամուսնությունն անվավեր է, քանի որ Շաքեն արդեն իսկ գտնվում էր ամուսնության մեջ:

5.2 Ամուսինների անձնական իրավունքները և պարտականությունները

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները կկարողանան հասկանալ ամուսնության հետևանքները, բացատրել ամուսիններից յուրաքանչյուրի դերն ընտանիքում ներկայացնել ամուսինների համատեղ սեփականության նշանակությունը:

Գնահատման չափորոշիչներ

1. Աջակցելու, ներառյալ ընտանիքի պահանջմունքների բավարարմանն ուղղված գումարներ տրամադրելու պարտականության ներկայացումը
2. Ընտանիքում ամուսիններից յուրաքանչյուրի դերի ընկալում
3. Ամուսինների համատեղ սեփականության հասկացության ընկալում
4. Որոշակի փաստերի համակցության վերլուծություն և որոշման կայացում ամուսնալուծության արդյունքում բաժանման ենթակա գույքի վերաբերյալ

Սույն վարժության նպատակն է օգնել աշակերտներին վեր հանել ընտանիքում կնոջ և ամուսնու դերը, նրանցից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները:

Այս վարժության շրջանակներում կարող են քննարկվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպե՞ս է արտահայտվում ամուսինների՝ միմյանց աջակցելու պարտականությունը, արդյո՞ք կան որոշակի պարտականություններ, որոնք դրված են կնոջ վրա և որոշակի պարտականություններ, որոնք դրված են ամուսնու վրա և այլն:

Այս բաժնում ներկայացված հարցերի քննարկումը կարող է իրականացվել ինչպես խմբային քննարկումների, այնպես էլ աշակերտներից յուրաքանչյուրի կարծիքի անհատական հարցման միջոցով: Դասավանդողը կարող է կարծիքների վերաբերյալ գրառումներ կատարել գրատախտակի վրա և անցկացնել արդյունքների քննարկումներ:

Այստեղ չկան ճիշտ պատասխաններ, սակայն որոշ կարծիքներ կարող են լինել ավելի տարածված, քան մյուսները: Բոլոր դեպքերում, դասավանդողը պետք է խրախուսի աշակերտներին պատճառաբանել իրենց պատասխանները:

Խմբային քննարկում կամ կարծիքի հարցում՝ 15 րոպե Զեկուցում՝ 20 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

5.3 Ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները

Այս մասի խնդիրների նպատակն է օգնել աշակերտներին հասկանալ օրենքով սահմանված կարգով ամուսնացած անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև իմանալ այն հարցերը, որոնց լուծման համար անհրաժեշտ է ամուսիններից երկուսի համաձայնությունը, կարողանալ անցած նյութի հիման վրա պատասխանել ամուսնալուծության դեպքում գույքի բաժանման հետ կապված հարցերին:

Խնդիր 1.

Այս խնդրի շրջանակներում դասավանդողը կարող է կազմակերպել խմբային քննարկումներ ներկայացված հարցերի պատասխանները վեր հանելու համար: Աշակերտները պետք է կարողանան ասել, թե ո՞ր դեպքերում է պահանջվում ամուսնու համաձայնությունը, իսկ ո՞ր հարցերի դեպքում այն չի պահանջվում: Օրինակ՝

գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու համար ամուսնու համաձայնությունը չի պահանջվում, մինչդեռ ընդհանուր համատեղ գույքի վաճառքի համար այն պարտադիր է:

Խմբային քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 20 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 40 րոպե

Խնդիր 2.

Այս խնդրի շրջանակներում աշակերտները պետք է կարողանան ներկայացված փաստերի համակցության վերլուծության արդյունքում որոշում կայացնել ամուսնալուծության արդյունքում գույքի բաժանման վերաբերյալ: Քանի որ ամուսնությունը չի ստացել պետական գրանցում, այլ տեղի է ունեցել միայն Հայ առաքելական եկեղեցու արարողակարգի հիման վրա, ապա համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույքը չի հանդիսանում համատեղ սեփականություն, հետևաբար, ավտոմեքենան և հողատարածքը ենթակա չեն բաժանման: Իսկ նվեր ստացած ոսկյա զարդերը հանդիսանում են անձնական սեփականություն և ենթակա չեն բաժանման:

Այս խնդրի շրջանակներում դասավանդողը պետք է ընտրի դերակատար աշակերտներ, անցկացնի դերախաղ՝ ստանալով խնդրում ներկայացված հարցերի պատասխանները: Դերախաղից հետո անհրաժեշտ է անցկացնել ընդհանուր քննարկում հարցերի պատասխանների վերաբերյալ:

Խնդիր 3.

Այս խնդրի շրջանակներում դասավանդողը պետք է կազմակերպի խմբային քննարկումներ բարձրացված հարցերի վերաբերյալ: Յուրաքանչյուր խմբի քննարկման արդյունքների վերաբերյալ ներկայացվում է զեկուցում տվյալ խմբի անդամներից մեկի կողմից: Բոլոր զեկուցումներից հետո դասավանդողը պետք է կազմակերպի ընդհանուր քննարկում արդյունքների վերաբերյալ:

Խմբային քննարկում՝ 15 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 40 րոպե

5.4 Ծնողների և զավակների միջև փոխհարաբերությունները

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները կկարողանան՝
1. հասկանալ ծնողների և երեխաների փոխհարաբերությունները

2. ընկալել “խնամքի կարիք ունեցող երեխա” հասկացությունը
3. ներկայացնել այն գործողությունները, որոնք անչափահասը կարող է կատարել ինքնուրույն, առանց ծնողների համաձայնության

Գնահատման չափորոշիչներ

1. Ծնողների և երեխաների իրավական պարտականությունների ներկայացում
2. “Խնամակալություն” և “հոգաբարձություն” հասկացությունների բացատրում
3. Որոշակի փաստական հանգամանքների ուսումնասիրություն ապահովելու համար իմացություն ծնողների և երեխաների միմյանց մասին հոգ տանելու փոխադարձ պարտականության մասին
5. Փաստական հանգամանքների ուսումնասիրություն և որոշման կայացում առ այն, թե երբ են ծնողները պատասխանատու իրենց երեխաների կողմից պատճառված վնասի համար
6. Փաստական հանգամանքների ուսումնասիրություն և որոշման կայացում առ այն, թե ինչ գործողություններ կարող են կատարել մինչև տասնչորս տարեկան անչափահասները ինքնուրույն, առանց ծնողների համաձայնության.
7. Փաստական հանգամանքների ուսումնասիրություն և որոշման կայացում առ այն, թե ինչ գործողություններ կարող են կատարել տասնչորսից տասնութ տարեկան անչափահասները ինքնուրույն, առանց ծնողների համաձայնության.

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է քննարկում կազմակերպել աշակերտների փոքր խմբերում այն հարցի շուրջ, թե արդյոք մարդկանց կարելի է ստիպել ամուսնանալ: Նրանք նաև պետք է քննարկեն ամուսնության մեջ չգտնվող մայրերի երեխաների իրավունքների մասին:

Աշակերտները, բնականաբար, կունենան տարբեր կարծիքներ այն մասին, թե արդյոք Մհերը պարտավոր է ամուսնանալ Շաքեի հետ: Նրանք պետք է հիմնավորեն իրենց կարծիքները:

Այնուամենայնիվ, որևէ մեկին իր կամքին հակառակ չի կարելի օրենքով պարտադրել ամուսնանալ. Հակառակ դեպքում այդ ամուսնությունը կհամարվի անվավեր: Մհերը պարտավոր կլինի հոգ տանել երեխայի մասին, եթե նա է երեխայի հայրը:

Խմբային քննարկում՝ 15 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե **Ընդհանուր՝** 40 րոպե

Խնդիր 2.

Այս խնդրի նպատակն է պարզել, թե արդյո՞ք աշակերտները հասկացել են ծնողների՝ երեխաների մասին հոգ տանելու պարտականության բովանդակությունը: Խնդրի բոլոր դրվագների հետ կապված դասավանդողը պետք է ընտրի դերակատար-աշակերտներ, ովքեր պետք է ներկայացնեն փաստարկներ և փորձեն օրենքի տեսանկյունից պաշտպանել իրենց տեսակետն ու շահերը:

5.5 Ծնողների պատասխանատվությունը երեխաների կողմից պատճառված վնասի համար

Այս վարժության նպատակն է պարզել, թե արդյոք աշակերտները հասկացել են, թե ծնողները, ե՞րբ են պատասխանատվություն կրում իրենց երեխաների կողմից պատճառված վնասի համար:

Դասավանդողը պետք է բաժանի աշակերտներին երեք խմբի և յուրաքանչյուրին հանձնարարի ներկայացված հարցերից մեկը: Խմբերից յուրաքանչյուրից ընտրվում են դերակատար-աշակերտներ կերպարներից յուրաքանչյուրի համար: Զեկուցումներից հետո իրականացվում է ամփոփում բարձրացված հարցերի վերաբերյալ:

Խմբային քննարկում՝ 15 րոպե Դերախաղ՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ամփոփում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

1. Նարեկը պատասխանատու է Միհերի մեքենային պատճառված վնասի համար: Նա մեղավոր է, քանի որ նրա անուշադրության պատճառով է առաջացել վնասը: Տիգրանը ընդամենը երեք տարեկան է և չի կարող պատասխանատվություն կրել իր գործողությունների արդյունքում պատճառված վնասի համար:
2. Նարեն պատասխանատու է Անիի գործողությունների հետևանքով Անահիտ տատիկին պատճառված վնասի համար, քանի որ Անին վնասը պատճառելիս կատարելիս է եղել Նարեի խնդրանքը:

5.6 Հոգ տանելու պարտականությունը

Այս խնդրի նպատակն է պարզել, թե արդյո՞ք աշակերտները հասկացել են ծնողների մասին հոգ տանելու պարտականության բովանդակությունն ու անհրաժեշտությունը:

1. Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին: Նրանք պարտավոր են ֆինանսապես օգնել իրենց ծնողներին:

Խմբային քննարկում՝ 15 րոպե Դերախաղ՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ամփոփում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

5.7 Երեխայից առանձին ապրող ծնողի և այլ ազգականների իրավունքները

Այս խնդրի նպատակն է պարզել, թե արդյո՞ք աշակերտները հասկացել են երեխայից առանձին ապրող ծնողի իրավունքների բովանդակությունը:

Դասավանդողը պետք է կազմակերպի խմբային քննարկումներ առաջադրված հարցերի վերաբերյալ: Քննարկումներից հետո յուրաքանչյուր խմբից ընտրված զեկուցողը ներկայացնում է խմբի կարծիքը: Այնուհետև դասավանդողը կազմակերպում է ընդհանուր քննարկում:

Խմբային քննարկում՝ 15 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 15 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

5.8 Ծնողական իրավունքներից զրկելը

Այս խնդրի նպատակն է աշակերտներին տեղեկացնել երեխաների նկատմամբ բռնության դեպքերում առկա խնդիրների և հնարավոր քայլերի վերաբերյալ:

1. Չնայած շատ դեպքերում մարդիկ ձեռնպահ են մնում այլ ընտանիքի ներքին հարցերին միջամտելուց, սակայն երեխաների նկատմամբ բռնությունը բավականին լուրջ հարց է և կարող է բացառություն կազմել: Աշակերտների կարծիքները կարող են կիսվել, ոմանք կարող ենք համաձայնվել, որ անհրաժեշտ է դիմել ոստիկանություն, ոմանք՝ ձեռնպահ մնալ դա անելուց:
2. Աշակերտները պետք է քննարկեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ արդյո՞ք ոստիկանությունը պետք է հարցաքննի ինչպես երեխային, այնպես էլ ծնողներին առանձին-առանձին, ի՞նչ գործողություններ պետք է իրականացնի ոստիկանությունը երեխայի իրավունքները պաշտպանելու համար:
3. Աշակերտները պետք է քննարկեն, թե դատարանը ի՞նչ որոշում կարող է կայացնել երեխայի շահերի պաշտպանության համար, ինչպես նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ծնողներին պատժելու կամ նրանց հոգեբանական օգնություն ցույց տալու խնդիրը:
4. Այս հարցի քննարկումը պետք է հանգեցնի ուսումնասիրության արդյունքների հետ տարակարծիք կամ համակարծիք լինելու հետ կապված փաստարկների և հիմնավորումների ներկայացմանը աշակերտների կողմից:

5.9 Որդեգրում (դստերագրում)

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները կկարողանան հասկանալ և բացատրել որդեգրման (դստերագրման) հետ կապված կանոնները:

Գնահատման չափորոշիչներ

1. Որդեգրման (դստերագրման) նշանակության ընկալումն ու ներկայացումը
2. Որդեգրման իրավունք ունեցող անձանց շրջանակի իմացություն
3. Որդեգրման իրավական հետևանքների ներկայացում
4. Որոշակի փաստերի պարագայում որդեգրման թույլատրելիության և դրա վերացման վերաբերյալ որոշման կայացում

Խնդիր 1.

Սույն խնդրի նպատակն է ցույց տալ աշակերտներին, թե երեխա որդեգրելիս ի՞նչ գործոններ են հաշվի առնվում: Այստեղ կարող են հաշվի առնվել այնպիսի գործոններ, ինչպիսիք են երեխայի կրոնական և մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն, էթնիկական ծագումը և այլն:

Խմբային քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր**՝ 30 րոպե

Խնդիր 2.

Այս խնդրի նպատակն է ցույց տալ, թե արդյո՞ք կարող է իր երեխայից հրաժարված մայրը ետ ստանալ իր երեխային նրան որդեգրած ծնողներից:

1. Նարեի փաստաբանը կարող է փաստարկել, որ Նարեն իր երեխայից հրաժարվելու պահին գտնվել է հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, ունեցել է ծանր ապրումներ, որ որդեգրումը չի բխում երեխայի շահերից, քանի որ Նարեն նրա մայրն է, որ Նարեն դատարան է դիմել կարճ ժամանակահատված հետո՝ երեք ամիս անց, և երեխան որդեգրողների հետ ապրել է շատ կարճ:

2. Որդեգրող զույգի փաստաբանը կարող է փաստարկել, որ Նարեն միայնակ մայր է, հետևաբար նա ի վիճակի չի լինի երեխայի մասին պատշաճ կերպով հոգ տանել, որ որդեգրողներն ի վիճակի են երեխայի համար ապահովել լիարժեք ընտանիք, որ նրանք երեք ամիս հոգ են տարել երեխայի մասին և նա ընդունում է նրանց որպես ծնողներ, հետևաբար հուզական ծանր ապրումներ կունենա նրանից բաժանվելիս:

3. Որպես դատավոր, աշակերտները կարող են որոշում կայացնել, թե վերոնշյալ փաստարկներից, որոնք են ավելի համոզիչ:

5.10 Ամուսնալուծություն և ալիմենտային պարտավորություններ

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութը յուրացնելու հետո աշակերտները կկարողանան հասկանալ ամուսնալուծության վերաբերյալ կանոնները և ամուսնալուծության հետևանքները:

Գնահատման չափորոշիչներ

1.Ամուսնալուծության պատճառների ընկալում
2. Ամուսնալուծության կարգի ներկայացում
3. Որոշակի իրավիճակներում որոշման կայացում ամուսնալուծության վերաբերյալ
4.Ամուսնալուծության հետևանքների և դրա ժամանակ քննարկվող հարցերի ներկայացում
5. Ալիմենտի նշանակության ընկալումը
6. Ալիմենտային պարտավորությունների վերաբերյալ կանոնների իմացություն:

Այս վարժության նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ քննարկելու, թե ի՞նչ կարող է անել պետությունը՝ ամուսնալուծությունների քանակը նվազեցնելու համար:

Հարց 1.

Որպես պետության կողմից ամուսնալուծվելու համար ավելի բարդ ընթացակարգ սահմանելու կողմ փաստարկ կարող են նշվել հետևյալները. ամուսնությունը լուրջ հարաբերություն է, որը չպետք է վերջանա այդքան հեշտությամբ, հաշտության համար նախատեսվող ժամանակահատվածը և խորհրդատվությունը կարող են նվազեցնել ամուսնալուծությունների քանակը:

Որպես ամուսնալուծության ընթացակարգի բարդացման դեմ փաստարկ կարող են նշվել հետևյալ փաստարկները. ամուսնությունը մասնավոր հարաբերություն է երկու անձանց միջև և պետությունը չի կարող անիրավաչափ ձևով միջամտել կամ բարդացնել այն, և եթե ամուսինները որոշում են, որ իրենց ամուսնությունը պետք է դադարի, ապա նրանք չպետք է ստիպված լինեն անցնել լրացուցիչ հուզական լարվածության միջոցով:

Խմբային քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

Խնդիր 1

Այս խնդրի նպատակն է հնարավորություն տալ աշակերտներին հասկանալ, թե դատարանները, երբ են համարում ամուսնությունը լուծված:

Դասավանդողը պետք է դասարանում ձևավորի երկու խումբ՝ խնդրում ներկայացված դեպքերից յուրաքանչյուրի քննարկման համար: Խմբերից յուրաքանչյուրն ընտրում է զեկուցող, ով ներկայացնում է խմբի կարծիքը: Անհրաժեշտ է կազմակերպել ընդհանուր քննարկում կարծիքներից յուրաքանչյուրի վերաբերյալ:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 15 րոպե Զեկուցում՝ 15 րոպե

Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե Ընդհանուր՝ 45 րոպե

5.10.1 Երեխայի խնամքը և երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է օգնել աշակերտներին հասկանալ, թե դատարանը ի՞նչ գործոններ է հաշվի առնում երեխաների խնամքի հարցը լուծելիս:

Այդ գործոնների շարքին կարող են դասվել երեխաների տարիքը, նրանց կարծիքը՝ կախված նրանց տարիքից, երեխաների շահերի պաշտպանվածությունը և այլն:

Խնդիր 2.

Այս խնդրի նպատակն է հնարավորություն տալ աշակերտներին կիրառել ձեռք բերած գիտելիքները ալիմենտի չափի վերաբերյալ և որպես դատավոր որոշում կայացնել դրա բռնագանձման չափի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Սույն բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները կկարողանան հասկանալ անձի մահվան հետ կապված նրա գույքի ժառանգման վերաբերյալ իրավական կանոնները:

Գնահատման չափորոշիչներ

1. Ժառանգության և դրա բացման ժամանակի ու վայրի վերաբերյալ կանոնների իմացություն
2. “Ժառանգատու” և “ժառանգ” հասկացությունների բացատրություն
3. Ըստ օրենքի ժառանգության առանձնահատկությունների ներկայացում
4. Ըստ կտակի ժառանգության առանձնահատկությունների ներկայացում

6.1 Ժառանգությունն ըստ կտակի

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ հասկանալ կտակին ներկայացվող պահանջները և դրանք չպահպանելու հետևանքները:

Նահապետ պապի կտակը օրենքով սահմանված կարգով չի վավերացվել նոտարի կողմից, հետևաբար այն չի կարող իրավական ուժ ունենալ և առաջացնել իրավական հետևանքներ:

Խնդիր 2.

Այս խնդրի նպատակն է ստուգել աշակերտների կողմից ժառանգների վերաբերյալ ստացած գիտելիքների յուրացման աստիճանը:

Նարեկի մահից հետո ծնված Անին ևս համարվում է Նարեկի ժառանգ, քանի որ ժառանգ կարող է լինել ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված երեխան:

6.2 Ժառանգությունն ըստ օրենքի

Այս խնդրի նպատակն է պարզել, թե որքանո՞վ են աշակերտները հասկացել և յուրացրել ըստ օրենքի ժառանգության առանձնահատկությունները: Այն հնարավորություն է տալիս կիրառել ստացած գիտելիքը:

Դասավանդողը պետք է դասարանը բաժանի խմբերի և կազմակերպի խմբային քննարկումներ խնդրում բարձրացված հարցերի վերաբերյալ: Այնուհետև, յուրաքանչյուր խմբից ընտրված զեկուցող ներկայացնում է տվյալ խմբի պատասխաններն առաջադրված հարցերի վերաբերյալ: Զեկուցումներից հետո դասավանդողը պետք է կազմակերպի ընդհանուր քննարկում:

Ըստ օրենքի Նարեկի ժառանգներ են համարվում նրա կինը, երեխաները և ծնողները: Նրանք Նարեկի գույքը ժառանգում են հավասար բաժիններով, եթե Նարեկը իր գույքը ձեռք է բերել ամուսնությունից առաջ: Եթե գույքը ձեռք է բերվել ամուսնությունից հետո, ապա ժառանգական գույքի կեսը պատկանում է կնոջը, որպես համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք, իսկ մյուս կեսը բաշխվում է բոլոր ժառանգների միջև՝ հավասար չափաբաժիններով:

Խնդրի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 15 րոպե Զեկուցում՝15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե Ընդհանուր՝ 45 րոպե

6.3 Ժառանգությունն ընդունելն ու դրանից հրաժարվելը

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է պրակտիկ օրինակի հիման վրա օգնել աշակերտներին յուրացնել ժառանգության ընդունման վերաբերյալ օրենքով սահմանված կանոնները:

Եթե ժառանգը ժառանգության ընդունման մասին դիմում չի ներկայացնում նոտար, սակայն փաստացի տիրապետում է այն, տվյալ դեպքում՝ ժառանգը շարունակում է ապրել իր հայրական տանը, ապա այս դեպքում ևս ժառանգությունը համարվում է ընդունված: Հետևաբար, դա չի կարող հիմք հանդիսանալ ժառանգությունից զրկելու համար:

Խնդիր 2.

Այս խնդրի նպատակն է պարզել աշակերտների կողմից՝ ըստ օրենքի ժառանգության վերաբերյալ կանոնների յուրացումը:

Նարեկի ժառանգները ժառանգություն են ստանալու հավասար չափաբաժիններով, քանի որ հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը հանդիսանում են իրավահավասար ժառանգներ:

Խմբային քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր՝** 30 րոպե

ԳԼՈՒԽ 7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

7.1 Աշխատանքի դիմելու և ընդունվելու կարգը

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կկարողանան հասկանալ, թե ինչ է անհրաժեշտ աշխատանքի ընդունվելու համար, ինչ երաշխիքներ են սահմանված օրենքով, ինչպես պետք է պատրաստվել հարցազրույցին:

Արդյո՞ք աշխատանքի ընդունելության հայտարարությունները խտրական են:

Առաջադրանքի ներկայացում՝ 5 րոպե Խմբի ներսում քննարկում՝ 10 րոպե Ձեկուցում՝25 րոպե Ընդհանուր քննարկում՝5 րոպե **Ընդհանուր՝** 45 րոպե

Այս առաջադրանքի նպատակն է աշակերտներին ցույց տալ, թե որոնք են աշխատանքի ընդունելության խտրական հայտարարությունները:

1) Այս հայտարարությունը խտրական է, քանի որ հիմնված է սեռական, ինչպես նաև տարիքային խտրականության վրա: Նման հայտարարությունը ընդունելի կլիներ, եթե դա պահանջվող աշխատանքի բնույթից ելնելով լիներ անհրաժեշտ պայման:
2) Այս պահանջը ընդունելի է, քանի որ աշխատանքային փորձը կարևոր պայմաններից է աշխատանքի ընդունելության համար:
3) Նման հայտարարությունը խտրական է թվում՝ հիմնված լեզվական խտրականության վրա: Սակայն եթե աշխատանքի բնույթն այնպիսին է, որ ռուսերենի իմացությունը պարտադիր պայման է, քանի որ օրինակ այդ կազմակերպության հաճախորդները ռուսախոսներն են, ապա այս հայտարարությունը խտրական չէ:

7.2 Հարցազրույց

Այս առաջադրանքի նպատակն է աշակերտներին տալ աշխատանքի ընդունվելու համար հարցազրույցի որոշ հմտություններ:

Անհրաժեշտ է կազմակերպել դերախաղ, որտեղ աշակերտները կքննարկեն արդյոք հարցերը պատշաճ են, թե ոչ: Ավելի արդյունավետ է աշակերտներին բաժանել 4-5 հոգուց բաղկացած խմբերի, որտեղ մեկը հանդես կգա գործատու, իսկ մյուսը՝ որպես դիմող: Մնացածները ուշադիր կլսեն հարցերի ու պատասխանների բնույթը և վերջում կարտահայտեն իրենց կարծիքները և հնարավոր տարբերակները:

1. Պատշաճ է
2. Այդքան էլ տեղին չէ հարցնել դիմողի տարիքը, եթե իհարկե տարիքը աշխատանքի ընդունվելու պարտադիր պայման չէ, այլ պարզապես կարելի է հարցնել, թե քանի տարվա աշխատանքային փորձ ունի:

3. Կարող է դիտվել որպես խտրականություն՝ հիմնված ընտանեկան կարգավիճակի վրա: Եթե Շաքեն դրական պատասխան տար և այդ հիմքով չընդունվեր աշխատանքի, դա միանշանակ կլիներ խտրական վերաբերմունք:
4. Անձնական բնույթի հարց է, աշխատանքի հետ չառնչվող
5. Պատշաճ չէ
6. Խտրական է՝ հիմնված ազգային պատկանելության վրա
7. Ավելի տեղին է հարցնել, թե արդյոք դիմողը ունի դատվածություն, քանի որ ձերբակալված լինելը կարող էր անօրինական լինել:
8. Խտրական է՝ ելնելով կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից:
9. Ոչ անհրաժեշտ և ոչ տեղին հարց է:
10. Կախված աշխատանքի բնույթից՝ այս հարցը կարող է դիտվել որպես պատշաճ:

7.3 Աշխատանքային պայմանագիր

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները ավելի մանրամասն կհասկանան օրենքի այն դրույթները, որոնք կարգավորում են աշխատանքային պայմանագրին վերաբերող հարցերը:

Առաջադրանքի ներկայացում՝ 5 րոպե Քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 10 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր**՝ 30 րոպե

Անհրաժեշտ է աշակերտներին բաժանել երկու հոգուց բաղկացած խմբերի, վերջիններիս տալ ժամանակ, որպեսզի մտածեն,թե ինչ է անհրաժեշտ ներառել աշխատանքային պայմանագրում: Այնուհետև յուրաքանչյուր խումբ կներկայացնի կազմված աշխատանքային պայմանագիրը:

7.3.1 Աշխատանքային պայմանագրի կազմում

Առաջադրանքի նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ ինքնուրույն կազմել աշխատանքային պայմանագիր, ինչի արդյունքում ավելի ընկալելի կլինի, թե որ պայմաններն են պարտադիր ընդգրկել աշխատանքային պայմանագրում:

7.4 Աշխատողի սոցիալական երաշխիքները, աշխատաժամանակ, հանգստի իրավունք

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կսովորեն, թե օրենքը աշխատողներին ինչպիսի երաշխիքներ է տրամադրում, մասնավորապես՝ ինչքան է սահմանված նվազագույն աշխատավարձը, աշխատողների առավելագույն աշխատաժամանակը, ինչպես նաև աշխատողների հանգստի համար նախատեսված ժամկետները:

Անհրաժեշտ է աշակերտներին բաժանել 2 խմբի, որտեղ մի խումբը հանդես կգա որպես գործատուի ներկայացուցիչ և կփորձի արդարացնել գործատուի քայլերը, իսկ մյուս խումբը կփորձի պաշտպանել աշխատողի իրավունքները:

Առաջադրանքների նպատակն է աշակերտներին պրակտիկ օրինակով ցույց տալ, թե աշխատողները ինչ երաշխիքներից են օգտվում և ինչ կարող են անել, երբ գործատուների կողմից այդ երաշխիքները խախտվում են:

Խնդիր 1

Գործատուն, ըստ էության, խախտել է նվազագույն աշխատավարձի կանոնը՝ սահմանելով Շաքեի աշխատավարձը 35000 դրամ: Բացի այդ գործատուն չի ապահովվել իր աշխատողին անհրաժեշտ նվազագույն պարագաներով, որպեսզի Շաքեն կարողանա իր աշխատանքային պարտականությունները պատշաճորեն կատարել:

Շաքեն կարող է գրավոր ձևով դիմել գործատուին՝ պահանջելով, որ իրեն տրամադրեն անհրաժեշտ պարագաներ, իր աշխատավարձը բարձրացնեն, քանի որ օրենքով նվազագույն աշխատավարձ սահմանված է 50000 ՀՀ դրամ: Պահանջը պետք է, անպայման, ձևակերպվի գրավոր և խորհուրդ է տրվում, որ կրկնօրինակը Շաքեն պահի իր մոտ, որպեսզի գործատուի կողմից որևիցե քայլ չկատարելու դեպքում, հնարավորություն ունենա դատական կարգով պահանջել գործատուից:

Խնդիր 2

Ընկերության պատասխանը հիմնավոր չէ այնքանով, որքանով հակասում է ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, քանի որ վերջինս հստակորեն սահմանում է, որ ամենամյա նվազագույն արձակուրդը 20 աշխատանքային օր է, որը աշխատանքի առաջին տարվա համար տրամադրվում է տվյալ կազմակերպությունում անընդհատ աշխատանքի 6 ամիսը լրանալուց հետո:

7.5 Կարգապահական կանոններ

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կսովորեն կարգապահական կանոններ սահմանելու նպատակը, ինչպիսի հետևանքներ կարող են առաջանալ կարգապահական կանոնները խախտելու համար և որ դեպքում գործատուն իրավունք ունի նշանակել կարգապահական տույժեր:

Անհրաժեշտ է աշակերտներին բաժանել 2 խմբի, որտեղ մի խումբը հանդես կգա որպես գործատուի ներկայացուցիչ և կկազմի կարգապահական տույժը, իսկ մյուս խումբը կփորձի պաշտպանել աշխատողի իրավունքները

Խնդիր 1

Ընկերությունը բովանդակային տեսանկյունից ճիշտ է վարվել, քանի որ փաստացիորեն Նարեկը խախտել է ընկերությունում սահմանված կարգապահական կանոնը՝ ժամը 9:00-ին աշխատանքի ներկայանալու պարտականությունը: Սակայն Ընկերությունը պարտավոր էր մինչը կարգապահական տույժ նշանակելը աշխատողից

վերցնել բացատրագիր, ուստի իրավաչափ չէ: Բացի այդ կարգապահական տույժի տեսակի ընտրության ժամանակ պետք է հաշվի առներ խախտման ծանրությունը, դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման հանգամանքները (որը կարող էր արտացոլված լինել աշխատողի բացատրագրում) և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը, ինչը ևս չի պահպանվել գործատուի կողմից:

Խնդիր 2

Այստեղ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք Ընկերությունը ծանոթացրել է Նարեին կարգապահական կանոններին, քանի որ դա Ընկերության պարտականությունն է: Եթե Ընկերությունը չի ծանոթացրել կարգապահական կանոններին, ապա կարգապահական տույժի կիրառումը իրավաչափ չէ: Իսկ եթե օրինակ Ընկերությունը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով ծանոթացրել է Նարեին կարգապահական կանոններին, սակայն Նարեն պարզապես չի կարդացել կամ ուշադրություն չի դարձրել, ապա այս դեպքում Ընկերության գործողությունը իրավաչափ կարող է համարվել:

7.6 Տեղեկատվության գաղտնիությունը աշխատանքային հարաբերություններում

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կսովորեն, թե աշխատանքային հարաբերություններում որ տեղեկատվությունն է համարվում գաղտնի և որ դեպքերում է հնարավոր բացահայտել:

Խնդիր

1. Գործատուն աշխատողի անձնական տվյալները հայտնել է երրորդ անձին առանց աշխատողի համաձայնության, բացի այդ Շինարարական ընկերության տնօրենը հարցրել էր կարծիք, մինչդեռ Բանկի գործադիր տնօրենը խախտել է աշխատողի անձնական տվյալների պահպանման իր պարտականությունը
2. Տնօրենը կարող է տեսախցիկներ տեղադրել:
3. Նարեկը կարող է աշխատանքից ազատվել այդ հիմքով միայն այն դեպքում, երբ Ընկերության ներքին կարգապահական կանոններով նախատեսված է, որ սոց. Կայքերից օգտվելը աշխատանքային ժամերի անթույլատրելի է: Սակայն այս դեպքում էլ աշխատանքից ազատումը հնարավոր է, երբ այն նախատեսվել է կարգապահական տույժի տեսքով և պահպանվել են կարգապահական տույժ նշանակելու ընթացակարգը:
4. Անհրաժեշտ նախ իմանալ, թե արդյոք նման տեղեկատվությունը համարվում է ծառայողական գաղտնիք, այսինքն՝ արդյո՞ք այն ունի առևտրային արժեք և արդյոք գործատուն միջոցներ ձեռնարկել է այն գաղտնի պահելու ուղղությամբ:

7.7 Աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները պատկերացում կկազմեն, թե որ դեպքերում է հնարավոր աշխատանքային պայմանագրի լուծումը, ինչ իրավունքներ ունեն աշխատողները և ինչ կարող են անել, եթե պայմանագիրը լուծվել է անհիմն կերպով:

Անհրաժեշտ է աշակերտներին բաժանել 2 խմբի, որտեղ մի խումբը հանդես կգա որպես գործատուի ներկայացուցիչ և կհիմնավորի աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը, իսկ մյուս խումբը կփորձի պաշտպանել աշխատողի շահերը:

Խնդիր 1

Այս դեպքը կարող է դիտվել, որ ընկերության արտադրության ծավալները փոփոխվել են, ինչի արդյունքում համապատասխան ստորաբաժանումը լուծարվել է: Սակայն այդ հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար ընկերությունը, իր մոտ համապատասխան հնարավորությունների առկայության դեպքում, նախ Նարեկին պետք է առաջարկի նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, և եթե Նարեկը մերժի, նոր միայն ընկերությունը կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:

Խնդիր 2

Աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է պայմանագրի լուծումը կենսաթոշակի տարիքի հասնելու հիմքով:

Խնդիր 3

Աշխատանքային օրենսգիրքը արգելում է գործատուի նախաձեռնությամբ հղի կանանց հետ աշխատանքային պայմանագրի լուծումը: Նարեն կարող է դատական կարգով վիճարկել և վերականգնվել աշխատանքի: Ինչ վերաբերում է Նարեի կողմից անհարգելի բացակայություններին, ապա գործատուն կարող էր պարզապես կարգապահական տույժ նշանակել:

7.8 Աշխատանքային վեճերը և դրանց լուծման կարգը

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կծանոթանան, թե ինչ է անհրաժեշտ անել, երբ ծագում է աշխատանքային վեճ և ինչ կարգով է հնարավոր լուծել:

Խնդիր 1.

Աշխատողի առողջությանը աշխատանքային պարտականությունները կատարելիս պատճառվել է վնաս: Շաքեն կարող է դիմել դատարան ընդդեմ գործատուի վնասի հատուցման պահանջով:

ԳԼՈՒԽ 8. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

8.1 Սպառողների իրավունքների էությունը

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կսովորեն, թե ինչ իրավունքներից են օգտվում սպառողները և ինչ կարելի է անել, երբ սպառողների իրավունքները խախտվում են:

1. Որպես սպառող կարող եք փչացած կաթնամթերքը վերադարձնել խանութին՝ պահանջելով Ձեր գումարը կամ փոխել կաթնամթերքը: Դրա համար անհրաժեշտ է ներկայացնել գնումը հաստատող չեկը:
2. Քանի որ խանութը խուսափում է պատասխանատվությունից, կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների:
3. Դուք կարող եք գործակալությունից պահանջել Ձեր գումարը, քանի որ գործակալությունը իր պարտավորությունները պատշաճ չի կատարել, բացի այդ կարող եք նաև պահանջել վնասների հատուցում, եթե այդպիսիք առկա են:

8.2 Պայմանագրի հասկացությունը և կնքման կարգը

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կսովորեն, թե ինչ է իրենից ներկայացնում պայմանագիրը և ինչպես կարելի կնքել պայմանագիր:

Քննարկել արդյո՞ք ներքոնշյալ դեպքերում պայմանագիրը կնքվել է, թե ոչ: Հիմնավորել պատասխանը.

1. Շաքեի և հարևանի միջև կնքվել է պայմանագիր, քանի որ Շաքեի առաջարկը հարևանը ընդունել է իր փոխադարձ գործողություններով՝ գումարը տալով:
2. Մեկի կնքած պայմանագիրը կարող է համարվել վավեր, եթե վերջինիս ծնողները գրավոր հավանություն տան, հակառակ դեպքում ծնողները կարող են դատական կարգով պահանջել, որպեսզի այդ պայմանագիրը անվավեր համարվի:
3. Նարեկի և հարևանի միջև պայմանագիրը բացակայում է, քանի որ կողմերի միջև համաձայնություն չկա պայմանագրի էական պայմանների շուրջ (տվյալ պարագայում՝ առարկա և գին):
4. Նահապետի և հարևանի միջև բացակայում է պայմանագիրը, քանի որ, թեև Նահապետը խոստացել էր, դա իրավական ուժ չունի, քանի որ Սամվելի օֆերտային ակցեպտը պետք է լինի գրավոր ձևով:

8.3 Առուվաճառքի պայմանագիր

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները կսովորեն, թե ինչպիսի իրավունքներից են օգտվում սպառողները առուվաճառքի պայմանագիր կնքելիս:

Անհրաժեշտ է կազմակերպել դերախաղ՝ աշակերտներին բաժանելով 2 խմբի, որտեղ մի խումբը հանդես կգա որպես վաճառող, իսկ մյուս խումբը՝ սպառող:

1. Այստեղ նախ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հեծանիվը ի սկզբանե ունեցել է ազդանշան,թե ոչ: Եթե այո և այն չի աշխատել, ապա Շաքեն կարող է պահանջել փոխարինել պատշաճ որակի ապրանքով կամ իջեցնել գինը կամ վերացնել թերությունները կամ հատուցել իր կողմից կատարած ողջամիտ ծախսերը թերությունները վերացնելու համար կամ վերադարձնի հեծանիվը և պահանջի իր վճարած գումարը: Այն դեպքում, եթե ի սկզբանե հեծանիվը ազդանշանային համակարգ չի ունեցել:
2. Մհերը կարող է 14 օրվա ընթացքում փոխարինել հագուստը, իսկ եթե նմանօրինակ ապրանք բացակայում է, կարող է այն վերադարձնել: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի հագուստը օգտագործված չլինի և պահպանված լինեն գնման չեկերը:
3. Անահիտը պարտավոր էր հարևանին հայտնել առկա թերության մասին: Արմենը իրավունք ունի պահանջելու, որպեսզի Անահիտը կրի վերանորոգման ծախսերը:
4. Վաճառողը պարտավոր է ստույգ տեղեկություններ հայտնել ապրանքի վերաբերյալ: Այս դեպքում վաճառողը սխալ տեղեկատվություն է հաղորդել Նարեին, ինչի արդյունքում հագուստը փչացել է: Նարեն այս պարագայում կարող է վերադարձնել ապրանքը և հետ ստանալ իր գումարը կամ տվյալ դեպքում, եթե հնարավոր է վերացնել թերությունները, ապա պահանջել վերացնել թերությունները:
5. Այս դեպքում առկա է արտադրական թերություն, որի պարագայում օրենքը թույլ է տալիս սպառողին պահանջ ներկայացնել արտադրողին երաշխիքային ժամկետի ավարտից հետո: Նարեկը կարող է արտադրողից պահանջել անհատույց վերացնելու թերությունները և եթե նման պահանջը ներկայացնելուց հետո 20 օրվա ընթացքում, արտադրողը չի վերացնում թերությունները, ապա Նարեկը կարող է վերադարձնել հեռուստացույցը և պահանջել վճարած գումարը:

8.4 Վարկային հարաբերություններում սպառողների շահերի պաշտպանությունը

Այս բաժնի ավարտից հետո աշակերտները պատկերացում կկազմեն, թե ինչ է իրենից ներկայացնում վարկը և ինչպիսի իրավունքներ և պարտականություններ ունեն սպառողները վարկային հարաբերություններում:

Խնդիր 1

Գրավատան աշխատակցի պատասխանը անհիմն է, քանի որ վարկի վաղաժամ մարումը սպառողի իրավունքն է անկախ այն հանգամանքից, թե պայմանագրով ինչ է նախատեսված:

Խնդիր 2

Բանկը պարտավոր էր փոփոխության մասին փոստով տեղեկացնել Նահապետին: Այս դեպքում Նահապետը կարող է պահանջել, որպեսզի նոր տոկոսագումարը չհաշվարկվի այն ժամանակահատվածի համար, երբ Նահապետը չի իմացել այդ փոփոխության մասին:

8.5 Անբարեխիղճ գովազդ

Խնդիր 1

Գովազդը անբարեխիղճ է, քանի որ վերջինս մոլորեցրել է սպառողներին ապրանքի որակի, հատկությունների մասին : Սպառողները կարող են դիմել Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով, որը համապատասխան միջոցներ կձեռնարկի ընկերության դեմ :

Խնդիր 2

Ընդհանուր կանոնի համաձայն՝ գովազդը և անձանց անորոշ շրջանակին հասցեագրված առաջարկները համարվում են օֆերտա անելու հրավեր, եթե այլ բան նախատեսված չէ առաջարկում: Սակայն, եթե գովազդը պարունակում է պայմանագրի էական պայմանները, ապա նման առաջարկը համարվում է հրապարակային օֆերտա: Անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք տվյալ իրավիճակում գովազդը պարունակում էր բոլոր էական պայմանները:

Գովազդը կարող է անբարեխիղճ համարվել, քանի որ, ըստ էության, մոլորեցնում է սպառողներին: Նարեն իր շահերի պաշտպանության համար կարող է դիմել Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին:

ԳԼՈՒԽ 9. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

9.1 Ժողովրդի իշխանության իրականացման ձևերը

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Սույն բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները պատկերացում կկազմեն ժողովրդին պատկանող իշխանության իրականացման ձևերի, ընտրությունների միջոցով ձևավորվող ինստիտուտների մասին:

Գնահատման չափորոշիչներ

1. Որոնք են ժողովրդին պատկանող իշխանության իրականացման ձևերը
2. Ընտրությունների միջոցով ձևավորվող ինստիտուտների ներկայացում
3. Ընտրական իրավունքի՝ որպես քաղաքական իրավունքի էության բացահայտում

Ներկայացված խնդիրների նպատակն է այս բաժնի տեսական նյութն ամրապնդել և կիրառել օրինակներում:

Խնդիր 1.

Այս խնդրի շրջանակներում պետք է քննարկել ընտրությունների միջոցով ձևավորվող ինստիտուտները, շեշտադրել դրանց կազմավորման առանձնահատկությունները:

Խնդիր 2.

Սույն խնդրի նպատակն է անդրադառնալ ընտրությունների միջոցով ձևավորվող ինստիտուտներին, հստակեցնել վարչապետի նշանակման ընթացակարգը: Աշակերտները կարող են ներկայացնել իրենց կարծիքները, կարելի է համատեղ քննարկում կազմակերպել, ընդգծել, որ վարչապետին նշանակում է ՀՀ Նախագահը Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին:

Խնդիր 3.

Այս խնդրի նպատակն է առանձնացնել տեղական ինքնակառավարման մարմիններին, հստակեցնել դրանց ձևավորման առանձնահատկությունները:

9.2 Ընտրությունների տեսակները և պարբերականությունը

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Սույն բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները պատկերացում կկազմեն ընտրությունների տեսակների, իշխանության ընտրովի մարմինների լիազորությունների ժամկետների մասին:

Գնահատման չափորոշիչներ

1. Ընտրությունների տեսակների ներկայացում
2. Ընտրությունների պարբերականության ներկայացում և հիմնավորում

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է պարզել, թե որքանո՞վ են աշակերտները հասկացել և յուրացրել ընտրությունների տեսակները: Այն հնարավորություն է տալիս կիրառել ստացած գիտելիքը:

Խնդիր 2.

Այս խնդիրը ևս ուղղված է ընտրությունների տեսակների հետ կապված աշակերտների գիտելիքների ստուգմանը և ամրապնդմանը:

Խնդիր 3.

Այս խնդիրը հնարավորություն է տալիս քննարկել նույն պաշտոնում անձի հետագա պաշտոնավարման հնարավորությունը, Նախագահի պաշտոնը կրկին անգամ ստանձնելու կարգը և առանձնահատկությունները:

Նյութի ներկայացում՝ 10 րոպե Քննարկում՝ 5 րոպե Խնդիրների քննարկում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե Ընդհանուր՝ 40 րոպե

9.3 Հանրաքվե

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Սույն բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները պատկերացում կկազմեն հանրաքվեի, դա տեսակների, հանրաքվեի անցկացման կարգի, հանրաքվեի դրվող հարցերի շրջանակի, հանրաքվեի անցկացումը բացառող հանգամանքների վերաբերյալ:

Գնահատման չափորոշիչներ

1.Հանրաքվեի՝ որպես ժողովրդին պատկանող իշխանության իրականացման անմիջական ձևի բովանդակության ներկայացում
2. Հանրաքվեի անցկացման կարգի ներկայացում
3. Հարցերի այն շրջանակի ներկայացում, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի
4. Հանրաքվեի անցկացումը բացառող հանգամանքների ներկայացում և հիմնավորում

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է աշակերտների մոտ ամրապնդել հանրաքվեի անցկացման կարգի հետ կապված առանձնահատկությունները: Անհրաժեշտ է ընդգծել, որ հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնության առաջարկով կամ համաձայնությամբ: Ընդ որում, եթե նախաձեռնությունը գալիս է Նախագահից, ապա առաջարկված փոփոխությանը պետք է համաձայնություն տա Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Խնդիր 2.

Այս խնդրի շրջանակներում պետք է քննարկել կառավարության նախաձեռնությամբ հանրաքվեի անցկացման առանձնահատկությունները և կարգը: Պետք է ընդգծել, որ հանրաքվե նշանակելու մասին կառավարության որոշման մեջ նշվում են այն հարցերը, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է բացահայտել հասարակական կարծիքը: Պետության արտաքին քաղաքականությանը, ռազմական և ազգային անվտանգությանն առնչվող հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու համար հանրաքվե անցկացնելու անհրաժեշտությունը և հանրաքվեի դրվող հարցերը նախապես քննարկվում են Հանրապետության Նախագահի հետ:

Խնդիր 3.

Այս խնդրի նպատակն է բացահայտել, արդյոք աշակերտները ընկալել են այն, թե երբ է հանրաքվեի դրված նախագիծը համարվում ընդունված:

Խնդիր 4.

Այս խնդրի շրջանակներում աշակերտները պետք է ներկայացնեն այն հարցերի շրջանակը, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի: Այստեղ կարելի է քննարկում կազմակերպել, արդյոք օրենսդրությամբ սահմանված այս հարցերի շրջանակը կարելի է ընդլայնել, թե՝ ոչ, աշակերտները ներկայացնեն իրենց տեսակետները, հիմնավորեն դրանք:

Խնդիր 5.

Այս խնդրի նպատակն է աշակերտների մոտ ամրապնդել գիտելիքներն առ այն, թե որոնք են հանրաքվեի անցկացումը բացառող հանգամանքները, ներկայացնեն իրենց սեփական առաջարկները՝ հիմնավորելով դրանք:

Նյութի ներկայացում՝ 10 րոպե Քննարկում՝ 5 րոպե Խնդիրների քննարկում՝ 10 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե Ընդհանուր՝ 30 րոպե

9.4 Ընտրելու իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութն ուսումնասիրելուց հետո աշակերտները պատկերացում կկազմեն ակտիվ ընտրական իրավունքի, ակտիվ ընտրական իրավունքին ներկայացվող պահանջների, ակտիվ ընտրական իրավունքի սահմանափակումների մասին: Կտեղեկանան նաև արտասահմանում բնակվող անձանց ընտրական իրավունքի իրականացման, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողների, ձերբակալված կամ կալանավորված անձանց ակտիվ ընտրական իրավունքի իրականացման առանձնահատկությունների մասին:

Գնահատման չափորոշիչներ

1. Ակտիվ ընտրական իրավունքի բովանդակության ներկայացում
2. Ակտիվ ընտրական իրավունքին ներկայացվող պահանջների ներկայացում
3. Որոնք են ակտիվ ընտրական իրավունքին ներկայացվող սահմանափակումները
4.Ձերբակալված կամ կալանավորված անձանց ակտիվ ընտրական իրավունքի իրականացման առանձնահատկությունների ներկայացում

Խնդիրների նպատակն է ամրապնդել աշակերտների ձեռք բերած գիտելիքները ընտրական իրավունքի առանձնահատկությունների վերաբերյալ, և դրանք դարձնել կիրառական պրակտիկ օրինակների քննարկման ժամանակ:

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է ամրապնդել աշակերտների գիտելիքները ընտրությունների տեսակների հետ կապված ակտիվ ընտրական իրավունքի իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ: Պետք է ընդգծել, որ ձերբակալված կամ կալանավորված անձինք տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին չեն կարող մասնակցել: Այս սահմանափակումը, սակայն, չի գործում համապետական ընտրությունների անցկացման ժամանակ:

Խնդիր 2.

Այս խնդրի շրջանակներում պետք է անդրադառնալ ակտիվ ընտրական իրավունքի իրականացման սահմանադրական սահմանափակումներին: Աշակերտները կարող են առաջարկել նաև սեփական տարբերակները՝ կապված ընտրական իրավունքի սահմանափակման հետ և հիմնավորել դրանք:

Խնդիր 3.

Այս խնդրի նպատակն է ամրապնդել աշակերտների ստացած գիտելիքներն արտերկրում ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքի իրականացման սահմանափակումների վերաբերյալ:

Նյութի ներկայացում՝ 10 րոպե Քննարկում՝ 5 րոպե Խնդիրների քննարկում՝ 10 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե Ընդհանուր՝ 30 րոպե

9.4.1 Ընտրական ցուցակները

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս մասի նյութը յուրացնելու արդյունքում աշակերտները պատկերացում կկազմեն ընտրական ցուցակների կազմման առանձնահատկությունների, դրանք կազմող իրավասու մարմնի, ընտրական ցուցակների մատչելիության, դրանցում առկա անճշտությունների վերացման կարգի, դատարան դիմելու առանձնահատկությունների վերաբերյալ:

Գնահատման չափորոշիչները

1. Ինչ է ընտրողների ռեգիստրը, ովքեր են դրանում ընդգրկված և իրավասու որ մարմինն է այն կազմում
2. Ինչպես են կազմվում համայնքի ընտրողների ցուցակները
3. Բժշկական հաստատության ղեկավարը երբ և ում համար է կազմում ընտրողների ցուցակներ
4. Ովքեր են ընդգրկվում զորամասի ընտրողների ցուցակում
5. Երբ են փակցվում ընտրական տեղամասերում ընտրողների ցուցակները
6. Ինչպիսիք են ընտրական ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերացման ուղիները

Խնդիրների նպատակն է ամրապնդել աշակերտների ձեռք բերած գիտելիքները ընտրական ցուցակների կազմման կարգի, առանձնահատկությունների վերաբերյալ, և այդ գիտելիքները դարձնել ավելի կիրառական կոնկրետ օրինակների համատեքստում:

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է հստակեցնել այն հանգամանքը, որ ընտրողը իր նախաձեռնությամբ չի ընդգրկում ընտրողների ցուցակներում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պետք է ընդգծել, որ ոստիկանությունը պարտավոր է ըստ մարզերի և համայնքների կազմել և վարել Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը: Իսկ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Խնդիր 2.

Այս խնդրի նպատակն է բացահայտել այլ համայնքում հաշվառված, սակայն մեկ այլ համայնքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ համապետական ընտրություններին մասնակցելու առանձնահատկությունները: Պետք է ընդգծել, որ համապետական ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ լիազոր մարմնին /ոստիկանության համապատասխան տարածքային մարմնին/ ներկայացնում են դիմում ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակներից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողին տրամադրում է տեղեկանք՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից նրա տվյալները հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ:

Խնդիր 3.

Այս խնդրի նպատակն է ամրապնդել աշակերտների գիտելիքներն առ այն, թե ինչ կարգով են մասնակցում համապետական ընտրություններին պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները: Պետք է ընդգծել, որ համապետական ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները ծառայությունից ժամանակավոր արձակված լինելու դեպքում հանվում են զորամասի ընտրողների ցուցակից և իրենց մշտական բնակության վայրերում կարող են ընդգրկվել ընտրողների ցուցակում ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին հայտ ներկայացնելու դեպքում:

Համապետական ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային զինծառայողները, ինչպես նաև զորամասերի տեղակայման տարածքում հաշվառված պայմանագրային զինծառայողները և նույն տարածքում հաշվառված ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները, վարժական հավաքներ անցնող ընտրողներն ընդգրկվում են զորամասի ընտրողների ցուցակում:

Խնդիր 4.

Այս խնդրի շրջանակներում քննարկման ենթական են ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց ակտիվ ընտրական իրավունքի իրականացման առանձնահատկությունները: Պետք է ընդգծել, որ համապետական ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավարը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն, լիազոր մարմին է ներկայացնում ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակը՝ դրանում նշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը և հաշվառման վայրի հասցեն: Լիազոր մարմինը, ըստ ներկայացված ցուցակների, ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողներին հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից, կազմում է ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակ: Համապետական ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն

ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների համար քվեարկությունը կազմակերպվում է ստացիոնար բժշկական հաստատությունում՝ շրջիկ արկղի միջոցով: Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում քվեարկությունը կազմակերպում է այն հաշվարկով, որ ավարտվի մինչև ժամը 18.00-ն:

Խնդիր 5.

Այս խնդրի նպատակն է ամրապնդել աշակերտների ստացած գիտելիքներն ընտրողների մատչելիության վերաբերյալ: Պետք է ընդգծել, որ ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 40 օր առաջ փակցվում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի վայրում: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունները /այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող/ վերացնելու մասին դիմում ներկայացնելու ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման մարմնին :

Խնդիր 6.

Այս խնդրի նպատակն է ամրապնդել աշակերտների գիտելիքները ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերացման վերաբերյալ: Պետք է ընդգծել, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունները /այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող/ վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Վերջինս դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ, բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին: Եթե դիմողին չի բավարարում լիազոր մարմնի կատարած փոփոխությունները, ապա ընտրողների ցուցակներում անճշտությունների վերացման և ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով: Դատարանը ցուցակներում անճշտությունները վերացնելու վերաբերյալ վճիռը կայացնում է դիմումը ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում: Դատարանը ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վճիռը կայացնում է այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը:

Խնդիր 7.

Այս խնդրի շրջանակներում պետք է ընդգծել, որ ընտրական հանձնաժողովներն իրավունք չունեն սեփական նախաձեռնությամբ որևէ փոփոխություն՝ ճշտում կամ լրացում կատարելու ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում), բացառությամբ քվեարկության օրը ընտրական տեղամասում տառասխալների և տեխնիկական վրիպակների ուղղման:

Նյութի ներկայացում՝ 10 րոպե Քննարկում՝ 10 րոպե Խնդիրների քննարկում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 10 րոպե Ընդհանուր՝ 45 րոպե

9.4.2 Քվեարկությունը

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութը յուրացնելու արդյունքում աշակերտները պատկերացում կկազմեն քվեարկության անցկացման կարգի, ժամկետների, քվեարկության խցերի կահավորման, քվեարկությանը ընտրողների մասնակցության առանձնահատկությունների վերաբերյալ:

Գնահատման չափորոշիչները

1. Քվեարկության անցկացման կարգի ներկայացում
2. Քվեարկության խցերի կահավորման բնութագրում
3. Քվեարկությանը ընտրողների մասնակցության առանձնահատկությունների ներկայացում

Առաջադրված խնդիրների նպատակն է ամրապնդել աշակերտների գիտելիքները կիրառական օրինակներում:

Խնդիր 1.

Այս խնդրի շրջանակներում քննարկման ենթակա են քվեարկությանը ընտրողների անմիջական մասնակցության առանձնահատկությունները: Պետք է ընդգծել, որ ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ, լիազորված անձի միջոցով քվեարկությունն արգելվում է:

Խնդիր 2.

Այս խնդրի շրջանակներում պետք է ընդգծել, որ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:

Խնդիր 3.

Այս խնդրի նպատակն է ամրապնդել աշակերտների գիտելիքներն առ այն, որ եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց:

Խնդիր 4.

Այս խնդրի քննարկման ժամանակ պետք է ընդգծել, որ ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ:

Խմբային քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե Ընդհանուր՝ 30 րոպե

9.5 Ընտրվելու իրավունք

Ձեռք բերվելիք գիտելիքներն ու կարողությունները

Այս բաժնի նյութը յուրացնելու արդյունքում աշակերտները պատկերացում կկազմեն պասիվ կամ ընտրվելու իրավունքի բովանդակության, պասիվ ընտրական իրավունքին ներկայացվող պահանջների վերաբերյալ:

Գնահատման չափորոշիչները

1. Ընտրվելու իրավունքի բովանդակության ներկայացում
2. Պասիվ ընտրական իրավունքին ներկայացվող օրենսդրական պահանջների ներկայացում

Առաջադրված խնդիրների նպատակն է ամրապնդել աշակերտների ստացած տեսական գիտելիքները կիրառական օրինակներում:

Խնդիր 1.

Այս խնդրի նպատակն է ընդգծել պասիվ ընտրական իրավունքին ներկայացվող օրենսդրական պահանջները Հանրապետության Նախագահ առաջադրվելու պարագայում:

Խնդիր 2.

Այս խնդրում արծարծվում են պասիվ ընտրական իրավունքին ներկայացվող օրենսդրական պահանջները Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու առաջադրվելու պարագայում:

Խնդիր 3.

Այս խնդրի նպատակն է ընդգծել պասիվ ընտրական իրավունքին ներկայացվող օրենսդրական պահանջները համայնքի ղեկավար առաջադրվելու պարագայում:

Խմբային քննարկում՝ 10 րոպե Զեկուցում՝ 15 րոպե Ընդհանուր քննարկում՝ 5 րոպե **Ընդհանուր**՝ 30 րոպե